

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՈՇԱԿ

№ 11
NOVEMBRE
1928
PARIS (France)

«ՀՈՑ ՅԵՂԱՓՈԽԵԿԱՆ ԴԱՂՆԵԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

«Դրոշակ»-ի անցեալ համարում հրատարակեցինք Կոմկուսի Բազուի Կոմիտէի քարտուղար Լ. Միրզոյեանի մի ճառը Ազգբեմանում իշխող ազգային տրամադրութիւնների մասին, իսկ այս անգամ տալիս ենք Վրաստանի Կոմկուսի ընդհանուր քարտուղար Կախիանիի զեկուցման մէկ մասը՝ նւերած ազգային յարաբերութիւններին Վրաստանում: Ուշագրաւ երեւոյթներ են երկուսն էլ, և անհրաժեշտ է լուրջ նկատողութեան առնել: Նրանք գալիս են կոմունիստական բարձունքներից հաստատելու ա՛յն, որը վաղուց ի վեր մենք կրկնում ենք անընդհատ — որ վրացի և ազգբեմանի կոմունիստները տողորած են նեղ-ազգայնական զաղափարներով և միջազգայնութեան ծիրանիով պաճուճած իրաւազրկում, շահագործում ու ճնշում են կովկասեան միւս ժողովուրդներին:

Այն, ինչ որ Կախիանիներն ու Միրզոյեանները նկատել են այսօր, մենք ասել ենք վաղուց: Փաստերով և ապացոյցներով զինւած՝ մենք անընդհատ ցոյց ենք տալիս, որ ազգային փոխյարաբերութիւնները խորհրդային իշխանութեան տակ օր օրի վրա լարում ու բարդանում են, որ, այսպէս կոչւած, ազգային փոքրամասնութիւնները Ազգբեմանում ու Վրաստանում և առաջին հերթին հայկական զանգւածը ճնշւած է ծայր աստիճանի, անտեսապէս և իրաւապէս դրամ է անհաւասար վիճակի մէջ: Մինչ այսպատանի ազգային փոքրամասնութիւնները՝ թուրքերն ու մարկանները, հէնց հայ կոմունիստների պաշտօնական հաւաստիացումներով, անամենատ աւելի բարեկեցիկ և արտօնեակ պայմաններում են ապրում և աւելի շատ ու ընտիր հոյ ունեն, աւելի առատութեամբ պետական օժանդակութիւն են ստանում, Ազգբեմանի և Վրաստանի հայերը տրամադծօրէն հակառակ վիճակի մէջ են դրւած. հայ աշխատաւորը այնտեղ պետութեան աչքին խորթ զաւակ է, օտար տարր, երկրորդ կարգի զաղաքացի, որ

չառ աւելի պակաս արժէք է ներկայացնում, քան «տիրող ցեղը»՝ թուրքն ու վրացին: Հայը խորհրդային Ազգբեմանում ու Վրաստանում մի տեսակ պարիա է, կոմունիստական շովինիզմի զոհ:

Մեր սպանիչ մերկացումներին ու քննադատութիւններին հայ կոմունիստները չեն կարողանում աւելի լուրջ պատասխան տալ, քան փողոցային հայհոյանքը: Եւ լաւագոյն դէպքում, երբ այլեւս պատիտ սեղմւած, չեն կարող լռել, կրկնում են միայլաբ ու ոչ ոքին չ՛ամոզող յանգերգը, թէ՛ ճիշտ է, որ ազգային փոքրամասնութիւնները Հայաստանում առարկայ են յատուկ գուրգուրանքի, բայց սխալ է, որ Վրաստանում և Ազգբեմանում հայերը ճնշւած են: Ծիւտ չէ, որ ազգային անբաւականութիւններ ու հակամարտութիւններ կան Կովկասում. խորհրդային իշխանութիւնը վաղուց արմատապէս լուճել է ազգային հարցը: Ազգային խնդիր չկայ բանտարազիւղացիական հանրապետութեան մէջ:

Ազգային խնդիր չկայ, բայց ա՛նա գալիս են Ազգբեմանի ու Վրաստանի զեկուզարները և բառ առ բառ հաստատում մեր մերկացումները: Անողոք փաստերով և օրինակներով ցոյց են տալիս, որ ազգային փոխյարաբերութիւնները Կովկասում ոչնչով տարբեր չեն Կալիցիինեան դաժան օրերից: Նոյն կասկածն ու թշնամանքը, նոյն պայքարը, նոյն սուր բարխումները, միեւնոյն ջաղաքականութիւնը կառավարութեան: Թուրքը ատում է ռուսին ու հային, ռուսը ատում է թուրքին ու վրացուն, վրացին ատում է հային ու ռուսին: Հայն է միայն՝ անպաշտպան ու հարստահարւած, զոհ՝ ազգայնական այս թո՛հ ու բո՛հի մէջ: Հայ կոմունիստը սիրտ չի անում, վրացի ու թուրքը ընկերների առաջ ազգայնական չեղեւորութիւնը վախից, ճայն բարձրացնելու այդ անարդար կարգերի, այդ անհաւասարութեան դէմ: Եւ երբ բողոքող էլ պատահում է, նրան խոկոյն փակցնում են

«ազգայնական», «սպեցիֆիկ», «արոցկիստ» վաստանները ու քընտը նա չաաստանից դուրս:

Թէ ի՞նչ կարգեր են տրուում խորհրդային աշխարհում, ահանջ դէժք Կախիսիների ու Միրզոյեանների խօսքերին: Միրզոյեանը դառնօրէն դանդաւում է Ազրբէջանի «Ֆինստոլիոմատի բլիթում և Թապրասաներում եղած ազգային խանութի ղրութեան մասին», ուր «ազգային անտրմալ փոխարարերութիւններ կան... զանազան ազգութիւնների աշխատատեղերի միջեւ»: Ազրբէջանի պոլիտեխնիկումում, բլիթի բերու և ուսանողական կոմիտէ վերընտրելու ժամանակ, քաշտութիւնը կատարուած էր գրեթէ բացառապէս ազգային նշանի տակ: Որտեղ մեծամասնութիւնը թուրքեր էին, տապալում էին ուսուներին, որտեղ մեծամասնութիւնը ռուսներ էին, տապալում էին թուրքերին: Նոյն երեւոյթն է և պետաճամայարանում: Մինչև և իսկ քանՖակում, որտեղ մեծամասնութիւնը բանտրներ են, միևնոյն աշխատակութիւններն են նկատում — նախկան մասի ելոյթը, ռուսների ու թուրքերի միջև եղած չփոփոխելը, վերընտրութեան հողի վրա եղած ընդհարումները և այլն»: «Վերջէք թուրքական մի ջանի դպրոցներ, և կը տեսնէք, որ ազգայնական տրամադրութիւններ կան: Նոյն է և հայկական ու ռուսական դպրոցներում... Միևնոյն բանը մեծ չափերով նկատում է և պետական ապարատներում: Ազգայնական տրամադրութիւններ կան և կոմսոմոլական կազմակերպութիւններում»:

Եւ Ազկոմկուսի պարագլուխը բերում է մի շարք պերճախօս օրինակներ, որոնք ամենամոայլ գոյներով են պատկերացնում ազգային յարաբերութիւնները Ազրբէջանում:

Նոյն լեզուով, թէ է և աւելի դիւանապիտական արտայայտութիւններով, խօսում է և Վրաստանի Կոմկուսի ղեկավարը. ազգային յարաբերութիւնները լաւ չեն. վրացի կոմունիստները աչառութեամբ են վերաբերում դէպի ազգային փոքրամասնութիւնները, կողմնապահութիւն են անում, զրկում են հայերին, արխագներին, օսերին յօգուտ վրացիների. պետական գումարները բաշխում են վրացական դաւառներին, իսկ Ախալքալաքին, Արխաղային և միւս ինքնավար շրջաններին չեն տալիս կամ քիչ են տալիս: Վրացի կոմունիստները մի մասը դժգոհ է Անդրկովկասեան Դաշնակցութիւնից և պահանջում է, որ Վրաստանը կապի ուղղակի Մոսկուայի հետ:

Փաստեր չեն պակասում և Կախիսի ճառի մէջ, որոնք հաստատում են, որ Վրաստանում էլ ազգային կրքերը լարւած են ծայրաստիճանի, որ այնտեղ կոմունիստները ճանդիսանում են վրացի ազգայնականութեան ու մեծապետական ձգտումների գաղափարախօսն ու տոն տուողը: Որ Վրաստանում նկատուած է մեծապետական կոմունիստական մերձեցում և նոյն

իսկ համագործակցութիւն ազգային հողի վրա:

Ազրբէջանի ու Վրաստանի վարիչների արած մերկացումները այնքան են ուժեղ, որ նրանց առջև նսեմանում է հակառակորդների քննադատութիւնը: Կարիք կա՞յ նոր փաստերի, երբ իրենք իսկ իրենց բերնով խոտովանում են, որ ազգային յարաբերութիւնները չափազանց վատ վիճակի մէջ են, որ փոխադարձ զգուտըր ախօր ազգային համակցութեան սովորական ձեւն է Կովկասում:

Ի՞նչ է արւում, սակայն, այդ դրութիւնը եթէ ոչ վերացնելու, դէթ մեղմալցնելու համար: Ճառերից զատ՝ ոչինչ: Ընդհակառակը, ինչ որ արւում է, աւելի ևս խճողում ու սրում է ազգային թշնամանքը:

Եւ այլ կերպ չի էլ կարող լինել, ջանի որ խորհրդային իշխանութեան ազգային քաղաքականութիւնը Կովկասում ad absurdum՝ անհեթեթութեան հասցրած զարգացումն է Գալցիսեան քաղաքականութեան: Լենինի աչակերտները ամէն բան անում են՝ Կովկասը ազգային կրքերի խառնարան դարձնելու համար: Նրանց կառավարելակերպի հիմքն է «բաժանեալ, զի տրեսցես» սկզբունքը. բաժանում, բռնաբռնիկ սամաններ են ստեղծում, ժողովուրդներին հանում են մէկը միւսի դէմ և ընդհանուր անհամաձայնութեան ու հակամարտութեան միջոցով ապահովում են իրենց տիրապետութիւնը:

Այդ քաղաքականութեան ամենարտայայտիչ օրինակը սահմանների խնդիրն է: Արհեստական կերպով, առանց ժողովրդի կամքը հարցնելու և նոյնիսկ հակառակ ժողովուրդների ցանկութեան, ամբողջ երկրներ ու գաւառներ մտցրել են այս կամ այն պետութեան մէջ և դէնքի ուժով հարկադրում են, որ այդ անարդար վիճակը մնայ անխախտ: Մի Արխաղայի ատերութեամբ լեցած դէպի վրացական միահեծանութիւնը՝ անդադար պահանջում է ազատել իրեն Վրաստանի տիրապետութիւնից և միացնել ուղակի Ռուսաստանին, ինչպէս միացած են հարեւան լեռնական երկրները: Արխաղ ժողովրդի այդ միահամուռ փափազը խեղդում է դէնքի ուժով, և արխաղ կոմունիստներից շատերը, որպէս ազգայնականներ, քարտուած են իրենց հայրենիքից:

Նոյնը և Ախալքալաքի վերաբերմամբ: Քանի՞ ջանի անգամներ Ախալքալաքի հայ զելդապետութեան դէմ: Մարդկային ո՛չ մի օրէնք, կոմունիստական և ո՛չ մի սկզբունք չի արդարացնում այդ տիրապետութիւնը, բայց և այնպէս Վրաստանը նստած է Ախալքալաքում և զբաղւած է հայ զելդապետներին վրացացնելու գերազանցապէս «լենինեան» աշխատանքով:

Ի՞նչ կարեալը: Կարելի՞ է գտնել Լենինի վարդապետութեան մէջ որևէ կէտ, որ ար-

դարացնէր Ղարաբաղի բռնազրաւումը Ազրբեջանի կողմից: Ղարաբաղը ստրկացած ո՛չ միայն ընդդէմ իր ժողովրդի կամքի, այլ և հակառակ բոլշեւիկեան դաւանանքի: Մերկ բռնութիւնն ու կամայականութիւնն են պահում այդ շրջանը ազրբեջանեան լծի տակ:

Միեւնոյն գոեհիկ բռնութեան արդիւնք է և Հայաստանի սրտում գտնուող Շարուր-Նախիջևանի հպատակութիւնը Ազրբեջանին: Հայաստանը ծւէն-ծւէն, յօշոտած խորհրդային դանակով՝ յանձնւած է ի կերակուր վրացի և թուրք ազգայնական և մեծասպետական կոմունիստներին: Ինչի՞ ապացոյց է այդ: Միայն և միմիայն մայրաքաղաքին չուզէն սրամագրութեան վրացի ու ազրբեջանցի վարիչներին, որոնք, օգտուելով գէպքերի նպաստաւոր դասաւորութիւնից՝ ոգի ի բախն աշխատում են ապահովել իրենց երկրների համար ազգային առաւելագոյն շահեր՝ կանգ չառնելով նոյնիսկ իմպերիալիստական գիշատիչ ծրագիրների առջև:

Միւս կողմից այդ ապացոյց է Հայաստանի բոլշեւիկ ղեկավարների անշուռն տգիտութեան, անասման անճարակութեան և անբարեխրդճութեան իրենց երկրի հանդէպ: Նրանք ստրկամտօրէն հանդուրժում են մի դրութիւն, որի դէմ քարերն անդամ բողբոք են բարձրացնում: Մինչև այժմ չգտնւեց մէկ հատիկ պատասխանատու Հայ կոմունիստ, որ համարձակութիւնն ունենար ձայն բարձրացնելու ազրբեջանցի ու վրացի իր դաւանակիցների նենգամիտ ու բախտախնդիր արարքների դէմ, մէկ հատիկ Հայ կոմունիստ, որ գտնէ պղատնական կերպով ասէր, թէ Ախալքալաքն ու Ղարաբաղը անարդար ձեւով են բռնազրաււած և պէտք է վերադարձնեն Հայաստանին, թէ՛ Նախիջևանում ստեղծւած անբնական ու անհեթեթ դրութիւնը պէտք է վերադառնա: Չգտնւեց մէկ հատիկ Հայ կոմունիստ, որ ընդզէջէր

խորհրդային Ազրբեջանում ու Վրաստանում տիրող ազգային անհասարակութեան ու հակահայ քրամազրուութիւնների դէմ:

Բայց պէտք է լինել արդար. Հայ կոմունիստից սպասել նման բան՝ նշանակում է չհասկանալ նրա առանձնատարուկ բնոյթը: Վրացի և թուրք կոմունիստները, ընդհանուր առմամբ, զուտ կոմունիստական յատկութիւններից զատ ունեն և մէկ անվիճելի առաքինութիւն. նրանք առաջ վրացի են ու թուրք և ապա կոմունիստ: Հայ կոմունիստ միայն կոմունիստ է՝ զտարիւն, ուղղափառ ու դաւանամուլ, որի համար զուտ հայկական խնդիրներով զբաղելը դաւաճանութիւն է և ամօթ: Վրացի կոմունիստը պայքարում է հակառակորդ մենշեւիկների դէմ՝ Չազէսներով ու Ռիոնգէսներով, աշխատում է, ըստ կարելւոյն, շատ դրամ ու նիւթեր պոկել Մոսկուայից, Վրաստանում կատարել նստուկել շինարար ձեռնարկներ և դրանով վտակել վրացի ժողովրդի համակրանքը, ամբացնել իր իշխանութիւնը: Հայ կոմունիստի պայքարի միակ միջոցը բանա՛ն է ու աքտորը, իշխանութեան միակ նեցուկը՝ չէկան ու ոռուսական սխիւններն են: Վրացի կոմունիստը ձգտում է դառնալ վրաց ազգային մարմնի անբաժան մասնիկը, Հայ կոմունիստը օտար մակարոյժ է Հայ ազգային մարմնի վրա: Եւ հասկանալի է, որ Հայ ժողովուրդը այլ ևս ոչինչ չի սպասում Հայ կոմունիստից և ատում է նրան անասման՝ անհամբեր սպասելով այն օրւան, երբ վերջ պիտի գտնէ Հայ կոմունիստների բռնադատեալ, ակերիչ տիրապետութիւնը:

Սակայն, մենք չեզուցեցինք բուն նիւթից: Կախիսիներին ու Միլոզոյեանների մերկացումներն այլևս տեղ չեն թողնում կասկածի. Կովկասը խառնարան է ազգային կրքերի և թշնամութեան: Բոլշեւիկների ազգային քաղաքականութիւնը դուրս եկաւ անանկ:

Թ Ի Ի Ր Ք Ի Ա Յ Ի Մ Ա Ս Ի Ն

Վերջերս մեր մամուլում բաւական կենդանի հետաքրքրութիւն է ցոյց տրուում դէպի Քիւրքիան և Քիւրքիայի հետ կապած խնդիրները: Ճիշտ է, այդ հետաքրքրութիւնը երբեք էլ չի պակասել Հայ հասարակութեան մէջ, բայց մամուլը երբեմն սուր ձեւով է դնում հարցը, երբեմն առաջնութիւնը տալիս է ուրիշ նիւթերին:

Բնական է, որ Քիւրքիան չի կարող դուրս մնալ Հայ քաղաքական տեսողութեան սահմաններից: Հայ ժողովրդի կեանքն ու Հայաստանի ապագան այնքան սերտ կապերով են կապւած նրա հետ, որ ամէն մի երևոյթ կամ շարժում, որ տեղի է ունենում այդ երկրում, անմիջապէս արձագանքը գտնում է նախ և

առաջ, մեր մէջ:

Պէտք է խոստովանել, սակայն, որ Հայ քաղաքական միտքը վերջերս աւելի շուտ պատահական փաստերը արձանագրողի դերում է եղել, քան զնահատողի ու ըմբռնողի: Ուստի և ամէն անգամ, որ մէջտեղ է գրւել որոշ տեսակէտ Քիւրքիայի դերի կ' զարգացման ուղիների մասին, իսկոյն՝ առաջադրւել են և՛ հակա-տեսակէտներ, ու հարցը վէճի շքանակից այն կողմը չի անցել: Այսօր էլ Քիւրքիայով զբաղուող գործիչներն ու թերթերը չեն կարողանում որոշ, ընդհանրական, անսուսրկելի հակցեակէտ մշակել Քիւրքիայի վերաբերմամբ և վիճում են — յաճախ շատ բուռն — նոյնիսկ ամենահիմնական հարցի մասին՝ ամբանում

և ուժեղանում է արեօք Թիւրքիան, զեմալական բարեկեցութեանը իրական ու զբաղանքն երևոյթ են, թէ՛ քայքայումը շարունակուում է և բարեկեցութեանը կոչածը սուտ ու պատիւր բաներ են:

«Պրոչակ»-ը այս բանավէճին չի մասնակցում, բայց, ի հարկէ, չի կարող անտեսել, որ հարցի բազմակողմանի զննութիւնն ու ծախսութիւնը անօգուտ աշխատանք չէ: Ընդհակառակը, շատ լաւ է, որ մեր մամուլը լուրջ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի Թիւրքական խնդիրը. հարկաւոր է միայն, որ հարցի զննութիւնը լինի առարկայական և իրական փաստերով ու սեւաններով հիմնաւորւած:

Որքան և կարծիքներ Թիւրքիայի մասին տարբեր լինեն, այնուամենայնիւ, կան մի շարք ընդհանուր դնոյթ կըրող երևոյթներ ու դրութիւններ, որոնց նկատմամբ հազիւ թէ խորունկ ստարակարծութիւններ գոյութիւն ունենան: Պրանց վրա է, որ կուզէինք կանգ առնել այս յօդածի մէջ:

Ամենից առաջ, մի բան բոլորովին անկասկած է և ամենքն էլ կընդունեն, որ Թիւրքիան հետզհետեւ արտասահմանի համար սկսում է դառնալ անձանօթ երկիր՝ terre incognita: Հայ հասարակութեան և — ինչո՞ւ չէ — նաև մամուլի մեծ մասի տեղեկութիւններն ու դատողութիւնները Թիւրքիայի մասին վերաբերում են այն շրջանին, երբ դեռ նա մատչելի էր արտաքին տեսողութեան: Քեմալական իշխանութիւնը, մանաւանդ հանրապետութեան հռչակումից և Պայք կուսակցութեան միահեծանութիւնը հաստատելուց յետոյ, Թիւրքիայի շուրջը բարձրացրեց անթափանցելի ամբարտաւանքի, փակեց մամուլի բերանը, երկիրը դարձրեց անմատչելի օտար ճամբորդներին ու թղթապահներին համար: Այսպիսի պայմաններում Թիւրքիայի մասին փաստական տեղեկութիւններ ստանալը դարձել է գրեթէ անկարելի:

Ո՛րտեղից էլ քաղուճ հայ մամուլը Թիւրքական լուրերը: Կամ Պոլսի թերթերից, որոնք ակնյայտի կերպով գրկւում են ճշմարտութիւնը արձանագրելու հնարաւորութիւնից ու դրում են վերից տրւած հրամանով և իրենց անբովանդակութեամբ յիշեցնում են Արդուլ-համիտեան նողկալի օրերը: Կամ Լեւոպական թղթակիցներից, որոնք իրականութիւնը տեսնում են այնպէս, ինչպէս ցանկալի է իրենց ամասնաբաժնի վճարող թերթերի տէրերին: Մի Ժանտիդոն «Թան»-ում Թիւրքիան ներկայացնում է մի կերպ, մի Պէրնո՞ բոլորովին այլ կերպ, «Թայք»-ը մի տեսակ տեղեկութիւններ է հաղորդում, «Ե՛րէյի Տելեգրաֆ»-ը՝ ուրիշ տեսակ: Եւ, ի հարկէ, ոչ Պոլսի, ոչ էլ արտասահմանի թերթերը չեն կարող համարել վստահելի աղբիւր, որոնց հիման վրա կարելի լինէր ճշգրիտ գաղափար կազմել Թիւրքիայի ներքին կացութեան մասին: Եւ, հետևաբար, նրանք, ովքեր դէպից-դէպին քաղած կցկուտը լուրերով փորձում են այս կամ այն կերպարկարութիւնը հանել և վճիռներ արձակել Թիւրքիայի ճակատագրի մասին, շատ հեղուկութեամբ ընկնում են սխալի մէջ և, յաճախ, իրենց ցանկացածը ներկայացնում են իբրև առարկայական իրողութիւն:

Այլ էր դրութիւնը 4-5 տարի առաջ, Լըր տակաւին Պոլսում գոյութիւն ունէր ազատ մամուլ, որը օրը օրին արձանագրում էր կեանքի երևոյթները: Թիւրք թեր-

թերի թղթակիցները պտտում էին Անատոլիայում ու հայկական նահանգներում և հրատարակութեան տալիս իրենց տեսանքն ու ապրածը: Այդ նիւթերի հիման վրա կարելի էր լինում որոշ կարծիք ստեղծել և ընդ-նշմարել Թիւրքիայի զարգացման ուղիները: Այսօր այդպիսի կարեւորութեան նշոյն իսկ գոյութիւն չունի: Թիւրքիան, ինչպէս ասացինք, ամենքի համար անձանօթ աշխարհ է, նրա ներքին վիճակի մասին արտասահմանը ոչինչ չգիտէ: Ահա մի կէտ, որի շուրջ վէճ ու բանակուր կարող չէ լինել:

Վէճ չվերցնող և, կարծում ենք, որլորի համար ընդունելի է և մի ուրիշ դրութիւն — այն, որ առանց հիմքի արձակուող վճիռներն ու դատավճիռները չեն կարող համարել հեղինակաւոր ու հանրապարտողիք: Եւ Թիւրքիայով զբաղւող այն հեղինակները, որոնք իրատեսութեան դասեր են տալիս, մեղադրում են ուրիշներին ուսմանտիպի մէջ և իրենց մասին կարծում են, թէ խիստ իրապաշտ ու զբաղան մտքեր են արտայայտում, նոյնպէս խարխափում են ուսմանտիպի ոլորտներում՝ շատ հեռու իրականութիւնից, որը անձանօթ է իրենց ևս: Որպէսզի կարելի լինի դուրս գալ նման դրութիւնից, որևէ դատավճիռ հանելուց առաջ անհրաժեշտ է գտնել միջոց՝ իրապէկ լինելու Թիւրքիայի իսկական վիճակին, զեմալական իշխանութեան տակ զարգացող կարգերի ու բարքերի իսկական ընդթիւն և արժէքին...

Հակառակ Թիւրքիայի մասին դրւած ու զրոյց անհաշիւ յօդածներին ու հաղորդագրութիւններին, գոյութիւն չունի ցարդ նոր տեսլիներով հիմնաւորւած և ոչ մի աշխատութիւն, որից կարելի լինէր ստոյգ գաղափար կազմել Թիւրքիայի և Թիւրքութեան արդի կացութեան ու ձգտումների նկատմամբ: Անգամ Զարևանդի ծանօթ դիրքը, որ ընդհանուր համակարգը գտւած մեր հասարակութեան մէջ, չի գոհացնում այս պահանջին: Նա ևս օգտուում է, համեմատաբար, հին աղբիւրներից: Իսկ ուր չկայ նիւթ, բանավարութիւններն ու եղբակացութիւնները միշտ էլ ենթակայ են կաղալու:

Թիւրքիայի ծանօթութիւն — ահա մի պահանջ, որի շուրջ նոյնպէս վէճ ու բանակուր կարող չէ լինել: Թշնամուս խաթիւնը համար հարկաւոր է նրան լաւ ճանաչել, գիտենալ նրա ուժեղ ու սկզբ կողմերը:

Անվիճելի է նոյնպէս և այն իրողութիւնը, որ զեմալական իշխանութեան մասին արևող ենթադրութիւններն ու նախատեսութիւնները, իրենց գլխաւոր մասով չճշտեցին: Ընդհանուր համոզում էր, որ Քեմալի իրկատատրութիւնը երկար կեանք չի ունենայ, բայց ահա Թ տարի է գոյութիւն ունի և դեռ փլուզումի նշաններ չեն երևում: Ճիշտ է, կարծեցիկներ սկսում են տարբերել, երբ խօսք է լինում զեմալիզմի երկար կեանք ունենալու պատճառների մասին, բայց դրանից հս փաստը չի՞՞ փոխուում: Իսկ փաստը այն է, որ զեմալական իշխանութիւնն է արդէ Թիւրքիայի ղեկավարն ու բախտի տնօրինողը: Այս պարագայ պէտք է հարկաւորէ մեզ աւելի ուշադիր լինելու դէպի այդ իշխանութիւնը, հետեւելու նրա շարժումներին, ուսումնասիրելու նրա գաղափարախօսութիւնը, եթէ ունի, նրա գործնական զարգացկանութիւնը:

Այս վերջին տեսակէտից ևս ըմբռնումներ չնույնութիւն չկայ. ոմանք ընդունում են, որ համախառնական ու համաթիւրքական գաղափարների կողմից քեմալականները հիմնովին տարբերում են հին թիւրքերից ու իթթիհատականներից. ուրիշներն, ընդհանրապէս, ո՛չ մի տարբերութիւն չեն տեսնում քեմալականների և իթթիհատականների միջև: Մարդիկ էլ կան, որոնք ասում են, որ թիւրքը թիւրք է ինչ գլխաւրի ու պիտակի տակ և գտնւելու լինի: Այս կարծիքների թույլ կողմը այն է, որ փաստեր չեն բերում ապացուցանելու համար. ամենքն էլ մեկնում են ի յառաջագունէ իրենց ունեցած հասկացողութիւններից և չեն կարողանում — ու նրաթ էլ չունեն՝ հիմնաւորելու իրենց արածը, այն ինչ այս հիմնաւորումն է կարելու և ոչ թէ ընդհանուր բնոյթ կրող վերացական յայտարարութիւններ:

Ի հարկէ, թիւրքը թիւրք է, այսինքն՝ դէպի հայերը տածած գրացումների տեսակէտից դժուար թէ մեծ տարբերութիւն լինի թիւրք ղեկավարների մէջ, բայց քաղաքական հարցերը մարդկանց գրացումներով ու ենթակայական կամեցողութիւններով չեն լուծւում, այլ, նախ և առաջ, արտաքին, առարկայական պայմաններով: Իսկ արտաքին պայմանների տեսակէտից քեմալական թիւրքեան կարող է մէկ արժէք ներկայացնել, իթթիհատական կամ համախառնական թիւրքեան՝ մէկ ուրիշ: Այստեղից պարզ է, որ ինչպէս ընդհանուր քաղաքականութեան մէջ, այնպէս և թիւրքեայի ու թիւրքերի նկատմամբ չի կարելի ղեկավարել նախապաշարումներով կամ առաջուց ձևակերպւած կաղապարներով: Քաղաքական գործչի ու կազմակերպութեան միակ շահմանը պէտք է լինի իրականութեան դիտակցութիւնը:

Կայ և մի այլ հարց, որ յուզում-խռովում է շատերի միտքը. ամբանում ու զարգանում է արդեօք թիւրքեան, թէ՛ շարունակում է կազմալուծւել, քեմալական բարենորոգումները նպաստո՞ւմ են թիւրքեայի վերածնութեան, թէ՛ խարուսիկ երևոյթներ են: Այս մասին էլ կարծիքները տարբերում են: Ոմանց համար Քեմալի մտցրած բարենորոգումները դրական արժէք են և այդ բարենորոգումների շնորհիւ թիւրքեան անպայման վերածննտւում ու յառաջադիմում է: Ուրիշների կարծիքով բոնութեամբ պարտադրւած բարենորոգումները ո՛չ մի արժէք չեն ներկայացնում և զատապարտւած են անխուսափելի անակումութեան, Քեմալի քայլերն աւելի են արագացնում թիւրքեայի քայքայման ընթացքը:

Այս տրամազօքին ներհակ համոզումների առթիւ էլ պէտք է ասել, ինչ որ ասւեց վերը, որ նրանք ևս կրում են ընդհանուր, քնդանցական դատողութիւններ ընդթի: Համոզեցուցիչ փաստ չի բերում ոչ մէկ դրութիւնը նպաստելու համար, ոչ էլ միւսը: Եւ, հետևաբար, թողնւում է, որ ընթերցողը հաւատայ մէկին կամ միւսին: Իսկ հաւատը, ինչպէս յայտնի է, կրօնական տարր է, բայց ո՛չ երբեք քաղաքական:

Իրողութիւն է, սակայն — Քեմալի բարենորոգումների շնորհիւ է այդ, թէ ուրիշ պատճառ, ներկայ դէպքում ողջ մէկ է — որ այսօր թիւրքեան ազգովին և պետականօրէն աւելի կայուն է երևում, բան 4-5 տարի առաջ: Այն ժամանակ թիւրքեայում ի զօրու

էին միայն քայքայիչ ազդակները, այժմ աչքի են ընկնում և վերաշինութեան ու ստեղծագործութեան գործօճներ: Անուրանալի փաստ է, որ թիւրք ազգը աւազին ճիգ է գործ դնում՝ կասեցնելու համար երկրի քայքայումը և շինելու ու ամրացնելու պետութիւնն ու ժողովրդի անտեսութիւնը: Օրինակ, Հնչյո հայրըրազդութեան միջնորդի կառուցումը, գիւղատնտեսութիւնը բարձրացնելու ճիգերը, ազգային արգիւնաբերութեան և աւետարի ապարկեցում կատարւած աշխատանքները, դրամական արժէքների կայուն վերահսկող — սրանք բոլորը նշաններ են, որ թիւրքեայում գործում են ո՛չ միայն կազմալուծող, այլ և ստեղծագործող ուժերը: Չորս տարի առաջ նման երևոյթ չէր նշմարւում, այսօր՝ կայ:

Թէ ո՞ր կողմն է աւելի դերակշռող՝ քայքայողը, թէ՛ ստեղծագործողը՝ դժուար է, անհնար է ասել: Չորս տարի առաջ հարցի պատասխանը ունէինք, այսօր կը դժարանանք պատասխանել: Բաւարար նիւթ չկայ մէջ տեղը: Եւ, հետևաբար, պնդելու համար, թէ՛ քայքայում է թիւրքեան, թէ՛ վերաշինում, բւական չեն ընդհանուր զատողութիւնները կամ համեմատութիւնները նախկին վիճակների հետ, այլ անհրաժեշտ է նոր նիւթ: Քանի այդ նիւթը քայքայւում է, վէճը թիւրքեայի քայքայման կամ վերածնութեան մասին կը լինի պարսպ խօսք:

Նիւթը պակաս է և քեմալական բարենորոգումների բնոյթն ու արժէքը բնորոշելու համար, բայց մի պարագայ թուում է թէ այստեղ էլ անվիճելի է — այն, որ թիւրքեան անցնում է ազգային յեղափոխութեան մի շրջան, որը չի կարող որոշ կնիք չէրել այդ երկրի ներկայի և ապագայի վրա:

Կարող է քեմալապետութիւնը շատ շուտով տապալւել, թիւրք ազգային յեղափոխութեան այսօրւայ արտայայտիչները կարող են Ֆիդայապէտ ոչնչանալ, բայց նրանց կատարած գործերից շատերը կը մնան իրենց պտուղներով: Անգամ եթէ խալիֆան նստի վաղը սուլթանների գահը, դժուար է երևակայել, որ, օրինակի համար, թիւրք կիրէ նորից երեսին ձգէ ծածկոցը: Հէնց միայն կնոջ ազատագրութիւնը աւազին պատմական երևոյթ է թիւրք ժողովրդի կեանքում: Ի՞նչ լատինական տառերը, ի՞նչ շարիաթի ջնջումը, ի՞նչ աւատապետութեան թուլացումը, ի՞նչ քաղաքականութեան արեւըրը, ի՞նչ երկրորդ քառասունը պետութիւնից — անկարելի բան է, որ սրանք որևէ հետք չթողնեն թիւրքեայի կեանքում: Վաղը ինչ էլ խառնութիւն էլ գալու լինի, նոյնիսկ ամենախեղճի մական իշխանութիւնը, չի կարող չեղեալ յայտարարել առաջադրած, որոշ չափով նաև գործադրւած բարենորոգումների մէկ մասը:

Մեզ թուում է, որ վէճի առարկայ չի կարող լինել ի՛ր բարենորոգչական շարժումների քայլերը. թիւրքեայում կատարւածը ըստ ամենայնի ազգային-քաղաքական մի յեղափոխութիւն է: Տեղի է ունենում միմեանց հետ շարախուած, մէկը միւսով պայմանաւորող երկու երևոյթը: Նախ՝ մինչև վերջին տասնամեակը օսմանցիկութեան ու թիւրքութեան գաղափարների միջև տասնուող թիւրք ժողովուրդը գտել է իր ազգային դիմագիծը: Հայերին ու յոյներին երկրից ջեղուց կամ բնաջնջելուց յետոյ թիւրքը մնացել է ինքը իրեն և ձերբազատւած նախկին կայսերա վիճակից՝ մշակում է

իր ազգային գիտակցութիւնը, թիւրք ազգայնական գաղափարաբառութիւնը:

Հետաքրքրական է, որ նոյն երեւոյթը այսօր նշմարում է և ուսանելի մօտ, որոնց մէջ առաջ նոյնպէս թոյլ էր ազգային՝ ուսուցիչական գիտակցութիւնը: Նախկին Ռուսաստանում բոլոր ժողովուրդները ունէին սեփական ազգային դէմք, ճշտումներ, ուսուցիչական գործի էր, կամ շատ թոյլ կերպով էր ստորում ազգային գաղափարներով: Բողոքական յեղաշրջումից յետոյ, Ռուսաստանի ազգերը, արտակարգ սրութեամբ, երևան բերին կենտրոնախոյս, անհատական հակումներ, իսկ շատերը և շեշտաւած հակառուս տրամադրութիւն: Այս երեւոյթի ազդեցութեան տակ ուսանելի մէջ և ուսեղացաւ և հիւանդագին ձևեր է ստանում ազգային զգացումը: Սորճրդային իշխանութեան անկումից յետոյ ուսուց, անկասկած, կը ներկայանայ իբրև շեշտաւած ազգային դիմագիծ ու քաղաքականութիւն ունեցող մի ժողովուրդ — այն, որ թիւրքերից առգէն կատարւած իրողութիւն է:

Ազգային ինքնորոշման և ինքնամփոփման այս փաստը որոշում է և թիւրքերի քաղաքական հեռանկարները: Համախառնութիւնը, որ Օսմանեան թիւրքերի ղեկավար սկզբունքն էր, թիւրքերի համար այլևս մեռած պէտք է համարել: Նրա տեղը բռնել է համաթիւրքութիւնը. կրօնի գաղափարին յաջորդել է ազգային գաղափարը: Եւ ինչ էլ որ լինի Գեմալի անձնական համոզումն ու ճակատագիրը, թիւրքերի անշեղ կերթայ համաթիւրքութեան ճանապարհով. Ազգային ու թիւրքաստան — Անգորայի համար դատարկ հնչելներ չեն: Եւ հակահայի է, որ Գեմալը հերոսական դէմք է ո՛չ միայն Անգորայում, այլ և բողոքական Բազում ու Թաշքենտում:

Թիւրքական յեղափոխութիւնը և բուրժուական է միտածամանակ: Սուլթանական ու շէրաֆիէ խաւերի տեղ, որոնք տէն ու տիրականն էին թիւրքերի, պետական իշխանութեան ղեկին իր ձեռքն է առել թիւրք նորանունը բուրժուային: Գեմալի և իր գործակիցների ամբողջ շնչը Հէնց սկզբից ուղղւած է թիւրք արհեստագործներ, առևտրականներ ու արդիւնաբերողներ ստեղծելու կողմը: Տնտեսական համազումարը իզմիրում, շէքեար գոյերի բաժանումը իր հաստատութիւններն, ելեկտրական ու առևտրական բաշտման ռուսանձնաշնորհումները թիւրքերին, օտար ձեռնարկների ու դրամագլուխների արժէքազրկումը, ելեմտական, հարկային ու մաքսային քաղաքականութիւնը — բոլոր նպատակը թիւրք ազգային անտեսութեան ստեղծումն է, թիւրք բուրժուային զարգացումը, նրա գերիշխանութեան ամրապնդումը: Եւ չի կարելի սասել, որ թափած ճիգերը անցել են բոլորովին ապարդիւն: Թիւրք ազգայնական բուրժուային գոյութիւնն անվիճելի փաստ է:

Ճիշտ է, ազգային անտեսութիւնը թիւրքերիցում դեռ շատ է դիրարբեկ և բուրժուային էլ, աւելի շուտ, ապրում է նախնական կուտակման, դիշտախէ դրամատիրութեան շրջանը, բայց տարէց տարի նրա մէջ էլ կատարւում է որոշ փոփոխութիւն. թիւրքը սկսում է վարժել ու կատարելագործել արհեստներին, առևտրին և, առհասարակ, անտեսական գործանութեանց ա-

պարէզում: Եւ այս պարագան, ի հարկէ, կարևոր նաճում է սիրող իշխանութեան համար. պետութիւնից նպաստաւորւած ու հովանաւորւած, իր անտեսական բարօրութեամբ նրան պարտական բուրժուա դասակարգը կը լինի լաւագոյն յենարանը կառավարութեան համար:

Միև կողմից, սակայն, բուրժուային առանձնաշնորհեալ դիրքը չի կարող չթողնուցնել կառավարութիւնը յայտ հասարակութեան միտ խաւերի: Բուրժուային միահեծանութիւնը, վաղ թէ ուշ, ծնունդ կը տայ դժգոհութեան հազարբժուող խաւերի կողմից: Եւ կը լինի այն, ինչ որ աշխարհի օրէնքն է — Դատակարգային հակամարտութիւնների սրում և հասարակական տարրեր շերտերի ու շահերի բախում, եթէ, հարկաւ, շարաթը աւելի շուտ չգայ, քան ուրբաթը...

Մենք առինք արդէ թիւրքերի ներքին կենցեց այն երեւոյթները, որոնք, մեր համոզումով, ընդհանրապէս, վէճ չեն վերցնում կամ քիչ են վիճելի: Այդ երեւոյթները ցոյց են տալիս որ թիւրքերն ո՛չ միայն շարունակում է ապրել, այլ և երևան է բերում կենտրոնախոյս անձնական նշաններ: «Հիւանդ մարդը» չի ուզում մեռնել, հակառակ որ այնքան շատ են նրա մահը ցանկացողները...

Աւելին դեռ: Միջազգային հանգամանքներն էլ դասաւորում են նրա համար նպաստաւոր կերպով: Երբեք թիւրքերի զուլիս այնքան ապահով չի եղել արտաքին վտանգներից, որքան այսօր: Մեծագոյն ապահովութիւնը թիւրքերի ամբողջութեան՝ Իտալիան, չնորհիւ անգլիական դիւանագիտութեան թափած շահերի, այլևս դաշնակից է թիւրքերն և առնուազն ՚ տարով երաշխաւորում է նրա անդորրութիւնը: Բոլոր հաշիւները՝ կապւած թիւրք-իտալական բախումի հետ՝ յօշ ցնդեցին: Մերձաւոր Արևելքի խաղաղութեան վտանգը համարող Իտալիան այսօր դարձել է նոյն Արևելքի խաղաղութեան ապահովութեան ազդակ՝ ձգտելով, ինչպէս երբեմն կայսերական Գերմանիան, առանց պատերազմի թափանցել Մերձաւոր Արևելքի խորքերը:

Անգորային խաղաղութեան ձեռք է մեկնում և Աթէնքից: Մեծ Յունաստանի երկրի շատագուր վենիցիական է յոյն-թիւրքական հարաբերական կարգաբաժանումը: Անողոր իրականութիւնը հարկաւորում է նրան թաղցնել իր ներքին տենչերը և խաղաղութեան ձիթնիկն բարձր բռնած՝ ձեռք պարզել թշնամուն: Անկասկած, շարաթների կամ ամիսների ինչիլի է թիւրք-յունական համաձայնութեան կնքումը, որով Յունաստանն էլ սնվիտա կը դառնայ թիւրքերի համար:

Իտալիայի և Յունաստանի թիւրքական քաղաքականութիւնը մեծապէս պայմանաւորում է անգլիական քաղաքականութեամբ Մերձաւոր Արևելքում: Իսկ Անգլիայի քաղաքականութեան անկիւնաքարն է՝ խաղաղութիւն բոլոր ծովերի և բոլոր ցամաքների վրա՝ մարտել կարենալու համար պատերազմից առանց հարուստ աւարը: Թիւրքերն Անգլիայի ձեռքին խաղաղութեան գործծններից մէկն է: Միև գործծնն ի բաղկանան ուժերի համաձայնութիւնը: Երբորը գոր-

ծօն, թերևս, կարող է լինել Ռուսաստանը՝ խորհրդային կամ ոչ :

Անդրկական շահերի համար Թիւրքիան անհրաժեշտ է երբևէ նկատումներով. մէկ, իբրև ասնձ Ասիայի իսլամ ժողովուրդների բերնին՝ երկրորդ, որպէս արգելիչ ուստական էջերի դէպի հարաւ, ու, թերևս, նաև իբրև թթիմոր կողման ու Անդրկասպեան երկրները խոռովելու համար: Ռուսաստանը հարկւար է նոյնպէս, իբրև աղբակ, իսլամական աշխարհի խաղաղութեան: Եւ գարմանալի չի լինի, եթէ վաղը նոյն Բոլղոնիքը, որ այնպէս շատաչով խղից յարաբերութիւնները բուլղերիկների հետ, նորից երեսը դարձնի դէպի Մոսկու: Այդ կը լինի և մի յաջող խաղ աշխատաւորականների հարածելու նպատակով խորհրդարանական նոր ընարութիւնների նախօրեակին:

Թիւրքիայի համար ևս անզլիական բարեկամութիւնը հետզհետէ սկսում է աւելի և աւելի դառնալ անհրաժեշտ՝ թէ քաղաքական և թէ, մանաւանդ, տնտեսական տեսակէտներով: Այս անհրաժեշտութիւնը սուր կերպով զգացւում է Անգորայում, ուր մարդիկ ակնյայտի կերպով տրամադրւում են թեքելու դէպի

արևմուտք առանց, ի հարկէ, խղիւր բարեկամական կապերը Մոսկույի հետ: Ռուս-թիւրքական բարեկամութիւնը հիմք է Թիւրքիայի հիւսիսային և արևելեան սահմանների պաշտպանութեան, ինչպէս և կարևոր դէնք արևմուտքի հանդէպ: Այդ հիմքը, հաւանաբար, պահւի անխախտ, բայց և արդէք չի լինի, որ արևմուտքում էլ հիմքեր ստեղծեն:

Այս իրողութիւններն ու խորհրդածութիւնները չեն կարող չհամոզել, որ Թիւրքիան իր շրջապատով պատերազմի գործօն չէ այս պահուս և որ ցնորական լուստեսութիւն կը լինի քաղաքական յոյսեր կապել դիւնեած բախումների հետ: Ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս և Մերձարևոյ Արևելքում իշխող խաղաղութեան մտայնութիւնն է: Եւ այդ խաղաղութիւնից, առաջին հերթին, թիւրքն ու Թիւրքիան է շահուողը: Այս բանը չտեսնել նշանակում է ոչինչ չտեսնել: Այս պարտադան պէտք է քաջ գիտակցենք ամենքս և արթուն աչքով նայենք իրականութեան: Որովհետև երբ ուժեղանում է մեր թշնամին, նշանակում է՝ թուլանում ենք մենք: Պէտք է, որ ուժեղ լինենք և մենք: Ս. ՎՐԱՑԵԱՆ

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ժ Ա Կ Ա Տ Ո Ւ Մ

Հայաստանի կոմունիստական կուսակցութեան մէջ տիրող կազմակերպչական և գաղափարական ջատու չէր կարող չազդել և երկրի տնտեսութեան վրա՝ չփոթ ու քայքայում առաջացնելով նաև այս ասպարէզում:

Ազդեցութիւնը զգալի է, մանաւանդ, այն տեսակէտից, որ խորհրդային տնտեսութիւնը փորձում է կառուցանել նոր հիմունքներով, հակառակ տիրող տնտեսակարգի և տնտեսութեան որոշ հրամայական պահանջների: Թէ տնտեսութեան և թէ մշակոյթի յատարչման վերջին նախ և առաջ պահանջում է մարդու և քաղաքացու ազատութիւն: Իսկ խորհրդային միահեծան վարչաձևը մեղցնում է նախաձեռնութեան ոգին և վերացնում տնտեսական զարգացման հնարաւորութիւնները: Առանց ժողովրդի քաղա շինարարութեան միայն պետական միջոցներով ազգային տնտեսութիւնը, արդէ պայմաններում, հարկ եղած թափով առաջ չի դնալ: Մանաւանդ, որ պետական շինարարութիւնը տեղի է ունենում մեծ մասամբ ի հաշիւ ժողովրդի տնտեսութեան:

Այդ է պատճառը, որ մենք, ընդունելով հանդերձ Հայաստանի շինարարութեան փաստը, ամէն կերպ պայքարում ենք խորհրդային տնտեսական քաղաքականութեան դէմ: Այդ պայքարը ուղղւած է ոչ թէ շինարարութեան, այլ բուլղերիկան տնտեսական դրութեան դէմ: Մի գործութիւն, որ բացարձակապէս անհնար է դարձնում բուլղերիկ և ոչ-բուլղերիկ տարբեր խաղաղ գոյակցութիւնն ու գործակցութիւնը:

Թէ ի՞նչ ուղիներով է ընթացել խորհրդային Հայաստանի տնտեսութիւնը և ի՞նչ երևոյթներ են տեղի ունեցել այնտեղ, շատ յստակ կերպով պարզում են

կոմկուսի ներկուսակցական պայքարն ու վերելք հրահանգւած ինքնաքննադատութիւնը, որի ընթացքին ցարգ բոլոր գեկուցումներն ու զննադատութիւնները յանդէ են այն եզրակացութեան, թէ տնտեսական ճակատում գոյութիւն է ունեցել սոսկալի անբարեխիղճ վերաբերմունք և անտնտեսավարութիւն:

Թէ ինչպիսի հրէշաւոր չափերի է հասնում անիմամ վերաբերմունքը դէպի Հայաստանի տնտեսութիւնը, բաւական է հետևել միայն խորհրդային մամուլի արած մերկացումներին: Տնտեսական բոլոր ասպարէզներում, սկսած ամենահասարակ միութիւններից մինչև գործարանների և նոր գիւղերի կառուցումն ու քաղաքների վերանորոգումը, իշխել է անփութութիւն, գեղձարարութիւն և գործը վարելու անձեռնհասութիւն:

Այսպէս, ժողովուրդ Արամայիս Երզնկեանը հետևեալ բացերն է մատնանշում: Շինարարութեան համար պակասել է «փորձած, ստեղծագործական թափով օժտւած, տեխնիկայի բոլոր նւաճումների գիտակ մասնազէտների կազմ». ամենաթանկ շինարարութիւնը կատարւում է Հայաստանում. մեր անտառներում տարեկան կորցնում ենք միլիոններ, որովհետև չէլ լուծւած հանարի ծառի օգտագործումը շինարարութեան մէջ». բացակայել է մեքենայացում և շինանիւթերի և ծրարներին ստանդարտացում. մթերումները և նախաձեռն կազմելու գործը կրել է անարխիկ բնոյթ. չի եղել աշխատանքի պատասխանատուութիւն ու գիցելիլին և որակեալ ու անորակ աշխատաւոր ուժերի կանոնաւոր բաշխում. և, վերջապէս, տնտեսական օրգանները ժամանակին չեն ստացել համապատասխան վարկեր («Ռորհրդ. Հայաստ.» 179, 1923):

Սոյն բոլոր բացերը կարող են վերանայլ ժամանակի ընթացքում: Սակայն, այդ պահանջներին հետ մէկ տեղ ցոյց տրւած վերաբերումներն է, որ մեծապէս հարւածել է Հայաստանի տնտեսութեանը և շինարարութեան գործին: Եւ ծանօթանալով այդ վերաբերմունքին՝ ակամայից հարց է ծագում. արդե՞օք խորհրդային վարիչներն ու պաշտօնէութիւնը Հայաստանի վրա նայում են որպէս իրենց հարազատ երկրի, թէ՛ բռնադատման ենթարկւած թէ՛ շնամուհոյգ մասսի...:

Ալլահվերդիի հանքերում, համաձայն Հայկազ Կոտսանանիի գեկուցման, եղել է «այճ ծակող անտեսողարարութիւն, դեֆիցիտ, ուռեցնող ծրագրեր, կորցնողական քաղաքականութիւն, առանձին ծրագրերի անթոյլատրելի անփութութիւն, գեկազարութեան բացակայութիւն և ամենասնագի ու անգլապուն վերաբերմունք դէպի բաներութիւնը»: Ներմուծելի ունի չորս հարիւր հազար ռուբլու գործիքներ, որոնց «տնտեսական և տեխնիքական նպատակալարմարութիւնը դեռ ևս սպացուցւած է»: Հանքահետազոտական աշխատանքների համար յատկազուծ գումարները ամրոցվալիս այլ տեղ են գործադրել և բնակարանային շինարարութեան համար ստացւել 295,000 ռուբլուց նպատակին ծառայել է միայն 166,000 ռ.: Մէկ երկու լաւ մասնագէտների փոխարէն պահւում են տասնեակ վատերը և բանուրների աշխատավորմն էլ ուշացում է շարաքննող:

Կարճևանի ջրանցքի համար ըստ նախահաշիկ յատկազուծ էր 74,000 ռուբլի: Յետադային ջրանցքի վրա ծախսում է 1 միլիոնից աւելի: Իսկ արդէ՛նքը: Ջրանցքը աւարտելուց յետոյ ոռոգելու է 1200 դեհեստինից պակաս: Այն ինչ, այդ գումարով Չանգեղուրում կարելի էր հիմնել հազար տնտեսութիւն ունեցող մէկ գիւղ և որոշ չափով առաջն առնել զանգեղուցիների արտադարձի:

Էւլիւրի ջրանցքը կառուցւած է երեք հազար դեհեստին ոռոգելու համար. այն ինչ ներկայիս ոռոգում է միայն երեսուն երեք դեհեստին:

Իջևանի ջրա-էլեքտրակայանը ծրագրւում է կառուցանել 60 հազար ռուբլիով: Արդէն նախատեսւում է, որ մէկ միլիոնով էլ գլուխ չի գալու:

Իսկ թէ ի՞նչ վիճակում է Անտառտրեստը, այդ մասին թող վկայի Հիմնարկութեան ղեկավարը. — «Ձեր այն հարցին, ընկ. Կոտսանանի, թէ ո՞ր ձևուարկութիւններ են դեֆիցիտային, պատասխանում եմ, որ դեֆիցիտային են բոլորն էլ, իսկ նրանք, որ դեֆիցիտային չեն,—կանգնած են, որովհետև վաղուց է, որ չեն կարողանում աշխատել» («ՈՒ. Հ.» 165):

Անի կայարանի մօտի չէչաբերի (պեմգայի) խնդրում հանքափորներից ջարբ ընդունել է ոչ թէ կշռով, այլ աչքաչափով: Դրա հետեանքով պակասել է 377 տոն չէչաբար, 46.746 ռ. արժողութեամբ և բանուրներին էլ աւելորդ վճարել է 7,000 ռուբլի: Դիզելի մեքենայի համար չէնք է շինւում. սակայն, երբ մեքենան ստացւում է, հնարաւարութիւն չի լինում ներս մտցնել, և ստիպւած, չէնքը մեծացնելու համար, քանզում են մէկ պատը: Բազում դեռած 272 քլուզները դուրս են գալիս անպէտք և անգործածելի: Համբուրգի խորհրդային առևտրական ներկայացու-

ցիչը ստանում է 6406 կիլո սառչին տեսակի չէչաբարի պատէր. երբ Համբուրգում ստացւում է քարը, բանից դուրս է գալիս, որ այդ քանակից միայն 100 կիլոն է պէտքական, մնացած 6306 կիլոն «չի իրացել անգամ շինարարութեան համար» («ՈՒ. Հ.» 169):

Իսկ Լենինականի շինարարութեան աշխատանքների ժամանակ, ինչպէս «ՈՒ. Հ.» խորագրականն է գրում, խորհրդային բանակիցներն և վերաբերելի կոպէկ աւկոպէկ հաւաքած գումարները ծախսել են յանցաւոր անփութութեամբ և անպատասխանատու կերպով: Արժէ մի փոքր աւելի մանրամասն ծանօթանալ Լենինականի վերաշինման գործին:

Ուշագրաւ է, որ Լենինականի թիւութիւնների մասին խօսելուց առաջ, «ՈՒ. Հ.»-ը հետևելու յայտարարութիւնն է անում՝ «մենք զիտենք, որ մեր բոլոր թերութիւնները ցնծութեան լացականչութիւններ են սառնացնելու Դաշնակցութիւն կուսակցութեան մէջ և նրա ստոր թերութիւն «Դրօշակչի էջերում»: Ի հարկէ, մենք խորհրդային հրապարակագրիներուց երբեք չենք ակնկալել բարոյական և ազնիւ վերաբերմունք: Բայց զրպարտութիւնը հասցնել այն աստիճանի, որ ցնծութեան պատճառ համարել այն, որից միայն ստակալ կարող է «Դրօշակչը, աւելի է, քան որևէ բարոյական անկում: Շատ իղուր են փորձում նման միջոցներով և հրահանգւած «խնքնաքննադատութեամբ» մեղմացնել իրենց յանցանքը և հայ աշխատուորութեան դայրթիւ: Բոլշևիկեան արան-թալանի քաղաքականութիւնը ոչ թէ ցնծութեան քաղականչութիւններ կառաջնի «Դաշնակցութիւն կուսակցութեան» մէջ, այլ՝ աւելի վճռական և համոզւած պայքարի դիտակցութիւն:

Լենինականի և նրա գաւառի վերականգման աշխատանքների պետի պաշտօնով Թեֆլիսից՝ ամսական հազար ռուբլի ոռնիքով, հրաւիրւում է ճարտարագետ Պիսիանը, որը պատճառ է եղած վրաստանի, այսպէս կոչւած, «Ստանդարտտրոյ»ի անյալողութեան: Նոյն Պիսիանին իրաւունք է տրւել միանձնաբար ընտրել շինարարական տեխնիքական պաշտօնէութեան կազմը: Օգտագործելով այդ իրաւունքը՝ Պիսիանը իր շուրջն է հաւաքում Ռոստովից, Բազուից, Բաթումից և Թիֆլիսից գործին միանգամայն անտեղեկ իր ազգականներին ու ծանօթներին, որոնք բոլորն էլ ստանում են երեքից հինգ հարիւր ռուբլի ամսական:

Կապալտունների հետ կնքում են պետութեան համար բոլորովին անձեռնուռ պայմանագրեր:

Փոխանակ որ վերին պատկան մարմինների կողմից հաստատու են նախագծերը, բանից դուրս է գալիս, որ «նախագծի հեղինակը կամ չէնք նախագծող հաստատութիւնը՝ իրենք են հաստատում կատար անելու համար իրենց սեփական նախագիծը: Մի քանի միլիոն ռուբլի արժեքով չէնքերն նախագծերը չեն կարող տեղծւել և վերջնապէ աշխատանքների պետի վարչութեան սուրբթեր նախագծումների բերումը»:

Լենինականի վերականգման հիմնական յտտակագիծ գոյութիւն չի ունեցել: Ե՛նչքերը կառուցւելուց յետոյ է միայն նախագիծը ներկայացւել «նրպէս ինֆորմացիա» վերին մարմիններին: Այն ինչ, արդէն կառուցւած չէնքերից մօտ մէկ միլիոն արժողութեամբ սներ ճանաչւել են անպիտք:

Շատ դէպքերում սներն սկսել են կառուցանել

առանց նախահաշիւների: Իսկ նախահաշիւները համաձայն կառուցող շէնքերի փաստական արժէքը շատ նկատելի կերպով գերազանցում է նախահաշիւին հաշւարկումները:

Բնակելի տարածութեան խորանարդը փոխանակ, համաձայն ծրագրեր-նախագիծի, արժենալու 150 ր., նստել է 190 ր.: Վարչա-տնտեսական ծախսերը կազմել են ընդհանուր գումարի 25 տոկոսը: Երկարարութեան սկզբնական շրջանում հայթայթման բաժինը գնում է 950 վազոն փայտեղէն: Այդ քանակութեամբ հարկաւոր չեղած փայտեղէնի համար կառուցում են հսկայական պահեստներ, պահուած է 17 միլիցիտներ-ներէից բաղկացած պահպանների մի կապմ է նշանակում են լաւ ուժեղներով պահեստների վարիչներու փոխվարիչներ: Մարք բերից ապաստելու համար, 1927 Վիերնայի այդ փայտեղէնը ծախուած է Աւստրիին իջեցած գնով: Իսկ 1928թ. շինարարական շրջանին, նոյն հայթայթման բաժինը յետ է գնում Աւստրիից այդ փայտեղէնը 20% յաւելումով: Իսկ շինարարական նիւթեր մատակարարելու համար կառուցւած նեղ երկաթուղագիծը, որն արժեցել էր հարիւր յիսուն հազար ռուբլի, իրեն շարժարարացնելու հետեանքով, վաճառուած է ընդամէնը քառասուն հազար ռուբլիով:

Բազմաթիւ փաստեր կան այն մասին, որ «շէնքերին ոչ ժամանակակից է անկանոն կերպով պահեստներէջ շինանիւթեր հասցնելու հետեանքով բանւորներն անպործ են նստել: Իսկ այդ պործադարի ժամերի համար, որոնց մեղքը բանւորների վրա չի կարող ընկնել, կրմտէն վճարել է բանւորներին, ու պետութիւնը վնաս է կրել»:

Մասնաւոր շինարարութեան համար յատկացւած է եղել երեք միլիոն ռուբլի: Այդ գումարը փոխանակ համեմատաբար բաժանելու մասնաւոր տանտէրերի մէջ, մեծ մասամբ, անձնական կապերի շնորհիւ, անցել է ունեւորների ձեռքը, որոնք բոլորովին տարբեր նպատակներ են ծառայեցրել:

Լենինականի խայտառակութիւնների թագն ու պակը կազմում է գիւղական շինարարութիւնը: Երկրաշարժից վնասուած ութ գիւղերի վերաշինման համար միութեանական կառավարութիւնը բաց է թողնում յատուկ գումար: «Վարկի է առանց տառանկելու ստել, գումար է «Ու. Հ.»-ը, որ խորհրդային Միութեան բանւորների է գիւղացիների ռուբլիները, որոնք յատկացւած էին գիւղական շինարարութեանը, քամուն են արւած»: 1927 թ. շինուած է 600 տուն, որոնք նմանուած են «հաւարուների» և խախտու լինելու պատճառով գիւղացիները հրաժարուած են ապրել այդ տներում: Գաւառը ծկոմի յատուկ յանձնաժողովը քնննութիւն կատարելուց յետոյ, դալիս է այն եզրակացութեան, որ ամենից նպատակայարմար է այդ շէնքերը քանդել և շինարարութիւնն սկսել նորից: Ահա թէ ինչ «խայտառակ դրութեան մէջ է գիւղական շինարարութիւնը, ինչ խոշոր տնտեսական ոճրագործութիւն է կատարուած այնտեղ» («Ու. Հ.» 177, 178):

Միութարական չէ դրութիւնը նաև Ղափանի պղնձահանքերում: Նոյն բացերը նաև բոլոր տեսակի համադրողակցականներում, առւտրական և արգիւնարբական հիմնարկներում: Սակայն, բերւած օրինակներն էլ բաւական են մէկ աւելորդ անգամ ևս համո-

զելու, որ բոլոր այդ թերութիւնները ոչ թէ արդիւնք են այս կամ այն սխալի, այլ բխում են խորհրդային իրաւակարգի ձեւից, տնտեսական ընդհանուր դրութիւնից:

Ինչ վերաբերում է տնտեսական ասպարէզում թոյլատրւած սկզբունքային-գաղափարական շեղումներին, նախկին ղեկավարութիւնը զլխաւորապէս մեղադրում է «հայկական ոճի», «անծրագրւած տնտեսութեան», «փակ տնտեսութեան» և ազգային փոքրամասնութիւնների խնդիրներում:

Փոխանակ նոր շէնքերը արդի տեխնիկայի և աշխատարութեան պահանջների համապատասխան կառուցանելու, տնտեսավարները տարւել են «սպեցիֆիկով» և «հայկական ոճ» անուն տակ վերահանդանացրել աւատական ու կղերական միջնադարը: Երկարարական այս գիծը, համաձայն քննադատների, թէ շատ աւելի սուղ է նստում և թէ խանդարում է յտանդարտացման փորձերին: Միւս կողմից էլ, հայկական ոճ ասածից նեղ ազգայնական հոտ է փչում: Ոճի խնդիրը գաղափարական այնպիսի մի յանցանք է համարւում, որ «Ու. Հ.»-ը չբաււէց Ար. Երզնկեանի փայտեղէնը գնել. վարդապետի վեղարով վանքի փչնոց պատերն է պաշտպանում:

Ծրագրային տնտեսութեան առթիւ, լսելով Ս. Տէր-Գաբրիէլիանի ղեկուցումը, Երևանի քաղկազմակերպութեան ակտիւի ժողովը հետեանք բանաձեւն է ընդունել. «Քուժեղացնել միասնական տնտեսական պլանի քսեղծելու քաղաքականութեան դիրքերը, որը (քաղաքականութիւնը) պէտք է հաշի առնել իւրաքանչիւր տնտեսական շրջանի առանձնախտակութիւնները և վերջիններս յօդուս Միութեան ողջ ժողովրդական տնտեսութեան շահերի օգտագործումը» («Ու. Հ.» 146):

Եթէ Հայաստանում ծրագրային տնտեսութիւնն անյարդուութեան է մատուել, դրա պատճառը ոչ թէ նախկին ղեկավարութեան անձեռնհասութիւնն է, այլ խորհրդային տնտեսական քաղաքականութեան կողմու սխալներից մէկը: Ոչ մէկ ընկերվարական չի կարող դէմ լինել ծրագրային տնտեսութեան: Սակայն, ծրագրային տնտեսութեան միջոցով երկրի տնտեսական բոլոր թթագաւառներում համապատասխան համարվողութիւն և պահանջների բաւարարում հաստատելու համար, անհրաժեշտ են որոշ նախադրեանքներ և տնտեսութեան բնական զարգացման պայմաններ: Մի բան, իր բացակայում է թէ Ռուսաստանում և թէ, մանաւանդ, Հայաստանում: Տնտեսութիւնը ծրագրային ձեւով կիրառելու համար անհրաժեշտ մի շարք տեսլանքեր դուրս են պետծրագրի իրաւասութեան սահմաններից, ինչպէս, օրինակ, պահանջւած միջոցներ, բարձր տեխնիկա, երկրի տնտեսութեան ազգայնացում, բնութեան զմահանոյց, քաղաքական նպաստաւոր պայմաններ, միջազգային և խորհրդային տնտեսութիւնների փոխյարաբերութիւնը և այլն: Ո՛ր մնաց Հայաստանի պէս տնտեսապէս յետամնաց մի երկրում:

Հայաստանի ծրագրային տնտեսութեան ձգտումը մերկացնում է խորհրդային քաղաքականութեան և մի այլ կողմը: Եթէ Լենինը իր գրած նամակում հայ կոմունիստներին յորդորում էր, մասնաւորապէս տնտեսական քաղաքականութեան մէջ, հաշի առնել

Հայաստանի յատուկ պայմանները, ապա դրան հակառակ, երկրի վարիչներն ամէն կերպ աշխատում են Հայաստանի տնտեսութիւնը պայմանաւորել յօղուտ Ռուսաստանի տնտեսական շահերի: Առնենք, օրինակի համար, բամբակի մշակոյթը: Սորհրդային Ռուսաստանը, առաջին տարուց իսկ սկսած, ամէն կերպ աջակցեց Հայաստանի բամբակագործութեան: Առան վարկաւորման շնորհիւ, մի քանի տարում՝ բամբակի մշակոյթը անցաւ նախապատերազմեան չափը: Արդե՛ք ժողովուրդը օգուեց զարգացման այդ թափից: Այո՛, երկրի մշակութային բուսականութիւնը բարձրացաւ: Բայց այն, որ բամբակի վաճառքը պետական մեծաշնորհ յայտարարեց, որ լիշխանութիւնը, օգուելով ժողովրդի ճանր կացութիւնից՝ նախօրէ՛ վարկ բաց արաւ և ճանր մատակարարումով պարտաւրեց բամբակ ցանել, իսկ բերքն էլ աճեցան չնչին դնով յափշտակեց, որ հազիւ ինքնարժէքն էր կազմում, ապացուցանում է, որ ոչ միայն ժողովուրդը չէ վաստակում բամբակից, այլ և զո՛ւ է Ռուսաստանի տնտեսական դադութային քաղաքականութեան:

Հայաստանի ազգային տնտեսութիւնը շատ աւելի մեծ օգուտ կը ստանար, եթէ միտումնաւոր ծրագրային ձևի փոխարէն, ժողովրդին ինքնագործունէութեան լայն հնարաւորութիւններ արէին և ամէն մէկ նոր ձեռնարկի պայմանաւորէր ոչ թէ հարեան ժողովուրդներին, այլ Հայաստանի շահերով:

Շատ ճիշտ է նկատում «Սորհրդ. Հայաստան»-ը իր սեպտ. 29-ի խմբագրականի մէջ, թէ՛ խորհրդային երկրի «ճարտարաբանապայման, տնտեսական մակարդակի բարձրացման, բովանդակ սոցիալիստական շինարարութեան խնդիրները մեծապէս չափով կապւած են, և կախւած են այն քաղաքականութիւնից, որը տարւում է գիւղում»: Այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետեւ գիւղատնտեսութիւնը Հայաստանում էիմքն է թէ՛ պետութեան և թէ՛ տնտեսական քաղաքականութեան: Եւ այս սապարդում է, որ ամենից շատ պաղատական և սկզբունքային սայթաքումներ են ունենում բոլշևիկները:

Նկատւած է, որ երբ տնտեսական ճգնաժամն է սուր կերպարանք առնում, իշխանութիւնն անմիջապէս գիտւած է նահանջի և ընդառաջ դնում գիւղի պահանջներին: Եւ ընդհակառակը, երբ ճնշումը կուսակցական գաղափարներ կողմից է լինում, իսկոյն դասակարգային պայքարի գիծն են ուժեղացնում և խոչնդոտներ յարուցում: գիւղատնտեսութեան զարգացման:

Ռազմավայժի կոմունիզմի ժամանակ գիւղական տնտեսութիւնն իսպառ քայքայեց, որի հետևանքով առաջացաւ անհայտնի կացութիւն: Նոր տնտեսական քաղաքականութիւն յայտարարելուց յետոյ, տրւած որոշ ազատութեան պատճառով, գիւղացիութիւնն արագօրէն զարգացրեց տնտեսութիւնը և ձեռնարկեց արտադրութեան միջոցները ու մշակութի կատարելագործման: Ընդդիմադիր շարժումը կուսակցութեանը հարկադրեց սահմանափակել գիւղի իրաւասութիւնները և խտտ միջոցներով ապրանք դուրս կորզել գիւղացիութիւնից: Դրա շնորհիւ առաջացած հում նիւթի և հացի գնով պակասը նորից շեղեց կուսակցական ուղիղ գծից և այս ամտո իշխանութիւնը գիւղի հանդէպ շատ գիշող քաղաքականութիւն սկսեց:

Անկախած, տգիտութիւն է մի շարք կոմունիստների յայտարարութիւնը, թէ «Հայաստանի գիւղը շերտաւորւած չի, որ հայ գիւղացիութիւնը կանգնած է տնտեսական միեւնոյն մակարակի վրա և ամբողջովին չքաւորութիւն է բաղկացած» («Ս. Հ.», 226): Բայց և ծիծաղելի կը լինէր հաւասարութեան նշան դնել Հայ և Ռուս ունեւոր գիւղացիութեան միջև: Իսկ որ տնտեսական բոլոր սապարդներում շահողը գիւղացիութեան ունեւոր խաւն է, այդ էլ հետևանք է իրենց բոլշևիկներին սխալ քաղաքականութեան: Եւ շատ գուր են «գիւղի կապիտալիստական տարրերից ազդեցութիւնը և Հայաստանի դաշտային մատուռ անյաջող անցած հացամթերումը վերադրում կօօպերատուներին և գիւղաշխատողներին ճանփորձ ու անպատրաստ լինելուն»: Պէտք է վերջապէս, հասկանալ, որ յարթաղը մա է, ում ձեռքիմ գտնուում են արտադրութեան միջոցները:

Համաձայն Ս. Տէր-Գարրիէլեանի գեկուցման, Հայաստանի տնտեսութիւնների 51 տոկոսը լծկան չունի, 34 տոկոսը կաթնատու տաւար չունի, 19 տոկոսը բոյրովին սոււր չունի, գիւղացիութեան 50 տոկոսը չքաւորներ են, իսկ տնտեսութիւնների 55 տոկոսը միանգամայն զուրկ է ինվենտարից («Ս. Հ.», 155): Եւ փոխանակ այդ 55 տոկոսին ինվենտար-հայթայիթը, երբ 45 տոկոս ինվենտար ունեցողներն փնտեսական զարգացման բոլոր հնարաւորութիւններն էլ կանցնում են, պարզ է, որ տնտեսական ճգնաժամներն անխուսափելի կը լինեն: Դեռ աշան սկիզբն է և արդէն ցորենի փութը Հայաստանում հինգից եօթ ու կէս բութի արժէ, և մի կտոր սև հաց ստանալու համար պոչեր են բռնում...

Բացի այդ, գիւղապրանքների մթերումներն այն ձևով են տարւում, որ ամբողջ միշտ լինում է չքատրութիւնը: Օրինակ, կօօպերատուներն աշանը փան դնով գինն են հաւաքում: Չքաւորը, կարիքից ստիպւած, փան ծախում է իր գինին: Չխաւորը աշանը դնում է նաև ունեւոր գիւղացին: Իսկ դարեանը, երբ կօպերատուր գինին աւելի թանկ դներով է սկսում մթերել, արդէն գինին հաւաքւած է լինում ունեւորների շտեմարանները, և հարուստը լաւ վաստակով վաճառում է թէ՛ իր սեփական և թէ՛ չքաւորից գնած գինին:

Մէկ ուրիշ օրինակ: Հացի պակասութեան հետեւանքով, կօօպերատուներն ալիւր տալիս են միմիայն պանրի, իւղի, բրդի և մեղրի փոխարէն: Չխաւորը, քաղցից չմեռնելու համար, ստիպւած է լինում ունեւորից փութը 16 բութով պանիր գնել, որպէսզի փութը 12 բութով կօօպերատուին յանձնելով փոխարէնը կարողանայ ալիւր ձեռք բերել: Բանից դուրս է գալիս, որ պետութիւնը ոչ միայն շահագործում է գիւղացիութեան ծանր վիճակը, այլ և լայն հնարաւորութիւններ տալիս չարաւահների վաշխատուների արարքներին (փաստերը բերած են Հայկաջ Կոստանկանի գեկուցման մէջ):

Նախկին ղեկավարութիւնը գիւղում դէպի «փակ տնտեսութիւն» տանող քաղաքականութիւն է վարել, — սակ Աշտո Յովհաննիսեանի կենտկոմին ուղղւած գրւխաւոր մեղադրանքը: Այստեղ արդէն բոլշևիկները կախարդական չրջանակի մէջ են ընկնում:

Պետութիւնն ինքը հնարաւորութիւն չունենալով բաւարարել զիւրի բոլոր պահանջներին, զիւրացին ստիպւած զարկէ և տալիս տնայնագործութեան և զիւրապետութիւնը սահմանափակելով զիւրի պահանջները՝ կորուստ է զիւրացուն քաղաքից՝ «սոցիալիստական» արդիւնաբերութիւնից՝ տանելով զէպի փակ տնտեսութիւն:

Եթէ զիւրացուն հաղուստի ինքնահայթայթումը վնաս է հասցնում պետական առևտրին ու արդիւնաբերութեանը, ապա պետութիւնն էլ այնքան սահմանափակ քանակով, վատորակ և թանկ-անմատչելի արժէքներով է կտորոզէին առաջարկում զիւրացուն, որ վերջինս ստիպւած է լինում ինքն իր զլխի ճարտ տանել:

Ահա այստեղ է, որ շարաքառտիկ «միլիտարի» բերանները ոչ թէ մօտենում, այլ աւելի են հեռանում իրարից՝ զիւրի և քաղաքի մերձեցումն անհնարին դարձնելով և պատնէշներ կառուցանելով «ժողովրդային տնտեսութեան և բուլշևիկեան «սոցիալիստական» արդիւնաբերութեան միջև:

Ըստ 19րդ համազումարի որոշման, զիւրական փակուղուց հնարաւոր է դուրս գալ միայն զարկ տալով հաւաքական տնտեսութիւններին:

Արդէն «խորհրդային տնտեսութիւնների» փորձը ցոյց տուց, որ ընկերավարութեան փոխարէն պետական դրամատիրութեան հիմք է դրուում: «Ենս պնդում եմ, քաղաքականում է Հայկազ Կոստանեանը, որ մեր խորհրդային տնտեսութիւնները զերպահանջապէս առևտրական հիմնարկութիւններ են»: Իսկ թէ ինչպիսի հիմնարկութիւններ են դառնալու հաւաքական տնտեսութիւնները, այդ ցոյց կը տայ ապագան:

Միայն փաստ է, որ խորհրդային Միութեան տնտեսութիւնների լուկ երկուս տողուսն է կուլլեկտիւացման, ենթարկւած: Մինչև 1928թ. Հայաստանում կար ընդամենը եօթ հաւաքական տնտեսութիւն: Մարզուած է հաստատել նաև 47 նոր նման տնտեսութիւններ, որոնցից մինչև այժմ յաջողել է կազմակերպել 23-ը: Դրան զուգընթաց, նկատուում է «տնտեսութիւնների մանրացում, Տողայնարարութիւնից առաջ ծիւրեր բաժանուում են և կազմում առանձին տնտեսութիւններ» («ՈՒ. Հ.», 158): Եղած հաւաքական տնտեսութիւնները կազմուած են մանր միաբուրները, նրախան թոյլ միջոցներ ունեն և միայն արհեստական վարկաւորումով է, որ հնարաւոր է դրանց զարգացումը:

Այն հանգամանքը, որ զիւրացիները խոյս են տալիս հաւաքական տնտեսութիւններին մասնակցելուց՝ սպասելով, թէ ինչ դուրս կը գայ, ցոյց է տալիս, որ երկուսն էլ՝ թէ՛ զիւրացին և, թէ՛ պետութիւնը չհաջողական նկատառումներով են մօտենում այդ ձեռնարկին:

Գալով ազգային փոքրամասնութիւնների խնդրին՝ ստիպւած ենք մեր պաշտպանութեան սակ առնել նախկին ղեկավարութիւն և Կրեմլի ու Քիթլիսի մեղադրանքները համարել զրգարտութիւն: Բոլոր փաստերը խօսում են յօգուտ նախկին ղեկավարութեան և հաստատում, որ հին կենտրոնը ազգային փոքրամասնութիւնների հարցում վարել է իրական բուլշևիկեան քաղաքականութիւն: Այն էլ հայ բուլշևիկեան:

Նախկինները մեղադրուում են նրանում, թէ իբր, առաջնութիւնը միշտ տեղ են հայ բանուրին, որ

սահմանափակել են օտարների ընդունելութիւնը և որոշ ճնշում գործադրել այլազգիների վերաբերմամբ: Այն ինչ, միճակազորութիւնը ցոյց է տալիս, թէ Ալլան-վերդիի օտարազգի բանուրների թիւը կազմում է 19 տոկոս. խոչոր թիւ են կազմում նաև Ղափանի պղնձահանքերում աշխատող օտարերկրացիները: Բացի այդ, քանից դուրս է գալիս, որ «Ալլան-վերդիի արդիւնաբերութեան որոշ թիւերութիւնները բացատրում են օտարազգի աշխատողների ազգային միտումներով» («ՈՒ. Հ.», 165): Ուրեմն, ոչ թէ հայերն են ազգայնական գիծ տանում, այլ՝ ճիշտ հակառակն է տեղի ունենում: Իսկ Հայկանտրոլովի երրորդ նստաընթացում (յուլիսին) տրուած զեկուցումները ցոյց տւին, որ ազգային փոքրամասնութիւնները Հայաստանում ոչ թէ ճնշման են ենթակայ, այլ վայելում են յատուկ հոգատար վերաբերմունք:

Հայաստանի սահաւահողութեան հետեւանքով 150.000 հողաւորի կազմաւորմանը հնարաւոր է եղել միայն հարբեր հազարի հողային պահանջներին բաւարարել: Օտար երկրներում թափառող ու տառապող քաղմահազար հայ տարագիրներից վերջին երեք տարիների ընթացքում ներս է առնել միայն 19.000 հոգի, որոնցից շատերն տեղաւորել են կլիմայական և հողային այնպիսի անբարենպաստ վայրերում, որ հիմա ստիպւած են տեղափոխել ուրիշ տեղեր (Նոր Եւրոպիա):

Դրա զիմաց Հայաստան է վերադարձել 80.000 թուրք ազգաբնակութիւն, որի մէջ, ինչպէս Երզնկեանն է զեկուցում, առանձին քաղաքականութիւն է տարւել՝ «արտօնեալ պայմաններ ստեղծելով թուրքերի համար»: Նոյն արտօնեալ դրութիւնը՝ և ոռու մալալանների նկատմամբ: Եթէ հայ զիւրացին չնչին ստանում է ընդամենը երեք քառորդից՝ մէկ է քառորդ ղեւեսատին հող, մալալաններին արւում է չնչին երկու և կէս ղեւեսատին լաւադոյն հողերից: Այդպէս են վարւում, որպէսզի ոռու գիւրացիութեան «բարւօք տնտեսութիւնը չուտի»:

Վերոյիշեալ փաստերը տալով՝ Հայաստանի հող-ժողովուրդ յայտարարում է. «մենք այդպէս ենք վարւել, որպէսզի հնարաւորութիւն ունենանք կարճ ժամանակամիջոցում վերադնելու ազգային այն անտաքոնիզմը, որ ստեղծւել է մեր երկրի թուրք, հայ և ոռու ազգութիւնների միջև: Որքան էլ որ մեր թշնամիները շարունակեն իրենց կոկոսը, մենք շարունակելու ենք այդ քաղաքականութիւնը» («ՈՒ. Հ.», 157):

Այստեղ արդէն, Արամայիս Երզնկեանների զլխին ոչ թէ վեղար պէտք է դնել, ինչպէս «խորհրդային Հայաստան»-ն էր արել, այլ տանկլական փէս:

Այսպիսով, հայ բուլշևիկների տնտեսական քաղաքականութեան մասին կարող ենք անել հետեւեալ եզրակացութիւնները. —

Հայաստանի տնտեսական կեանքը, ճիշտ է, յառաջադիմում է: Սակայն, պէտք է տարբերել պետական շինարարութիւնը ժողովրդական տնտեսական ստեղծագործութիւնից: Պետական տնտեսական քաղաքականութիւնը միակողմանի է և, որ զլխաւորն է, մեծ մասամբ ուղղւած է ժողովրդի տնտեսական ինքնագործունէութեան և արտա գարգաճման դէմ: Այդ քաղաքականութեան հակառակ, հայ ժողովրդի

ստեղծագործական ու կենսունակ ողին՝ շարունակում է առջ մղել երկրի տնտեսական կեանքը:

Իշխանութեան կողմից Հայաստանի ազգային տնտեսութեանը ցոյց է տրուում ամենամարբերիղն և ուժգործ վերաբերմունք, որը հետևանք է խորհրդային տնտեսական և վարչական սխալ ձևերի:

Բողջկիկներն իրենց «ընկերվարական» նոր ձեռնարկներով (խորհրդային և հաւաքական տնտեսու-

թիւներ) ժողովրդին շահագործելու նոր միջոցներ են հնարում և աւելի են հիմնաւորում պետական դրամատիրութեան գոյութիւնը:

Տնտեսական քաղաքականութեան մէջ Հայ բոլշեւիկները ստորադասում են Հայ ժողովրդի և Հայաստանի շահերը թէ՛ Ռուսաստանի և թէ՛ երկրի ներսում ապրող այլազգիներէ շահերին:

ԱՇՈՏ-ԱՄՐՐՈՒՆԻ

Հակաեքրէնութիւնը խորհրդային Ռուսաստանում

«Բոյոր մարդիկ եղբայրներ են, բայց երէտները մարդիկ չեն»: Վ. Յիւնկ

Հրէական հարցը Ռուսաստանում յատուկ նմանը չունեցող մի հարց է: Այդ երկրի սահմաններում ապրող ժողովուրդներից շատերն են Հայածել, բայց հրէական Հայածանքները իրենց ընաւորութեամբ և դրդապատճաններով եղակի են: Լեհ, Հայ, Ֆին և ուրիշ ժողովուրդների Հայածանքները կրել են գրեթէ բացառապէս քաղաքական բնոյթ, մինչդեռ հակահրէութեան մէջ քաղաքական դրդիչը չի եղել առաջնակարգ: Այս հարցում աւելի մեծ դեր է կատարել այն կրօնական-բարոյական-ցեղական հակակրօնիւնը, որ սածուում է ուսու ժողովուրդը դէպի հրէաները, և, ի հարկէ, տնտեսական աղբակները: Անշուշտ, սխալ կը լինի բուն ուսու ժողովրդին վերաբերել նման մեղադրանք-բնական զգացմունք նկատել հրէատեցութիւնը նրա մէջ: Ի հարկէ, այդ զգացմունքը պատաստել են նրա մէջ ժամանակը և տիրող տարրը: Բայց և այնպէս, ուսու ժողովրդի վերաբերմունքը դէպի հրէաները անցեալում եղել է խիստ բացասական, որի հետևանքով հրէական Հայածանքները Ռուսաստանում դաժան էին չափազանց:

Թոււմ էր, թէ բոլշեւիկեան կարգերը վերջ պիտի տային այս կացութեան: Բայց Համայնավարական կարգերի ճովանու տակ հրէատեցութիւնը Ռուսաստանում ծաղկում ու փթթում է այն ատիճան, որ հին կարգերը այժմ համարում են երանութիւն: Եւ այդ ատեղութիւնը, ինչ խօսք, մի օր արտայայտելու է հրէշաւոր ձևերով. իրագործելու է հռչակաւոր Վեպը, որ բնական ծնունդն է բոլշեւիկեան կարգերի հետևանքով ստեղծուած տրամադրութիւնների: Բոլշեւիկեան բարբառին անձանթ մարդիկ կարող են չիմանալ, թէ ի՞նչ է նշանակում Վեպ: Վեպ նշանակում է՝ Համառուական հրէական ջարդ (всесоюзная еврейская порож) — երեք հնչիւնից բաղկացած մի բառ, որ իր մէջ պարունակում է սոսկալի գաղափար—մի ամբողջ ժողովրդի սև ճակատագիրը:

Համառուական հրէական ջարդ... Աւելի պերճախօս անկարելի է ձևակերպել այն միտքը, որ տանեակ տարիներ փայփայել են միապետական կարգերի օրով իշխող դասերը՝ աշխատակները, բիւրոկրատիան, կղերականները՝ իրենց գլուխ ունենալով ցարին: Փայփայել են, բայց չեն յանդգնել հրապարակ

նետել այդ արիւնոտ նշանաբանը: Հրէական ջարդեր կազմակերպել են շատ անգամ, բայց կազմակերպել են զաղտնի, լոյս աշխարհից ծածկելով իրենց վարձուները՝ խուսափելու համար այդ աշխարհէ դատաւճիկից: Բոլշեւիկեան կարգերը նման մտահոգութիւններ ու վախեր չունեն, և ահա Ռուսաստանի սահմաններում ապրող հրէայ ժողովրդի առաջ իր ողջ Հասակով կանգնել է մի դաժան հարց — Ֆիդէլական գոյութեան խնդիրը: Հրէական հարցը միապետական Ռուսաստանում երբեք դրւած չի եղել այդ ձևով: Մասնակի ջարդեր, կողոպուտ, թալան, գրելի իրաւազրկութիւն — այո՛, բայց ջարդ՝ Համառուական չափանիշով — ո՛չ: Այդ միտքը միապետութեան յեռարան կազմող տարրերի համար չափազանց զայթակղեցնող ու ցանկալի էր, բայց նրանք չէին համարձակուում այս աշխարհին յանձնել նման միտք՝ քաշելով ի՞նչ արտասահմանից, և՛ իրենց երկրի Հասարակական կարծիքից: Բոլշեւիկեան կարգերն, ընդհակառակը, ստեղծեցին պայմաններ, որոնք հնարաւոր են դարձնում իրագործել այն, որի մասին միայն երազել կարող էին ցարն ու իր պաշտօնեաները:

Թող այս միտքը սխալ չհասկացուի: Ի հարկէ, բոլշեւիկեան կարգերը նման նպատակ չեն ունեցել, ինչպէս չեն ունեցել ամբողջ երկիրը սովի մատնելու ցանկութիւն, որ այդ եղաւ 1921 թվին, դիւրարկան կոմունիզմի հետևանքով, չեն ունեցել և՛ իրկիրը մի կողմից անտուն ու անտէր երեխաներով, մի կողմից քրէական տարրերով լեցնելու ծրագիր, որի մասին շարունակ խօսում են խորհրդային թերթերը, չեն ունեցել և՛ երկիրը անտեսապէս մեկուսացնելու որոշում, որի հետևանքով այնքան փորձանք եկաւ ուսու ժողովրդի գլխին, չեն ունեցել և արևելեան ինքնակալ բունակների հետ ողջագուրելու փափագ: Բայց... այդ ամենը տեղի ունեցաւ, և պատճառը միայն խորհրդային կարգերն էին...

Ճիշտ է, ջարդեր կազմակերպելու համար դեկրետներ չեն հրատարակել, ծածուկ հրահանգներ չեն տրել: Ընդհակառակը, հրէա ժողովուրդը ձևականօրէն վայելում է հաւասար իրաւունքներ Ռուսաստանում ապրող միւս ժողովուրդների հետ — մի բան, որ առաջ չունէր: Աւելին դեռ. խորհրդային իշխանու-

Թիւնը աշխատում է այդ ժողովուրդին կապել հողի հետ՝ ստեղծելով նրա համար մի տեսակ արտօնեայ վիճակ: Բայց չնայած այդ ամենին, մասամբ և դրա հետևանքով, հրէատեցութիւնը Ռուսաստանում երբեք այնպիսի ահուկ շահեր չի ընդունել, ինչպէս այսօր՝ բոլշևիկեան իշխանութեան ներքոյ:

Հրէա ժողովուրդը գգում է, թէ ինչ ողբալի վախճան է ունենալու այդ ատելութիւնը և բնագործին ինքնապաշտպանութեան պատրաստութիւններ է տեսնում: Դեռ տարիներ առաջ Ռուսաստանից դուրս էին. «Ներկայումս դիմում են ոչ միայն կոմունիստները, այլ և շտապ ու լաւ գինւում են նաև հրէաները, դիմումը կատարում է մասամբ կառավարութեան հաշիւին, մասամբ տարբեր լինելով: Այլ ոչ Ռուսաստանում չի կասկածում, որ մեծ արիւնհեղուութիւն է լինելու երկու կողմից էլ (ռուսները և հրէաների Ա. Ա.)... Անհրաժեշտութեան դիտակցութիւնն է մղում՝ պատրաստել պարզ, անխուսափելի ու յուսահատական ինքնապաշտպանութեան...» («Ձա Սվոբոդա», 1924թ. № 212):

Հրէատեցութիւնը այլ ևս տեղական երևոյթ չէ. նա ծաւալել է Ռուսաստանի մի ծայրից միւսը, անգամ այն վայրերը, որոնք հրէա ժողովուրդից աշխարհագրորդին հեռու են գտնուում: Անգամ այն տարրերը, որոնք հրէաների հետ անմիջապէս չհիւնուել են արտերութիւն և անթի չունեն, դրանք ևս կորցրել են իրենց վաղեմի կարեկից կամ անտարբեր վերաբերմունքը և թշնամաբար են տրամադրւած: Հրէատեցութիւնը մի տեսակ համառուական հիւանդութիւն է դարձել:

Պորհրդային թերթերն իրենք մատնանշում են ամէն օր, որ հրէատեցութիւնը աճում է արագօրէն, թեան մօտ (կաշառք, դաւանափոխութիւն, ստորաոր նա մուտք է գործել ամենուրեք՝ զարդոց, համալսարան, զօրանոց, դործարան և այլուր, որ անգամ կուսակցական շարքեր վարակած են այդ «թիւնով» և պահանջում է կտրուկ և խիտ միջոցներ ձեռք առնել այդ արատը վերացնելու համար: Համառուական Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէն յատուկ միջոցներ է մշակել հակահրէութեան դէմ կուռուլու համար. այդ մարմինը իր ներկայացուցիչների միջոցով շարունակաբար տեղեկութիւններ է ստանում հրէատեցութեան սպառնական ծաւալման մասին կարմիր բանակում, բարձրագոյն դպրոցներում, ձեռնարկութիւնների մէջ և կուսակցական շարքերում:

Ինչով բացատրել այս արտաոց երեւոյթը: Այժմեան ռուսական պայմաններում այդ հարցը մէկ պատասխան ունի միայն. Ռուսաստանին հասած դժբախտութեան պատճառը համարում է հրէաներին: Նրա կարծիքով բոլշևիկեան կուսակցութիւնը հրէաների կուսակցութիւն է, բոլշևիկեան կարգերը՝ հրէաների ստեղծած կարգեր, որոնց լծի տակ տարիներ շարունակ հեծում է ողջ Ռուսաստանը՝ քայքայելով թէ՛ տնտեսապէս—ֆիզիքապէս և թէ՛ հոգեպէս—բարոյսպէս: Այդ կարգերն են, որ դուրս են նետել Ռուսաստանը ինքնիշխան ժողովուրդների շարքից՝ զրկելով նրան միջազգային երբեմնի ազդու կշիռ: Այդպիսի մտածելով՝ ռուս ժողովուրդը, բնականաբար, մի

վերաբերմունք կարող է ունենալ հրէա ժողովուրդի հանդէպ.—ատելութիւն և վրէժխնդրութեան զգացում: Եւ այդ ատելութեան ու վրէժխնդրութեան զգացումն է ծնունդ տւել այն հրէաւոր դադափարին, որի մասին խօսք եղաւ վերը և որի անունն է՝ վնայ — համառուական հրէական ջարդ:

Սակայն, ճիշտ որ այդպէս է: Իրօք հրէա ամբողջ ժողովուրդը պատասխանատու է բոլշևիկեան կարգերի համար, իրօք հրէաներն են պատճառը, որ բոլշևիկութիւնը շարունակում է ապրել և քայքայել Ռուսաստանն ու ռուս ժողովուրդը:

1920 թւին իրաւունքների դոկտոր Ի. Բլազուր հրատարակեց Պորհրդային Ռուսաստանի բարձրատեղեան պաշտօնեաների ցուցակը: Համաձայն այդ ցուցակի 556 բոլշևիկ ղեկավար դէմքերից 458 հրէաներ էին, 71 լատիներ, լեհեր և հայեր, իսկ ռուսները կազմում էին ընդամենը 27 հոգի: Եթէ հետաքրքրենք, թէ ընդհանրապէս ռուսական կոմունիստական կուսակցութեան մէջ հրէաները ինչ տեղ են բռնում, կր տեսնենք, որ կուսակցական առաջին գտումի նախօրեակին նրանք կազմում էին բոլոր կոմունիստների 43%, գտումից յետոյ՝ 39%, իսկ լեհիկեան կոչից յետոյ 58%: («Աղասութեան համար», 10, 8 21թ.): Այս տեղեկութիւնները իրենց ծառայող ճշտութիւնը պահել են մինչև անցանց տարի, երբ կոմունիստական կուսակցութեան իշխող շարքերում առաջապահ ճեղքածքի հետևանքով բաւական թւով հրէա պատասխանատու գործիչներ հետացելին պաշտօնից ու կուսակցութիւնից:

Անդրադառնալով վերը բերած թւերին և յիշելով որ այսօրայն Ռուսաստանում բոլոր հրէաների թիւը հասնում է հազու չորս միլիոնի, մինչդեռ երկրի ամբողջ ազգաբնակչութեան թիւը աւելի է, քան 135 միլիոն, — այն սպաւորութիւնն ենք ստանում, որ Ռուսաստանի ընդհանուր ազգաբնակչութեան հազու երեք տոկոս կազմող հրէութիւնը կառավարում է այդ հսկայական երկիրը. կառավարում է՝ քայքայելով այն թէ նրեթապէս և թէ բարոյապէս: Աւ, ըստ երևոյթի, հասկանալի է թւում այն ցասումը, որով լեցւած է ռուս ժողովուրդի ճնշող մեծամասնութիւնը դէպի հրէա ժողովուրդը: Բայց իրօք այդպէս է:

Անգամ եթէ ընդունենք, որ բերած վիճակագրական տեղեկութիւնները անլիճելի են, այսինքն, իրօք, հրէաները կազմում են կոմունիստ ղեկավարների մէջ խոշոր թիւ, զարձակ հրէա ժողովուրդի երեսին նետուող ամբաստանութիւնը անտեղի է. որովհետև եթէ առնենք բոլոր հրէաների և միւս կողմից բոլոր հրէա կոմունիստների թիւը Ռուսաստանում, կը տեսնենք, որ հրէա կոմունիստները կազմում են հրէա ժողովուրդի մի շնչին մասը, հազու 5—7%: Մեծ անարդարութիւն է, երբ այդ 5—7% կոմունիստների պատճառով մի ամբողջ ժողովուրդը նստեցւում է դատաՓարտելի սեղանի վրա, մեղադրոււմ է իբրև Ռուսաստանի թրջնամի: Յանուն որ արդարութեան հրէա ժողովուրդի 95 տոկոսը կապտախախտութեան է ենթարկւում 5 տոկոս կազմող կոմունիստների արարքների համար:

Բայց կան մի շարք հանգամանքներ, որոնք հասկանալի, թերևս և բնական են դարձնում հրէաների բոլշևիկեան կուսակցութեան մէջ համեմատաբար մեծ տոկոս կազմելը:

Առաջին պատճառը այն ծանր հայածանքներն ու հարստահարութիւններն են, որոնց ենթարկել է հրէա-
 ժողովուրդը Ռուսաստանում, ուր զրկւած էր քաղա-
 քացիական մի շարք կարեւոր իրաւունքներից: Իւրա-
 քանչիւր քաղաքացի Ռուսաստանում ազատ էր ապրե-
 լու ուր որ կամենար, գրադելու ինչով որ ուզէր-
 հրէան միայն զօրօկ էր այդ իրաւունքից: Հրէաների
 համար ստեղծւած էին որոշ սահմաններ, որոնցից
 դուր չէին կարող քնակել, որոշ գործերով չէին
 պարտաւել. սեփականատիրութեան և կալւածային
 ընտաւառում ևս հրէաների համար կային սահմանա-
 փակումներ: Մի շարք կրթական հիմնարկութիւններ
 հրէաները չէին ընդունում. բարձրագոյն վարժարան
 մտնելու համար հրէան պէտք է ունենար ստաւլին
 կարգի վկայական. հրէա ուսանողների համար գոյու-
 թիւն ունէր տոկոսային սահմանափակում: Սահմա-
 նափակւած էր և հրէա պաշտօնեաների թիւը պետական
 և հասարակական հիմնարկութիւնների մէջ, իսկ սպա-
 յական ասպարէզը նրանց համար անմատչելի էր:
 Այնտեղ, ուր ընտրութիւններ գոյութիւն ունէին,
 հրէաները զրկւած էին ընտրելու իրաւունքից. քաղա-
 քային ընտրութիւններէ ժամանակ հրէա իրաւասու-
 ները օրէնքով նշանակուած էին տեղական կոտովարա-
 կան հաստատութիւնների կողմից, այն էլ խիստ
 սահմանափակ թւով: Անգամ այն դէպքում, երբ
 քաղաքի ասպարնակութեան միւսամասնութիւնն էին
 կազմում, քաղաքային խորհրդարանում նրանց ներ-
 կայացուցիչ իրաւասունքի թիւը ընդհանուր թիւի մի
 տասներորդից չպիտի անցնէր: Այդ «ներկայացուցիչ-
 ներ» էլ նշանակուած էին: Եւ այլն:

Այս իրաւագործ վիճակից գատ, հրէաները Ռու-
 սաստանում, ինչպէս ասեց, պարբերաբար ենթար-
 կուած էին ջարդերի ու կողոպուտի, որոնք միշտ էլ
 կազմակերպուած էին կառավարութեան զիտութեամբ,
 և, յաճախ, մասնակցութեամբ:

Եւ պէ՞տք է դարձանալ, որ հայածական ու ջար-
 դարար այդ քաղաքականութիւնը: Հրէա ժողովուրդի
 լուսագոյն դաւակների մէջ զարթեցրել է բողոքի ու
 ցասումի գրգռում՝ լեցնելով նրանց հոգին առեւտու-
 թեան թոյնով դէպի բռնութիւն ու բռնակալները և
 մշելով նրանց դէպի յեղափոխական ճանապարհներ:
 Ռուս յեղափոխականների մէջ հրէաները յաճախ առա-
 ջաւոր դիրքերում են եղել և միշտ էլ մեծ տոկոս են
 կազմել:

Սակայն, այդպէս են եղել լուրեր:

Նոյն հակահրէա քաղաքականութիւնը ընտրովին
 տարբեր աղիւստութիւն է ունեցել երկշտաների, թոյնե-
 րի ու բարոյական նկարագրից զուրկ եղողների վրա՝
 մղելով նրանց դէպի ամէն մի ստոր վարժունք, որով
 ննարաւոր է եղել խուսափել հայածանքից: Եւ որով-
 հետև առաջինները, իբրև «նկրքին թշնամիներ» են-
 թակայ էին խիստ հայածանքների (թանա, աքսոր,
 յանախորժութիւն, գնդակահարութիւն), իսկ վերջին-
 ները մեծ մասամբ յաղորդութիւն էին գտնում իշխանու-
 քաբարութիւն, մասնութիւն), ուստի վերջինների թիւը
 շատ աւելի մեծ էր. հրէա ժողովուրդի մէջ հասարակա-
 կան տակաւնները անհամեմատ աւելի մեծ տոկոս են
 կազմում համեմատած Ռուսաստանի միւս ժողովուրդ-
 ների հետ:

Եւ ահա, երբ փուլ եկան հրէաների համար այնքա՞ն
 ստիկ ցարական կարգերը և վրա հասան բուլլեիկեան
 կարգերը, հրէա ժողովուրդը մի պահ ազատ շունչ
 քաշեց: Այդ կարգերը, որքան և մտն էին ընդհանրա-
 պէս Ռուսաստանի համար, հրէաների համար ունէին
 այն առաւելութիւնը, որ սկզբից և եթ բերին իրաւա-
 կան և տնտեսական հաւասարութիւն: Յետոյ պիտի
 գար դառն յուսախարութիւն և յուսահատութիւն,
 բայց ո՞վ կարող էր նախատեսել այն ժամանակ այդ
 «յետոյն»:

Իրաւական նոր վիճակից ամենամեծ չափերով
 օգուտեցին հրէական ծագում ունեցող սրիկաներն ու
 հացկատակները, իբրև աւելի ճարպիկ ու բաւականա-
 չափ «մարդու» ցարական կարգերի ժամանակ: Բոլ-
 ը իկեան շեկան ու այլ հիմնարկութիւններ, մասնաւնդ
 արդէնաբերական ասպարէզը լցեցին այդ տիպի
 հրէաներով:

Բնական է, որ ցարիզմից յետոյ բուլլեիզմը գրաւէր
 բաւականին թւով համակրները ու ջատագովներ նաև
 պարիւրտ հրէաներից: Սակայն, առաջիններն են, որ
 բուլլեիկեան քառասյին կարգերում յաղորդութիւն ու-
 նեն և իրենց «գործունէութեամբ» ուշադրութիւն են
 դրաւում և ամբողջ հրէա ժողովուրդը ուսաճողովորդի
 աչքին վարկաբեկում:

Սորհրդային կարգերի մեծ յանցանքներից մէկն էլ
 այն է, որ կոմունիստները կեղտոտ և ապականւած
 ձեռքերով ու միջոցներով մաքուր գործ են ուղում
 անել: Սակայն, այդ ձեռքերը գործն անում են այն-
 պէս, ինչպէս թելալում է իրենց կարողութիւնը,
 հասկացողութիւնն ու շահը: Եւ դրա հետևանքներից
 մէկն էլ այն է, որ կոմունիստական կոտակցութեան
 շարքերը մտած հրէական ժողովուրդի տակաւնների
 գործունէութեամբ արգաբացւում է մի եզերական ու
 հրէշաւոր ծրարիկ — վեպը:

Մինչդեռ հրէա ժողովուրդը բուլլեիկեան կարգե-
 րից տուժել է թեբևս աւելի, քան որևէ այլ ժողո-
 վուրդ, հայերի քայքայութեամբ: Մինչև հոկտեմբեր-
 եան յեղաշրջումը հրէաները Ռուսաստանում զլխաւոր-
 րապէս զբաղւած էին մանր առևտուրով ու զանազան
 արհեստներով: Համայնապարսկան կարգերը վերացրին
 մասնաւոր անտուրը և ստեղծեցին պայմաններ,
 որոնք, սպանելով մասնաւոր նախաձեռնութեան ոգին,
 անհնարին դարձրին նաև արհեստաւորների աշխա-
 տանքը: Հրէա ժողովուրդի ահալին մեծամասնութիւնը,
 զուրկ ապրուստի որևէ միջոցից, մասնաւոր է յուսա-
 հատական վիճակի: Դրուժեան ահատուրութիւնը գգում
 ու գիտակցում է ինքը՝ իշխանութիւնը և աշխատում
 է էլք գտնել՝ հրէութեան վիճակը թեթևացնելու հա-
 մար: Սորհրդային իշխանութիւնը որոշում է խնդրը
 լուծել՝ կապելով գործազուրկ հրէաներին հողի հետ:
 Մրազըւում է ստեղծել «Հրէական Հանրապետութիւն»
 Ուկրայնայում: Համաձայն այդ ծրարի, առաջին
 տասը տարիների ընթացքում տարեկան տասը հազար
 ընտանիք հող պիտի ստանար Ուկրայնայում: Նախ-
 նական ծախքերը պիտի հողար իշխանութիւնը: Ըստ
 սովորութեան, դեռ գործի չանցած, խնդրի շուրջ
 բարձրացաւ ահալին աղմուկ: Բայց երբ գործի ան-
 ցան, սարը ծնեց մուկ:

«Հրէական Հանրապետութիւն» ստեղծելու համար

ամենից առաջ հարկաւոր է հող: Որտեղից գտնել այդ հողը: Իշխանութիւնը ենթադրում է, որ Ուկրայինայում բաւականաչափ ազատ հող կայ և ուղում է այնտեղ մի նոր Պաղեստին ստեղծել: Սախայն, Մոսկւայի այդ ծրագրի ղէմ ծառանում է Ուկրայինայի և Ղրիմի Յիւդ- այս անգամ իր թիկունքում ունենալով տեղական ժողովուրդը: Բանից դուրս է գալիս, որ Ուկրայինայի հողային Փոնդը չի բաւականացնում բուն ուկրայինացիներին և այսօր ուժի հարիւր հազար հողազուրկ ուկրայնացի կայ: Հնարաւոր բան է այդպիսի պայմաններում Ուկրայինայում նոր հանրապետութեան համար հող յատկացնել: Եւ Մոսկւան հրատարում է իր նախնական ծրագրից՝ տեղափոխելով՝ Հարաւային Ռուսաստանում ընդամենը 7800 ընտանիք հրէաներ: Մինչդեռ հարիւր հազարաւոր մարդիկ յայտնաբերւած իշխանութեան տւած խոստումների հետ՝ օր օրի վրա սպասում են, որ հերթը հասնելու է իրենց:

Իրութիւնը փրկելու համար խորհրդային իշխանութիւնը յայտնում է մի նոր ծրագիր — հրէական հանրապետութիւնը Ուկրայինայից տեղափոխելու: Հեռաւոր Արեւելք—Բիրսկի շրջանը, որտեղ ազատ հող շատ կայ: Բայց այդ ծրագիրը ցնորական է, թէկուզ, հէնց այն պատճառով, որ պահանջում է նկայական դուրսբերել, որոնք գոյութիւն չունեն խորհրդային դրամարկներում: Եւ հրէա ժողովուրդը շարունակում է մնալ երեսի վրա՝ անել ու անճար վիճակում: Հասկա-

նալի չէ՞, որ բոլշեիկեան լուծը այդ ժողովրդի համար պակաս ատելի չէ քան բուն ռուս ժողովրդի համար: Եւ հրէա ժողովրդի գաւակները պակաս եռանդով չեն կուել կոմունիստական լուծը թոթափելու համար: Կարելի է բազմաթիւ օրինակներ բերել. ո՞ւմ գնդակով ստապալեց հրէա Ուրիցկին — Հիւսիսային Ռուսաստանի սարսափն ու գերեզմանափորը. ո՞ւմ էր դահճին խփողը. ո՞չ — մի տաղանդաւոր հրէա մտաւորական պատանի, դժբախտ Կաննեզիտերը, որը ո՞չ մի կուսակցութեան չէր պատկանում և ներշնչւած էր դահճապետի՝ գաղանթիւններին վերջ տալու և իր ժողովրդի անունը արատաւորումից փրկելու գիտակցութեամբ:

Մի այլ օրինակ. ո՞վ էր Ֆանիի Կապլանը — բոլշեիկմի շունչ ու հողի տւող ռուս Լենինի վրն ձեռք բարձրացնողը. ո՞ւմ էր. ո՞չ — նա էլ հրէա էր:

Բայց այդ մոռացում է, ինչպէս մոռացել են և ցարական ռեժիմի ստեղծած դժոխային պայմանները հրէաների համար:

Յիշուած է միայն այն փաստը, որ հրէաները համեմատաբար աչքի ընկնող դեր են կատարում կոմունիստական կուսակցութեան և խորհրդային իշխանութեան մէջ: Յիշուած է՝ մեղաբերու համար հրէաներին՝ խորհրդային ռեժիմը պաշտպանելու գիտաւորութեան մէջ: Այն ինչ այդ ռեժիմի է հրէա ժողովրդի գերեզմանափորը:

Ա. ԱՍՏԱՄԱՍԵԱՆ

Տ Ա Ր Ե Դ Ա Ր Ձ Ի Ա Ռ Թ Ի Ի

Պորհրդային տասնամեկներով տարին սկսեց ընդդիմադիրների հաշիւարարով: Պրախուսւած 15րդ համադումարի որոշումներով՝ Ստալին — Բուխարին խմբակը ոչ մէկ միջոցի առաջ կանգ չառաւ քայքայելու և ոչնչացնելու համար խապտա ընդդիմադիր ուժերը: Տրոցկիի բուր կողմակիցները յայտարարեցին օրէնքից դուրս և նրանց հետ հաշիւ մաքրելու դործը յանձնեց չեկաներին: Կուսակցութեան երէկւայ գեկալարներն ու կուտերը բունցին աքաղի ճամբան (Տրոցկի, Կամենսկ, Չինոյիկ, Ռադեկ, Սմիլգա, Ռակովսկի, Սաֆարով և այլն):

Ներկուսակցական պայքարի հետեւանքները ամբողջ տարի անընդհատ Պորհրդային Միութիւնը զգաց իր կաշի վրա: Որքան էլ որ խիստ քննադատութեան ենթարկէին ընդդիմադիրների տեսակէտները, յալթող մեծամասնութիւնը չէր կարող հաշի չառնել նրանց առաջարկումները: Թէկուզ հէնց այն պատճառով, որ ընդդիմադիրներն իրենց առաջարկներով ասելի էին համապատասխանում բոլշեիկմի ոգուն և էութեանը: Մի բան, որ շատ լաւ ըմբռնում էին կուսակցական գանձարանները: Եւ խորամանկ Ստալինի տեսողութիւնից էլ չլիքպեց:

Սոյն թւի փետրարին Պոլիտբիւրոն ներքին քաղաքականութեան մէջ մի շատ կարեւոր թեքում ունեցաւ: Արշաւամբ դէպի գիւղ — ահա այն նշանաբանը,

որ դուրեց ընդդիմադիրներից յափշտակած դրօշի վրա: Այս նոր ընթացքի իմաստն էր՝ «Կիւղում ուժեղացնել դասակարգային գիծը և պայքարը կենտրոնացնել գիւղացու հետ սերտանողների գէմ»:

Պէտք է ասել, որ խորհրդային քաղաքականութեան առանցքը եղել է միշտ և մնում է գիւղը: Գիւղի նշանն սակ էր, որ բոլշեիկները գիւղացին ճոր տնտեսական քաղաքականութեան — Նեպին և գիւղացու վերաբերմունքով ու ընթացքով է պայմանաւորում խորհրդային իշխանութեան բախտը: Պորհրդային երկիրներում գիւղը ոչ միայն հիմք է պետութեան և աղբիւր ժողովրդի գոյութեան, այլ և այդ պատճառով, որի վրա բոլշեիկներն ուղում են կառուցանել շտոլխալիստական արդիւնաբերութիւնը:

Նեպը որոշ հնարաւորութիւններ տւեց գիւղացուն բարձրացնել անտնտեսական ընդհանուր մակարդակը: Նա իրաւունք ստացաւ ազատ վաճառելու իր մթերքները. իշխանութիւնն այլևս իրաւունք չունէր բռնադրաւելու գիւղական ապրանքները և, որ գլխաւորն է, օրէնքի սակ դրեց գիւղացու տուրքի խնդիրը: Արտաքին առևտրի, երկրի ճարտարաբանութեան, քաղաքային կենսի բարեօրոնում և այլ հարցեր ստիպեցին, որ իշխանութիւնը ասելի ուշադիր լինի գիւղացիութեան հանդէպ, և 1925 թ. յայտարարեց ճերմանից դէպի գիւղ» նշանաբանը:

Սակայն, շնորհիւ բուլլեիկներէ ընդհանուր տնտեսական քաղաքականութեան և վարչաձեւի, միշտ էլ տեղի են ունեցել միեւնոյն գիւղացու և իշխանութեան միջև, որոնց յարաբերութիւնները գնալով աւելի ու աւելի արեւցին: Յարաբերութիւններէ ալ ալ սրումը առաջ է գալիս նրանից, որ երկրի ճարտարաւեստացումը տարւում է ոչ թէ գիւղատնտեսութեան հետ զուգընթաց, այլ ի նախը վերջինիս:

1926 թւից, երկրի արդիւնաբերութիւնը «վերաշինման» դրութիւնից անցնում է «կառուցողական» շրջան, որի համար անհրաժեշտ են հսկայական միջոցներ: Երկիրը գուրկ էր օտար դրամագլխից, որը առաջ էլ շատ մեծ դեր է կատարել Ռուսաստանի տնտեսական կենտրոն, և իշխանութիւնը ստիպուած էր սեփական միջոցներով ձեռնարկել այդ աշխատանքներին: Իսկ միջոցներ հնարաւոր էր ձեռք բերել երկրի ներսում՝ միայն կորզելով ժողովրդից, իսկ արտաքին աւելարթ միջոցով՝ արտահանելով գիւղատնտեսական մթերքներ:

Գիւղական ապրանքներ ստանալու համար, սակայն, հարկաւոր է գիւղին մտասալարել արդիւնաբերական ապրանքներ և արտադրութեան միջոցներ, որոնց սակաւութիւնն ու բարձր ինքնարժէքը չի գոհացնում գիւղացուն: Եւ, բացի ուղղակի և անուղղակի հարկերից, գիւղը պարտաւորւած, սովորականից շատ աւելի թանկ գներ է վճարում արդիւնաբերական ապրանքների համար: Դրան էլ պէտք է աւելացնել այն ճնշումներն ու խոչընդոտները, որ առաջացնում է զբառակարգային գիծ» կոչւած քաղաքականութիւնը:

Բնական է, որ գիւղացին պէտք է դիմեր ինքնապաշտպանութեան և իր տրամադրութեան տակ եղած միջոցներով պաշտպանէր իր իրաւունքներն ու շահերը: Այդ պայքարը շատ ցուցական կերպով երևան եկաւ հացամթերումների ժամանակ: Իշխանութիւնը, որ «տոցիալիստական շինարարութեան» յոյսերը կապել էր հացի յաղթի արտահանման հետ, ընկաւ անել կացութեան մէջ: Գիւղացին ապրանք և տնտեսական ապատութիւն էր պահանջում, իսկ իշխանութիւնը ոչ տրամադրելի ապանք ունէր, ոչ էլ կարող էր լայնացնել նէպը: Հետևաբար, պէտք է դիմէր նախկին քաղաքականութեան, այն է՝ բռնի միջոցներին:

Եւ ահա մի կողմից նշանակուած են յատուկ հացամթերման դիկտատորներ, որոնց իրաւունք է տրուում վարչական միջոցներով հաց կործնել գիւղից և միւս կողմից՝ կուսակցութեանը հրահանգուած է անողջ պայքար մղել գիւղական ունեւոր տարրերի դէմ: Այս էր սոյն թւի փետրաբեան քաղաքականութեան իմաստը, որը յիշեցնում է ռազմական կոմունիզմի շրջանը:

Նման գործիակերպի հետևանքը եղաւ այն, որ հրապարակից անյայտացաւ հացը, գիւղական խաւերում առաջ եկան զբաղմութիւններ, սահմանափակեց ցանքերի տարածութիւնը, գիւղացին գաղարեց մթերքներ արտահանել քաղաք, և քաղաքում ծայր տւին պոչերը: Գիւղի այս տրամադրութիւններին արձագանքեց նաև քաղաքը: Հացի պակասը ծայր տեճ խլրտուումների, ընդհանուր դժգոհութեան բանւորական շրջաններում, հակախորհրդային մտաւորականութեան շարժման և արդիւնաբերական ապրանքների սպառումի կրճատման ներքին շուկայում: Ընդհանուր տնտեսա-

կան տաղնապը էլ աւելի արեց հացամթերման գործի վիժման պատճառով: Արտաքին առևտրի հաշուկշիւք 145 միլիոն բուրլի բաց տուեց, և դժտարապ գործիւքների ու մեքենաների ներմուծումը: Դրութիւնը աւելի ծանրացաւ, երբ պարզեց, որ այս տարւայ հացի բերքը անյաղոց է. մասնաւանդ՝ հացաբեր շրջաններում՝ Ուկրայինա, Կովկաս և այլն:

Միայն ընդդիմադիրների կործանարար տեսակէտների կիրառումից հրաժարելով էլ, որ հնարաւոր էր դուրս գալ այդ փակուղուց: Եւ, իբրք, կենտ-կոմիտէի ընդհանուր ժողովը յուլիսին որոշեց մեղմացնել քաղաքականութիւնը գիւղի հանդէպ՝ վերջ տալով վարչական բռնի միջոցներին: Սակայն, շատ ուշ էր արդէն. Ռուսաստանը կանպոծ էր սովի յուրակային առջև և դուրս էր շարտուած հաց արտահանող երկրների շարքից: Մի դրութիւն, որի միակ պատճառը այն է, որ գիւղը շարունակում է բուլլեիկների աչքին մնալ որպէս գաղութ «տոցիալիստական» արդիւնաբերութեան համար:

Վերջին տեղեկութիւնների համաձայն, գիւղի գաղութայնացման դէմ մղուած է ուժեղ պայքար: Ռիկով-Կալինին բուլլը, ընդդէմ Ստալինի անհայտ քաղաքականութեան, ստաւարկում է դիմումի գնալ գիւղի նկատմամբ և տրամադրել աւելի լայն հնարաւորութիւններ, որպէսզի ժողովուրդը կարողանայ զարգացնել իր տնտեսութիւնը: «Պրաւդա»-ի 23 սեպտ. համարում, Կալինինի մի ճառի մէջ, ի միջի այլոց աւաւած է. «Կառավարութիւնը երբեք չի ձգտում քայքայել և ոչնչացնել ունեւոր գիւղացիութեան տնտեսութիւնները»: Մինչդեռ վերջին շրջանի ամբողջ պայքարը ունեւոր գիւղացու դէմ էր:

Նման աջ թեքումներ նկատուած են նաև Մոսկուայի կոմիտէի մէջ: Մի շարք ժողովներում կոմունիստները յայտարարել են, թէ պէտք է «թող տալ գիւղացուն իր տնտեսութիւնը զարգացնել իր ուղած ձևով», «պէտք է հաշուել այն մտքի հետ, թէ գիւղացիութիւնը կարող է և անհրաժեշտ է, որ հարստանայ», «հարուստ գիւղացիների թիւը որքան շատ լինի, այնքան աւելի կը բարւոքի բոլորիս դրութիւնը», «պէտք է ձգտել, որ աղքատ գիւղացիներն էլ հարստանան. որքան շուտ հարստանան աղքատն, այնքան աւելի լաւ կը լինի. ո՛չ մի օգուտ միլիոնաւոր աղքատ գիւղացիութիւնից»...

Առաջին անգամ չէ, որ լուր է եղ նման դատողութիւններ: Դեռ 1925 թ. գարնանն էր, որ Բուխարինը հրապարակ նետեց «հարստացէ՛ք» հռչակաւոր կոչը (որը, սակայն, շուտով ստիպուած եղաւ յետ վերցնել): Պարզ է, որ այդ նշանաբանի կիրառումը փոքրելու է համայնավարութեան մնացորդների հիմքերը և վերջնականորէն լինելու է տերմիդորի կիկնութիւնը, եթէ մինչ այդ տեղի չունենայ փլուզում: Զգալով այդ, Ստալինը վերջին ճիգերն է գործադրում չեղորացնելու համար աջ մտանգը: Արդէն Մոսկուայի կոմիտէի քարտուղարը փոխւած է և մի քանի անդամներ էլ հեռացուած (Մարոզ և ուրիշներ): Մոսկուայի կազմակերպութեան բոլոր անդամներին ուղղած նամակում -- կենտկոմը գտնուած է, որ այդ շրջանի ղեկավարներից շատերը «հաշուողական տրամադրութիւններ են ունեցել աջ թեքումների նկատմամբ, և հրահանգուած է

պայքարել կուսակցական այն տարրերի դէմ, որոնք «գրկում են ուղում ոչ թե խաթրին կպչել» («Պրաւ-դա», 19 հոկտ.) :

Այսպիսով, եթէ խորհրդային իշխանութեան գո-յութեան տասներորդ տարեկարծը լրացաւ Ստալին-Տրոցկու պայքարով, տասնևեօթորոր տարեկարծը վերջանում է Ստալին-Ռիկովի հակամարտութեամբ: Եթէ Տրոցկու ձախ թեքումները հետևանք էին տեսա-կան մարզանքների, Ռիկովի աղուծիւնը առաջանում է կեանքի կենսական պահանջների հարկադրանքի տակ:

Վերջին տարւայ ընթացքին խորհրդային ներքին կեանքում տեղի ունեցող կարևոր դէպքերից են Շախ-տիի դատավարութիւնը: Այդ դատին բուլճարիները առանձնապէս խոշոր նշանակութիւն ունին, որպէսզի ծածկեն իրենց տեսեսական քաղաքականութեան սնան-կութիւնը: Բայց որ ամենազօր և ամենատեսն չեկայի քիի տակ հակախորհրդային աշխատանք է տարւել և տարիներ շարունակ օգտագործել պետական մեքենան ու միջոցները, այդ կասկածից դուրս է: Բացի այդ, պարզեց, որ առաւ մտաւորականութեան մի մասը յուսէ է խորհրդային աշխատանքի այն պարզ պատճա-ռով, որ խորհին ոտու բուլճարիները «ուսական հո-ղամասերի հաւաքողներ» և նախկին Ռուսաստանի վերակազմողներ է տեսել:

Եթէ Շախտիի մեղադրեալները գործել են որպէս հակաշեղափոխականներ, ապա չուտով պարզեց, որ աւելի բարեխիղճ են իր գտնել և իրենց բուլճարիները: Դրոմի կենտրոնովի նախագահի դատավարութիւնը, Սոչիի և Սմոլենսկի ալլախեղումը և ինքնաքննադո-տութեան մերկացումները ըստ ամենայնի հաստատե-ցին, թէ խորհրդային տնտեսական ու վարչական մեքենայի նեխակ լինելը և թէ բուլճարիների ալան-թալանի քաղաքականութիւնն ու մերկ իշխանատնե-չութիւնը:

Քաղաքի և դիւղի ապրանքների գները անհամա-չափութիւնը վերացնելու բոլոր միջոցներն և անցնում են անյաշող: Այս տարի էլ «ճիւղատի» բերանները չմտեցան, այսինքն քաղաքի և դիւղի ապրանքների գները զարգացան հակառակ ուղղութեամբ: Դրան գուզընթաց առաջացել է մի նոր «ճիւղատ» շինարա-րութեան թափի և ժողովրդի ընկերային-մշակութա-յին զարգացման միջև: Դեռ 15րդ համագումարում կրօթիժանովսին բացականչում էր՝ «անհնգուրօթելի է, որ ընկերային-մշակութային գործի վրա արւած ծախսերը կազմեն շինարարութեան յատկացւած գու-մանքների 0,025%»: Տնտեսական զարգացումը մեծապէս պայմանաւորած է երկրի մշակոյթի յառաջդիմու-թեամբ: Այն ինչ, ինչպէս վիճակագրութիւնը ցոյց տւեց, ազգաբնակչութեան մէկ երրորդից աւելին դիւղ կարելով չի խմանում: Հայաստանում էլ «ժօտաւոր հա-չիւնըրով չափահաս ազգաբնակչութեան (16-35 տարե-կան) ութսուն տոկոսը անգրագէտ է» («Պ.Հ.» հոկտ. 17ի խմբագրականը): Այս երկրորդ միջատը վերացնե-լու համար էր, որ հրապարակ նետուց «մշակութային յեղափոխութիւն» նշանակաբեր և հրահանգեց գործա-դրել հարածային կարգով:

Պարզ է, որ միանգամից ոչ մշակութային յեղա-փոխութիւն տեղի կունենայ և ոչ էլ ժողովրդի մտաւոր ժաղարդակը կը բարձրանայ: Իսկ դպրոցական այն

քաղաքականութիւնը, որ առաջ են տանում բուլճարի-ները, այնքան էլ յոյսեր չի ներշնչում, թէ երբ և իցէ հնարաւոր կը դառնայ մշակութային յեղափոխութեան իրականացումը: Թէ տարրական ու միջնակարգ, և թ՛ւ բարձրագոյն դպրոցների գուները երեխաների և երի-տասարդութեան մեծ մասի առկն գաղ են: Գպրոցների սակաւութիւնը և ընկերային ու քաղաքական դրու-թիւնները շատերին թողնում են փողոցում:

Գիտենք, որ յառաջագէմ երկրներում պարտադիր է վեց տարին լրացած երեխային դպրոց ուղարկելը: Եթէ երեխաների թիւը շատ է, նոր դպրոց կամ ման-կապարտէզ են բացւում: Բայց յայտարարել, ինչպէս Երևանի գաւառաբաժինն է անում, թէ այլևս դիմում չի ընդունւում, որովհետև զբոյրոցներում և մանկա-պարտէզներում աշակերտութեան համար ոչ մի աղատ տեղ չկայ» («Պ. Հ.» 13 հոկտ.), այդ միայն խոր-հրդային իշխանութիւնը կարող է անել: Այդ ոչ թէ յեղափոխութիւն է, այլ մշակութային յետադիմու-թիւն:

Չյաշողով կնքել արտաքին փոխառութիւն և չբաւարարելով ներքին ջնջին փոխառութիւններով՝ բուլճարիները ամէն կերպ աշխատում են երկիր դրաւել օտար դրամագուլուններ: Ութ տարիների փորձը ցոյց տւեց, սակայն, որ օտարները որևէ չլուրջ ձեռնարկ Ռուսաստանում չեն սկսում, և նրանց ստանձնած մենաշնորհներն էլ կրում են ցրտ չարաչառութեան բնոյթ: Իսկ սակաւաթիւ խոշոր ձեռնարկատէրերն էլ հետզհետէ հարկադրւում են լքել գործը և պայմանը դժեմով՝ հեռանալ (Չխառուրի մարզանքը շահագոր-ծող Հարրիմանը): Մենաշնորհների խնդիրը կենսական նշանակութիւն ունի: Եւ որպէսզի օտար արտօնատէ-րերին համոզեն, սեպտեմբերին, խորհրդային կառա-վարութիւնը մի նոր օրէնքով աւելի լայն իրաւունքներ տւեց մենաշնորհ ստացողներին: Բուլճարիները համար այդ մի խոշոր սկզբունքային թեքում էր, որին տրա-մաքանօրէն պէտք է յաւորեն նորանոր գիշումներ:

Չնայած որ օտարների առջև դրած վաստակելու լայն հնարաւորութիւններ կան—Ռուսաստանի ներքին շուկայում կարելի է երեսուցից մինչև չորս հարիս տոկոս օգուտով ապրանք ծախել — մինչև հիմա մենաշնորհի լուրջ դիմումներ չատ քել կան: Օտար դրամատէրերը ոչ միայն կատարեալ ապահովութիւն են պահանջում, այլ և ուղում են մաքրել հին պարտ-քերի հաշիւները:

Գալով արտաքին քաղաքականութեան՝ այս տարի էլ նա յաշող չբաւարուեց Սորհրդային Միութեան համար:

15րդ համագումարում, Բուխարինը զեկուցելով արտաքին դրութեան մասին՝ գտնում էր, որ Չինաս-տանի յեղափոխութեան ընթացքը դասաւորում է յոշուտ իրենց և այդուհետ էլ, որ մահացու հարւած պէտք է հասցնել եւրոպական աշխարհակալութեանն ու դրամատիրութեանը: Յետագայ դէպքերը ցոյց տւին, որ չինական յեղափոխութիւնը դէպի խորհրդայինացում չընաց, այլ գուտ ազգային բնոյթ աւնելով՝ օդը ցնդեցրեց Բուխարինի արևելեան ուսովադատութիւնն ու Արևմուտքը ծուռկի բերելու երազները:

Շախտիի դէպքը պատճառ դարձաւ ոտու-գերմա-նական առևտրական բանակցութիւնների խցման և

յարարելութիւններ լարման: Գերմանիան այն երկրներէն է, որի պարուած վիճակն ու դժգոհութիւնը փորձուած են օգտագործել բոլլեակները և քաջելով իրենց կողմը՝ հանել զաշխարհիցներ կէս: Բայց այդ, բոլլեակները Գերմանիան համարուած են որպէս մի խողովակ, որով կարող է Ռուսաստան հոռել օտար գրամագլուխը: Եւ յետոյ, գերմանական զարգացած ճարտարաբանսը անհրաժեշտ է յետամնաց Ռուսաստանի հոռւ նիւթի մշակման համար: Այնպէս որ այդ խողովակ մեծ հարւած էր խորհրդային տնտեսութեան և արտաքին քաղաքականութեան համար:

Մինչև այս տարի, Մոսկուայի դիկտատորները Ազգերի Գաշնակցութիւնն ու եւրոպական բոլոր խորհրդաժողովներն ու դաշինքները համարուած էին դրամատիրութեան նոր գաւեր և աշխարհակալութեան միջոցներ: Հրաժարելով նման ձեռնարկների մասնակցութիւնից՝ բոլլեակներն ամէն կերպ պայքարուած էին և աշխատուած վիժեցնել բոլոր այդ ձեռնարկները: Սակայն, մեկուսացման վտանգն ու Եւրոպայի կայունացումը հարկադրեց խորհրդային իշխանութեան՝ իր ներկայացուցիչն ուղարկել ժընև՝ մասնակցելու դինաթափութեան յանձնաժողովին: Վերջերս էլ ստորագրեց Քելլոյի դաշինքը: Ինչ ղիտուածով ու անւան տակ էլ արւած լինեն այդ քայլերը, փաստ է, որ դրանք սկզբունքային նահանջ են:

Այս տարի խորհրդային իշխանութիւնը փոխեց իր վերաբերմունքը նաև քրդական հարցի նկատմամբ: Պաշտպանելով և հրահրելով մարդկցիների, սիւրբացիների և Չինաստանի ազգային շարժումները՝ բոլլեակները դատապարտուած էին քրդական ազատագրական ձգտումները, իբրև յետադիմական ու հակադիպոսական շարժում: Գաղտնիք չէր, որ այնտեղ սկզբունք ստորափակուած էր քաղաքական նպատակայնաբարութեան: Սակայն, քրդական շարժման յետադայ ծաւալումն ու զարգացումը և թիւրքիայի թեքումը դէպի արևմուտք, պարտադրեցին բոլլեակներին նոր լեզու բանցնել և փոտարանել քրդական յեղափոխութիւնը: Նշանակալից է, որ թիւրք-իսլամական դաշինքը կնքելու օրերին էր, որ խորհրդային

մամուլը զբաղեց ջիւրղերով՝ իր համակրանքը յայտնելով նրանց... Այնիճելի է, որ վաղը, եթէ Ռուսաստանի շահը պահանջի, կրեմլը նորից պատրաստ է ստանալ հոռուսահրւլու ազգերի ինքնորոշման սկզբունքը և սասը քրդական ժողովուրդը զոհարելու արիւննուշտ ֆեմալներին ու բռնակալ Մուսոլինիներին, ինչպէս զոհարեց հայերին...

Քաղաքական տեսակէտից ուշադրութեան արժանի են Պորհրդային Միութեան սահմաններում ապրող մահմետականութեան մէջ արմատացող համաքրիստոնական գաղափարները: Կարակի Վերադաս-յում արած մերկացումներն ու ազբեջանի թուրք կոմունիստներին մուսաւակաւաններին հետ գործակցելու մէջ 15րդ համագումարում ուղղւած մեղադրանքները ցոյց են տալիս, որ քեմալիզմի պաշտամունքը խորհրդային թրքութեան մէջ խիստ մեծ է և «ձգտուած կայ համաթուրքական պետութիւն ստեղծելու» (Կարակի եղբայրները):

Ինչպէս է, որ ներքին և արտաքին այնպիսիութիւնները պէտք է քօղարկէին յեղափոխական նշանաբաններով ու որոշումներով: Կոմիտեների վեցերորդ համաժողովը այս ամառ անշաւ «բարձր յեղափոխական տրամադրութիւնների տակ» և որոշեց դրամատիրութիւնը խորսակելով՝ հաստատել պրոլետարիատի դիկտատուրա և ձեռնարկել «սոցիալիզմի կառուցման»:

Բայց Ռուսաստանի փորձը վաղուց է զգաստացրել միջազգային աշխատանքութիւնը, և ոչ ոքին այլևս չեն շացնի Կոմիտեների ճոճեան որոշումները: Արտասահմանեան Կոմիտեների ընդհանուր վիճակն արդէն ցոյց է տալիս, որ, բացառութեամբ մէկ-երկու երկրների, կոմունիստները հետզհետէ թուլանում են և կորցնում իրենց նախկին դիրքերը: Ընդդիմադիր շարժումները, արհամարհողի ձեռնարկները, դրամական դեղծումները (Գերմանիայում և Տրանսայում) վերջնականապէս վարկաբեկել և քայքայել են Կոմիտեների ուժերը: Ինքը Բուխարինը համաժողովում խոստովանեց: որ կոմիտեների մէջ միասնականութիւնը դոյու-թիւն չունի և բացակայում է ընդհանուր բոլլեակիան ուղիղ գիծը:

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Ե Ո Ւ Ի Զ

Սրարչա՛ւ կընթանայ ամէն ինչ, «եամաշ-եամաշ» ներու դասական հայրենիքին մէջ: Գոնէ թուղթի վրա: Լատինատառ ալբուբենէն յետոյ, ահա նոր հրաման — կիրակին ընդունել իրեն շարաթական հանգստի օր, փոխանակ ուրբաթի: Օրինակիճը պատրաստ է արդէն: Աւելի ճիշտ՝ օրէնք է Մ. Քեմալի կամքը, և Ադդ. Մեծ ժողովը պարզապէս ձեւերը պիտի փրկէ, երկու ճառով և «միաձայն» քննարկութեամբ:

Քանի մը տարի առաջ, բոլորովին հակառակն էր որ կարգադրուեցան: Ոչ-իսլամներուն ալ պարտադրեցին ուրբաթ օրը դադարեցնել ամէն աշխատանք: Եւ յառաջ եկաւ անբնական կարգութիւն մը, — շատեր իրենց խանութներն ու գրասենեակները կը փակեն թէ

կիրակի և թէ ուրբաթ օրերը. ուրիշներ՝ ուրբաթ հանգիստ կընեն և կիրակի օրը կաշխատին, խանդակելով ընտանեկան կեանքն ալ: Հողեւոր իշխանութիւններն անդամ (քրիստոնեայ) շարքեցան, և յամաթ հանդիսաւոր պատարագները կը կատարեն ուրբաթ օր, որպէսզի բազմութիւն ունենան: Այս կամայականութիւնը պարտադրուեցաւ անոր համար որ իսլամ առևտրականները մնա չլրեն, այսինքն, քրիստոնեաները ուրբաթ օր աշխատելով առևտուր չընեն:

Հրամանը տալէ յետոյ, հրամայողներն ալ դժգոհ մնացին հետևանքներէն: Թիւրքերը մէջ կան օտար հաստատութիւններ, և կիրակին միջազգային օր է: Թիւրքիան հազար կապերով կապւած է արտասահմանի

հետ, և ակնբեր անկանոնութիւններ կը ծագին, մասնաւոր սեղանաւարական տեսակէտով: Կառավարութիւնը թոյլ տաւ որ մամուլն ալ արծարծէ ուրբաթի դադարին անպատեհութիւնները: Բայց աւելի կարեւոր գործեր կային և կը թւի թէ Մ. Բեմալ իր օրակարգը թէկեպոյցած ըլլալով, հրամայած է լուծել նաև շաբաթական հանգիստի խնդիրը:

Ազգ. Մեծ Ժողովը, որ բացեցաւ նոյնմբերին, իբրև օրակարգի ստաջին խնդիր՝ վաւերացուց լատինատառ այբուբենը: Յետոյ յաջորդաբար օրէնքի պիտի վերածէ այն ինչ որ գրի առած կամ տուն տաած է «Կադի»ն: Քեմալական երեսփոխանները մէկ պարտականութիւն միայն ունին, «Վապուլ» արտասանել ձեռամբարձ, և սիկառ մը վստել նրբանջեցին մէջ, մաղձը թափելու համար: Հաճելի՞ է այս պաշտօնը — այս կամ ոչ: Բայց մարդիկ իրենց կնոջն անգամ տէր չեն, քանի կիշիէ «խախտած պաշխ» (Բարունապետ): Հին թուրքերը և նորերէն շատեր այսպէս կը կոչէն Մ. Բեմալը, անհանդուրժելի դռնելով իր պարտադրած փոփոխութիւնները, որոնք վերջ վայր չըլեցին իսլամական դաւանանքն ու կարգ ու սարքը: Անոնք իրենց կատարութիւնը կը թափեն... տուներու մէջ, պատելով «Կազի»ին պատկերները, և արագ ողջերթ մաղթելով դէպի... «էնդի դէմը»: Յետոյ, դարձեալ մտք անխիղճները մէջ, կը լուծեն օտարափելի՞ վրէժ մը, — գնդաւորով կը ծակեն Մ. Բեմալի աչքերը, նոր թղթադրամներուն վրա...:

Ոչ թէ այս մանրամասնութիւնները, այլ շատ աւելի ծանր պարագաներ, գիտնալով է, անշուշտ, որ Մ. Բեմալ կ'աճապարէ լրացնել իր ծրագիրները, քանի որ է:

Այդ ծրագիրներուն ամենէն արմատականը, լատինական այբուբենը, ամբողջովին զրուած է իր միտքը: Ինչ որ 15 տարիէն պիտի ըլլար, մէկ տարւան մէջ կատարել կուզեն, արեւն-ջրտինք մտնելով: Ոչ միայն գործավարներ և երեսփոխաններ, այլ և Պետոյ և էն-կիւրիի թերթերուն խմբագիրները, որոնք իրենց տեղերէն շարժելու սովորութիւն չունէին, ելին պտոյտներ կը կատարեն այս միջոցին, մասնաւորապէս արևելեան նահանգներուն մէջ: Կը չըլլին ու կը նկարագրեն խառատակուռ Անտաղորուն, իբրև «Պալք»-ի երեսփոխաններ և իբրև խմբագիր: Անշուշտ բուն իսկ իրենց տեսածը չէ որ մամուլին կը յանձնեն, բայց վերջապէս կերթան, կը տեսնեն և բաներ մը գրի կ'առնեն:

Այսպէս, «Միլլիէթ»ի թղթակիցը կը նկարագրէ Պիթիւսը, պատմական վկայութիւն մըն ալ յիշելով անոր շինութեան մասին: Թղթակիցը սրտառու է միամտութեամբ կը պատմէ որ այդ յետամտաց քաղաքին մէջ ալ, «օրւան խնդիր է նոր այբուբենը: Այժմ մարդ չուտով սորվելու փափագ ունի»: Զափազանց զգուշութեամբ զրուած այդ շաբաթուրթիւններուն մէջ, կարելի է գտնել ուշադրաւ կէտեր ալ:

— «Տիարալէիի մէջ երեք լեզուներ կը խօսին, — քուրքերէն, արաբերէն և քրտերէն: Այնքան աւելի քրտերէն կը խօսի: Մինչդեռ Պիթիւսի մէջ քրտերէն և քուրքերէն միայն կը խօսի: Բազաքին մեծամասնութիւնը քրքայտօ է: Տաներու մէջ կ'ինքնը քրտերէն

չեն խօսիր բնաւ և նոյն իսկ շատեր չեն գիտեր գայն: Թուրքերէնը Ադրբէջանի արտասանութիւնը կը յիշեցնէ»:

... «Հոս կ'աղիքը հիգան գառառին մէջ կը հասնի: Ատեհօֆ (է՞րբ) աւելի շատ բերք կ'առնի և Պարսկաստան կը զրկի եղեր»:

Արտահոսի երեսփոխան և «Վազրթ»ի խմբագիր Մէհմետ Անր մէջ Ռիզէ բնական գեղեցկութիւնները նկարագրելէ յետոյ, կ'անցնի Կարս: Եւ կը պատմէ բաներ, որոնք, ամէն պարագայի մէջ, բաւական չեն «Թուրքի հոգին» լեցնելու:

— «Կարսի մասին օտարականի մը ունեցած առաջին տպաւորութիւնը այն է, որ այսօր աւերակ է ան:

... «Խոշոր քաղաքին փողոցները դատարկ են գրեթէ: Շուկաներու մէջ բաւական բազմութիւն կայ: Ռուսերէն սկսած սակալիութիւն մը Ադրբէջանեան լեզուով կը շարունակի: Բրտերէն և վրացերէն ալ կը խառնի»:

Իսկ հետեւալ հատածը՝ Ռիզէի մասին:

— «Հակառակ իր նիւթական անձնութեան, Ռիզէ իր շրջականներով Անտաղորուի ամենէն խիտ բնակչութիւնն ունի: Շատ ընտանիքներ կան, որ 15 գաւառ ունին: Կուսի թէ ժողովուրդը աղատ ըլլալով, դիւրին է գտնուի մեծցնել: Ռոբէ բացառութեամբ մը համաձայն, բազմամուսթեան պատճառն է ցեղային առելութեան հետևանքով գործած սպանութեանց վրէժը, որ պարտականութիւն կը համարեն: Ռիզէի շրջակայ տուներուն մեծ մասին դրամ առջև գերեզմաններ կան: Մայրերը դուրս ելած առեմ, այդ գերեզմանները ցոյց կուտան իրենց գաւակներուն, որպէսզի իրենց սպանուած եղբայրներուն կամ հայրերուն վրէժը լուծելու գաղափարը կը ներշնչեն: Այս մասին շատ յետաժամ է Ռիզէն»:

Ճամբորդներուն մէջ է նաև հուշակաւոր Ալաշեր, որ քանի տարիքը կ'առնէ, այնքան կը թանձրացնէ բերնի և գրէի թոյնը: Կարսի երեսփոխանը, «Միլլիէթ»ի մէջ նկարագրելով իր պտոյտը Կիւմիւշխանէն մինչև Բարբը, կը պատմէ:

— «Եօքը տարի առաջ, հուսկ անցած առեմն ոչ թէ ցանք ու անասուն, այլ մէկ մարդ իսկ տեսնելը բարեբախտութիւն էր: Հիմա տեղուր գործունեութիւն կը տիրէ: Կարսի կուսակալը ըստ թէ անասուններու թիւը տասնապատկած է եօքը տարիէ ի վեր: Սակայն երկրագործութիւնը նախնական վիճակի մէջ է: Հողագործական մեքենաներու հետքն իսկ չկայ:

... «Եօքը տարի առաջ տեսած Բաքերդս երդեհի աւերակներէ կը բաղկանար: Հայերը ամէն ինչ տակն ու վրա ըրած էին: Ժողովուրդը նոր կը վերադառնար: Շատեր վրաններու տակ կը բնակէին: Այս անգամ քաղաքը ինքնամոփոխած գտայ:

... «Երկու միլիոնական, պատմական գետեր Բոփ լեռներէն կը բղխին: Մէկը Արաքան է, միւրը՝ Եփրատը: Երկու գետերը բոյրերու պէս միկնոյն լեռնէն ծագում կ'առնեն: Եփրատը շատ մը երկիրներէ անցնելով կը թափի Պարսից Սոցը: Իսկ Արաքան՝ իմ ծննդավայրիս, Ֆէզդը գետին մէջ: Մէկը քրտերէնէն ծագում առնելով, արաբական երկրի մէջ վերջ կը գտնէ, իսկ միւսը ռուքն մինչև գաւառ Թուրքիոյ հաստատ

քիմ կը մնայ: Այս երկու բոյր գետերը եթէ լեզու ունենային, ինչե՞ր պիտի ըսէին...»:

Ինչե՞ր...

* * *

Բոլոր խմբագիր-երեսփոխանները շատ հարեանցիկ կը շօշափեն իրենց պատած շրջաններու տնտեսական կեանքը: Կասկած չկայ որ պատերազմէ հ կարճ կապել ներքին աւերումներու, Թշուառութեանց և սովի նկարագրութիւնները: Դեռ վերջերս, ճամբորդ մը նկարագրելով Սերաստիոյ վիճակը, կը շեշտէր.

« Բաղա՛քը կիսաւեր վիճակ ունի, կարծես երկրաշարժի բռնած ըլլայ: Հայոց տունները երկար ատենէ ի վեր նորագւած չըլլալով, հետզհետէ կը փլին: Թուրք ժողովուրդը խորապէս դժգոհ է ներկայ վիճակէն: Տարբերու ծանուօթիւնը մէկ կողմէ, սովի պատճառաւ քաղաքներու միւս կողմէ վրդաբլի կացութիւն մը ստեղծած են. այնպէս որ, եթէ ներկայ վարչականին դէմ ըմբոստութիւն մը ծագի, ժողովուրդը առանց բացառութեան պիտի միանայ ըմբոստներուն: Մ. Քեմալի վերջին այցելութիւնը փոխանակ խանդավառութիւն, գայրացուց բնակչութիւնը այն սնացիմ ծախքերուն համար որ միսկեցան գայն ընդունելու համար:

«Տիրող սովը յուսահատութեան մատնեց ընթացկայ Թուրք գիւղացիները, որոնք հարեւրներով քաղաք կը Թափին, կտոր մը հաց գտնելու համար: Եոյն կացութիւնը կը տիրէ նաև Գոնիայի, էրէւրի, Նէրսէի, Կեսարիոյ և ուրիշ շրջաններու մէջ»:

* * *

Քաղաքական հայածանքի նիւթ չգտնելով, էնկիւրիստանց աղմուկի, բայց ակներև հետևողականութեամբ կը շարունակէ իւրացնել Թուրքիոյ հայութեան ազգային (ինչպէս և անհատական) Հարատւութիւնները: Աւարի տեսակ չմնաց դաւաճանքով մէջ, և այժմ արտոճակները սրած են Պոլսոյ վրա: Հեռագհետէ կը մատնանչին հաստեթաբեր շէջքեր: Եստոնց մարտեցին Իերայի Խասեան վարժարանին մէկ սեփականութիւններ, որ կը թեթևցնէր պարտքին ծախքը: Զեռքէ կրաւ Թիհարէթ խանը, որուն տարեկան եկամտաւ, 7000 ոսկի, կը ծառայէր նոյնպէս կրթական նպատակներու: «Բարեխնամ» կառավարութիւնը Պատրիարքարանին պահանջած է դպրոցներու ըլմտացոյցը, ինչպէս և անոնց և եկեղեցիներու կալածանքներուն ցուցակները, անշուշտ բացերը գոցելու և եկամտները աւելցնելու համար...

Քեմալական կառավարութեան համար հատոյթի ապահով և տեսական ազդիւր մըն է «լեռալ» գոյցերու աւարը: Առաջին անգամ Իթթիհատն էր որ հիմքը դրաւ այդ լեռաքաղաքականութեան, Թուրքիոյ Հայ Ժողովուրդին բնաջնջումը իրականացնելէ յետոյ: 1915 Սեպ. 13ին, երբ վերջին կարուսանները կը քշէին դէպի անապատները, Հրատարակեցաւ մասնաւոր օրէնք մը (16 յօդուած), որուն համաձայն կառավարութիւնը կը ստանձնէր տարագրիւններու կալածանքներուն մասնակարարութիւնը: Անշուշտ մինչև անոնց վերադարձը... Այս օրէնքը վաւերացումն էր տեղահանութեան առաջին օրերուն Հրատարակած Հրահանգի մը (1915 Մայիս 14): Օրէնքին տրամադրութեամբ, կառավար-

ութիւնը ծախելով կամ օգտագործելով «լեռալ» գոյցերը, պիտի պահէր իբրև աւանդ: Երևութեամբ, կառավարութիւնը ինչդիպքը ինամակալ կը հուշակէր «այլուր փոխադրած» — և ճամբան կոտորած — հայերուն համար: Իսկ իրականին մէջ, օրէնքը խմբաբարձ էր այնպիսի վարպետութեամբ մը, որ եթէ պատահաբար մէկը ողջ մնացած ըլլար, չկարենար վերստանալ իր սեփականութիւնը: Այլպէս, չեղեալ կը հուշակէին տարագրիւններու տեղահանութեան թաւահանէն մէկ ամիս առաջ եղած վաճառման, փոխանցման նւ. գործողութիւնները:

Երբ Թուրքիա կորսնցուց պատերազմը և Իթթիհատը կործանեցաւ, շատ մը փախստականներ և ողջ մնացողներ ինքնաբերաբար տիրացան իրենց կալածանքներուն: Բայց զինազաղարի մեղրալուսնէն յետոյ, երբ քեմալականութիւնը գլուխ բարձրացուց, վերստին կազմակերպւած աւարը, այս անգամ աւելի անձարձակ: 1922 Սեպտեմբերին, շարքարար Նուրէտտին փաշա, հաղիկ Իզմիր ոտք դրած, Հրամանագրիներ կը Հրատարակէր իւրաքանչիւր քսանըջորս ժամը, ուրիշ բաներու կարգին նւիրագործելով «լեռալ» գոյցերու աւարը: 1923 Ապրիլ 15ին, նոր իշխանութիւնը կը Հրատարակէր օրէնք մը, որ բացորտապէս և վճռապէս կը նւիրագործէր Հայկական Հարստութեանց կողմուրը: Օրէնքին ճրգ յօդուածը կըսէ:

« Ե՛րբէ ձեռով ալ ըլլայ, կարած, հեռացած, կամ օտար երկիր, գրաւեալ վայր կամ Պալիս և շրջակաները փախչողներու շարժում և անշարժ ստացւածները լինալ գոյգ կը համարվին »:

Օրէնքին այս տրամադրութիւնը լայն ապաբեղք կը բանար կազմակերպւած աւագակութեան, և մինչև այսօր ալ, անո՛ր շնորհիւ է որ միշտ «լեռալ» գոյցեր «երևան կը հանին» և դրաման կենթարկին: Եթէ Խարբերոցի մը Պոլիս գացած էր Դաշնակցիներու դրաման տանէ, այլ ևս իրաւունք չունէր Խարբերոցի իր կալածին վրա, ինչպէս և 20-30 տարի առաջ արտասահման հաստատուած Հայու մը ստացածքը «լեռալ» կը համարէր: Իսկ բոլոր այն դաւաճակները որ Պոլիս կը բնակին, այլ ևս տէրը չեն իրենց հարստութեանց (գաւառի մէջ): Եստ չգործանանք այս իրողութեան վրա, որովհետև տակաւին Անատոլու մնացած բեկորներ ալ կան, որոնք ոչ միայն կորսնցուցած են իրենց կալածանքներ, այլ և զրկւած՝ սեփական տունէն, կամ խեղճուկ սենեակի մը արժանացած, վարձք վաճարելու պայմանով...

Չանագան բողոքներու վրա, կամ իբրև ռազմական խաղ, 1927 Օգոստոսին, կառավարութիւնը Հրատարակեց որոշմանագիր մը, որուն համաձայն պիտի վերագործէին այն գոյցերը, որոնք դրաւած էին 1924 Պրատոս 6էն յետոյ (լեզանի զաշնագրին վաւերացման թակահնդ): Բաւական մարդիկ սկսան օգուել այս որոշմանագրէն, բայց հազիւ նոյն տարւան Սեպտեմբերին հասած, կառավարութիւնը վարչական եղանակով խափանեց գայն, որովհետև կը տեսնէր թէ Հարեւրաւոր կողմուրանք ձեռքէ պիտի ելլէ:

Այնուհետև իրարու յարողեցին վարչական կարգադրութիւններ և Հրահանգներ, և մասնաւորապէս դատարաններուն արգիլեցաւ դատական որոշում տալ և վերադարձնել «փախստական» հայերու կալածանքները

(1927, Նոյ. 23): Գաղթականներու տեղաւորման տնօրէնը հրապարակաւ կը ճշտէր հետեւի կէտը.

— «Հայ և յայն փախստականներու այն տուները որ կառավարութեան կողմէ գրուած և գաղթականներու բնակութեան յտկացած են, ո՛ր և է կերպով չեն կրնար պարպուի: Այս մասին վնասական իրաւակց եկած է մեզի և դատական իշխանութեանց»:

Այս քաղաքականութեան մասնաւորապէս նուն կուտար «Սալքը», միակ խմբակցութիւնը, որուն կը հանդուրժէ Մ. Բեմալ և որ ամբողջովին կազմած է իր հաւատարմներէն: Այդ կազմակերպութեան 1927 Նոյ. 23ի համազումարէն անմիջապէս յետոյ, մասնաւոր Քսիպ ստացաւ հայկական կալածներու աւարտութիւնը, տարածելով նաև Պոլսոյ ազգային կալածներուն վրա:

Քիչ առաջ յիշեցինք թէ կառավարութիւնը ազգային կալածներու ցուցակը պահանջած է Պատրիարքարանէն: Անգամ մըն ալ ապացուցանելու համար թէ ո՛րքան չարաշուք հետևանքներ կրնայ ունենալ այդ պահանջը, յիշենք ուշադրաւ պարզապէս մը. —

1922 Փետրուարին, կառավարութիւնը օրէնք մը հրատարակեց, որով կըրնուէր «քարոյական անձնաւորութեան» սկզբունքը և կը հրաւիրէր համայնքները՝ իրենց անունին արձանադրել տալ կալածները, որոնք արձանադրուած էին անհատներու վրա, ի չզոյ՛է այդպիսի օրէնքի մը: Այս առթիւ պահանջեց նաև այդ ազգապատկան կալածներուն մասնաւորան ցուցակը:

Դիմումներ եղան, ցուցակները տրեցան, բայց արձանադրութիւնները չարազրեցան. որովհետև կառավարութիւնը կը պահանջէր որ անհատները ուղղակի դիմեն և «իրենց» կալածները փոխանցեն քարոյական անձնաւորութեանց:

Այդ ազգային կալածներու մեծ մասը արձանագրուած է սուրբերու վրա (Ս. Յովհաննէս, Ս. Գրիգոր Լուսաորիչ ևն), որոնք գոյութիւն չունին, կամ իսկապէս անհատներու վրա, որոնք փախստական կը համարուին այսօր (Կիւլպէնկեան ևն):

Այս հրէշային խաղին արդիւնքը այն եղաւ որ, կառավարութիւնը օգուտեցաւ միամտօրէն ներկայացուած ցուցակներէն, և գրաւեց ինչ որ աչքէ վերիպած էր:

Մ Ե Ր Զ Ո Հ Ե Ր Ը

Յ. ՂԱՐԱԳԻՈՋԵԱՆ-ՈՒՆԵՐՆԻԿԵԱՆ

Ամիսներ առաջ, Նոր-Նախիջևանում, սրտի պայթիւնից վախճանել է Իոնի չրլանի դաշնակցական լաւագոյն գործիչներից մէկը՝ ընկ. Յ. Ղարագէոզեան-Ուներնիկեանը: Նրան ճանաչողը չի կարող առանց խորունկ կեզծի կարգաւ այս լուրը:

Ընկ. Ուներնիկեանը Նոր-Նախիջևանցի էր. աւարտել էր տեղի քաղաքային դպրոցը և վաղ պատանեւորութիւնէ մտել ծառայութեան աւելարկան մի տան մէջ. չքաւոր ընտանիքի գաւակ էր: Բայց աւելարկան ասպարէզը նրան չկլանեց. նրա միտքը աւելի զբաղւած էր դրքով ու հասարակական ինքնիշխումով, քան խաւնութի հաշիւներով: Շուտով նա աչքի ընկաւ իր գործակալատար պաշտօնակիցների մէջ, իբրև եռանդուն կազմակերպիչ: Նրա և մի քանի ուրիշ ընկերների ջանքերով կազմեց Նախիջևանի գործակալատարների միութիւնը, որ ուժեղ արհեստակցական միութիւններից մէկն էր: Յովհաննէսը մինչև վերջ մնաց նրա ուղին:

1903-4 թւականներին, մանաւանդ, եկեղեցական կալածների գրաւումից յետոյ, հայ-թրքական ընդհարումների ժամանակ, Նոր-Նախիջևանը դարձել էր քաջութեան և իրենց կամքով եկած դաշնակցականների կենտրոն: Այստեղ էին Հ. Նուրստանը, Ա. Իսահակեանը: Դաշնակցութեան մէջ գործօն մասնակցութիւն ունէր Մինաս Բերբերեանը: Երիտասարդութիւնը անխորք դաշնակցական էր. թեմական դպրոցը ամբողջովին Դաշնակցութեան մթնոլորտում էր ապրում: Ոգևորութեան, անասման յափշտակումի օրեր էին: Յովհաննէսը արբեցած էր այդ մթնոլորտով: Եւ հէնց որ սկսեց ոռոսական յեղափոխութիւնը 1905-ին, նա

արդէն առաջին շարքերում էր: Մի քանի ընկերների հետ՝ Յակոբ Տէր-Յակոբեան, Գր. Բեդլեան և այլն՝ հիմք դրեց «Նոր-Կեանք» գրական-հասարակական շարժաթերթի, որ աչքի ընկնող դեր կատարեց Հարաւային Ռուսաստանի հայութեան մէջ և փակեց միայն 1907 թ. կառավարութեան հրամանով: «Նոր-Կեանք»-ով էր, որ ժողովրդական դարձան վահան Տէրեանն ու Շուշանիկ Կուրլինեանը, որոնք իրենց լաւագոյն բանաստեղծութիւններից շատերը այդտեղ հրատարակեցին: Յովհաննէսը իր նուրբ գրական ճաշակով ու քաղցր ընկերական քննադատութեամբ կարողանում էր հաւաքել մարդկանց թերթի շուրջը:

«Նոր-Կեանք»-ի խափանումից յետոյ Յովհաննէսն աքտրուեց և ապա արձակեց միայն պատերազմի նախօրեակին, երբ վերադառնալով ծննդավայր՝ մտու կօօպերատիւների մէջ, իբրև հաշուապահ և կազմակերպիչ: Այստեղ էլ երևան բերեց բարեխիղճ ու եռանդուն գործունէութիւն: Տարած էր աւելի խաղաղ մշակութային ու անտեսական աշխատանքներով:

Ռուսական յեղափոխութիւնից յետոյ, Յովհաննէսի առջև բացեց գործունէութեան աւելի լայն ասպարէզ: Նա այլևս հեղինակաւոր կօօպերատոր էր և Հայաստանի Կօօպերատիւների Միութեան՝ Հայկօօպի գործունեայ ներկայացուցիչը Իոնի ջրհանում: Ինչևիհան յեղաշրջումից յետոյ նա անուան Հայաստան, միշտ միևնոյն գործունէութեամբ, ուր մնաց մինչև Հայաստանի խորհրդայնացումը՝ կատարելով Հայկօօպի կողմից կարևոր յանձնարարութիւններ: Ապա տեսնում ենք նրան Պոլսում, իբրև Հայկօօպի պաշտօնետ, վերջը՝ Ռուստով-Նախիջևանում՝ նոյն ասպարէզով: Այստեղ էլ գտաւ իր մահը:

Համեստ, անաղմուկ, դէբքի ու փառքի յետևից

չվաղող՝ Յովհաննէսը, առանց ընկրկելու, կատարում էր այն պարտականութիւնը, որ կհանքը դնում էր իր ուսերին: Եւ կատարում էր սիրով ու անձնագրահարմար:

ԿԱՐԿԱՌՑԻ ԳԱԼՕՆ (ՎՌՈՇԵՒ)

(Գալուստ Պոքոսեան)

Միջնահասակ, բարեձև կազմածքով, դրաւիչ ու խոհուն աչքերով, մշտապարթ ու կրողի հոգիով — ահա Գալօն: Մարդկանց ճանչնալու արատեսութիւնն ու անոնց հետ վարելու արանձնի շնորհքն ունէր: Ինչպէս ժողովուրդը կրակ էր իր իսկ հետ, երբիս էր, մեծի հետ՝ մեծ և տղամարդու հետ՝ տղամարդ:

Բնակութեան այս գծերը, որ շատ անհրաժեշտ են հասարակական գործիչի մը, հնարաւորութիւն կր տային Գալօնի լինել ամէն խաւի մարդկանց հետ, լսել անոնց ցաւերն ու պահանջները ու դառնալ սրտացաւ խորհրդատու, իրաւարար մը կամ հրամայող ընկեր ու բարեկամ մը:

Անշահաւէր էր իր գործունէութեան մէջ և ոգևորւած ու ոգևորուած ամէն առթիւ: Վճռականութեամբ չէր շեշտէր, բայց իր դէմ ցցած ամէն հարց յարմար եղանակով լուծելու կամքը երբեք չպակեց անոր:

Տարբական կրթութեան սահմանէն ան դուրս չէր անցնէր անոր ձեռք բերած ուսումը, բայց բազմակողմանի հետաքրքրութիւնը ընդլայնէր էին անոր մտաւոր հորիզոնն ու ճոխացուցէր պաշարը: Զարթմատութիւնը իր բնակութեան տիրող դրոշմն էր և այդ պատճառով ալ սիրելի էր բոլորին: Տնտեսապէս բարեկեցիկ էր, և այդ գայն կը զարմնէր աւելի համարձակ ու անվախ իր բոլոր քայլերու մէջ ու տիրական յաշտ հայ և քերտ հարևաններուն, թէև երբեք զգացնել չէր ստար այդ:

Գալօն ծնած է Կարկու դաւառակի Մկր զիւղի մէջ: Ը. Յ. Դաշնակցութեան շարքերը մտած 1905 թ.ին: 1904 թ.ին սկսեալ, երբ կուսակցական կեանքը կանոնաւոր հիմքերու վրա կը դրուէ ու կը կազմուի Լեռնապարի կոմիտէութիւն, Կարկուը այդ կոմիտէութեան մէջ կը դրուէ իր առանձնայատուկ տեղը, շնորհիւ մասնաւորապէս իր լեռնային անտառի կերթին: Խնձորուտ գիւղը, այս դաւառի գիւղերէն մէկը՝ շատ խոշոր առաւելութիւններ ունէր, որպէս ժամանակաւոր հանգստեան վայր յոգնած խումբերու ու գինապահեստի պապհով տեղ մը: Կարելի է ըսել, թէ ոչ մէկ գիւղուր ու յեղափոխական գործիչ չէ եղեր, որ կարճ կամ երկար ժամանակով գործած ու չըլած լինի Վանի շրջանը, մասնաւորապէս Լեռնապարի կոմիտէութեան մէջ և անգամ մը հանդիպած չլինի Խնձորուտ: Վերջինս լեռնային ճանապարհներով յարաբերութեան մէջ էր Մոկաց, Սպարկերտի և Շէնձորի հետ: Փրոստայական խումբերու և դաշնակցական գործիչներու այս յաճախակի հանդիպումները, բնականաբար, իրենց դրական արդիւնքը պիտի ունենային: Եւ, իրապէս, գլխաւորաբար, առով պիտի արցատրել այն, որ Կարկուը վաղ ժամանակէն Ֆէտայական խումբերուն տեւր էր գիւղերներ և դաւառակը գարձեր էր ամենապատահելի շրջաններէն մէկը Լեռնապարի կոմիտէութեան մէջ:

Գալօն թէև Ֆէտայական խումբերու մէջ չէ եղեր, բայց ամենակենսունակ և ծծւած կուսակցականն էր այդ շրջանի: Կարելի է ըսել Կարկուը, անթաղանթ-տեւրեան վերածուելն մինչև 1915թ., իր կուսակցական գործերու ղեկավարութիւնը յանձնէր էր Գալօնին:

1904թ., Արթամարի թեմի ազգային ու կրթական գործերն ընկան Դաշնակցութեան հակազուրի տակ: Մինչ այդ, թեմը կր վարէր այս կամ այն տեղապահը ըստ իր հայեցողութեան: Ազգային Սահմանադրութիւնը չէր գործադրուէր: Դաշնակցութիւնը կեանքի կոչեց Սահմանադրութիւնը և համեմատական ընտրութեան հիմունքով կազմեց թեմի երեսփոխանական ժողովը, ուր իրենց ձայնն ունէին թեմը կազմող ինը դաւառներն ու դաւառակիները: Գալօն Կարկուը կը ներկայացնէր այդ ժողովի մէջ:

Կարկուը, որ ունէր ընդամենը 19 լեռնային գիւղ 470 տնով, մէկն էր Տաճկաստանի այն դաւառակներէն, որու ժողովուրդը ամենէն շատ կը կրէր կառավարութեան և քերտ չէլիւրու, բէկերու և աղանձերու հալածանքներն ու հարստահարութիւնները: Ան կը հեծէր անօրինակ տուրքերու ու տարապարհակ աշխատանքներու ծանրութեան տակ: Պատկերը կը լրանայ, և թէ անկցնէնք, որ շրջանը ամենապակասաւոր և անբերրի մէկն էր: Այս յարիները ծնեցուցեր էին այլ շարիքներ, որոնք թեմէն էր սալաֆի վաշխատանական դրուութիւնը: Հայ գիւղերին իր մտքով տարուա աշխատանքի արդիւնքը, մէկ-երկու օրուան մէջ, նոյնութեամբ, կը յանձնէր քերտ և հայ սալաֆտարներուն, կսկիծր հողու և գայլոյթը ատամներու մէջ սեղմած: Կերացնել կամ դունէ թեմակցներն այս դրուութիւնը, ինչպէս նաև տարապարհակ աշխատանքներու չափը, Դաշնակցութեան համար, այն օրերուն, հերթական խնդիր էր: Եւ աշխատանքը այդ ուղղութեամբ տարեկաւ մեծ եռանդով: Գալօն ոգին էր այդ աշխատանքի:

1910թ. Արթամարի թեմի երեսփոխանական ժողովը որոշեց փակել թեմի միջնակարգ դասարան-ընթացը ու անոր վրա ծախսած դրամով որոնալ, սկզբի շրջանին, տարրական 6-ամեայ և 6-ամեայ դպրոցներ, իսկ յետագային՝ կարևոր դաւառներու մէջ, բարձրագոյն նախակրթարաններ 8-ամեայ ծրագրով: Գալօն մէկն էր անոնցմէ, որ ոչինչ չիմայեց դպրոցներու թիւը թեմի մէջ շտապելու և օծուելու լապաղոյն և ներկած ուսուցիչներով: Իր դաւառի նման յետ ընկած վայրի մը մէջ, ստալին տարին իսկ, իր քաջախիւնարի տակ, բացեցան հինգ գիւղական դպրոցներ: Գիւղեցիկ օրինակ մը տալու համար իր համապատասխաններուն, իր գիւղին մէջ, որ 13 տնէ էր բաղկացած, առաջին հերթին բացաւ դպրոց մը ու յանձն առաւ վճարել կրթական տուրքի առաւելագոյն չափը:

Թէ Սահմանադրութեանն առաջ և թէ յետոյ, դաշնակցական գործիչներու արդարամտութեան, խզիչ և վճռականութեան հմայքն այնքան էր բարձրացրել Լեռնապարի մէջ, որ հայ և քերտ ժողովուրդը — ի հարկէ, ճնշած մասը — անխոր կը դիմէր իր շրջանի կուսակցական (դաշնակցական) ղեկավար անձնաւորութեանց, զբեթէ բոլոր վիճելի խնդիրներու համար, լինէին անոնք երկու հայու, հայու ու քերտի, կամ երկու քրտերի միջև: Դաշնակցական այդ գործիչներու տները, կամ գիւղերած տեղերը մէկ-մէկ

դատարաններ էին դարձած, ուր քանի մը ժամայ մէջ կը վճռէին այնպիսի դատական խնդիրներ, որոնք պետական պաշտօնատեսներու մէջ տարիներով քաջջլած էին: Գալօն ընդհանուրի աշխին հեղինակութիւն հասարակ դործիչ ու դատաւոր մըն էր: Անոր հմայքն ու ազդեցութիւնը կարելի է բնորոշել հետեւեալ օրինակով:

Անպամ մը, Թափառաւորիկ աշի գարնող զերտութիւն մէկը, խիստ դժգոյ Օսմանեան Սահմանադրութիւնէն, հայերու հետ ունեցած իր մէկ խօսակցութեան ընթացքին, զայրոյթով կը բացականչէ.

— Ալլահ վըբէլ, Ալլահ վըբէլ, Գալօն Սկուրի նա բու ա, տէ հիւրիաթ նա բուա: (Աստուած վկայ, Աստուած վկայ, էթէ Միղորի Գալօ չլիւնէր, Սահմանադրութիւն չպիտի լինէր):

Գալօն անփոխարինելի ոյժ մըն էր կազմակերպական և ժողովրդի զինման ու ինքնապաշտպանութեան գործերու համար իր դաւատի մէջ: Նախ՝ պէտք է շեշտել, որ Գալօնակցութեան բացի այլ կուսակցութիւն գոյութիւն չունէր այնտեղ: Այդպէս էին նաև հարեան գաւառները, ուր ամբողջ երեսասարդութիւնը, զրեթէ առանց բացառութեան, կուսակցական շարքերու մէջ էր: Ինքնապաշտպանութիւնը ու ժողովրդի պիտան հարցերը առաջ տարեցան Գալօնի անխնայան ճիզներու ու ղեկավարութեան ներքոյ: Ձէնք կը հայթայթէր ոչ միայն իր գաւառին, այլ և հարեան շրջանին՝ Շէնձորին:

Գալօն իր որոշ ընկերներու հետ վարեց Կարկառի յեղափոխական, հասարակական, կրթական գործերը մինչև համաշխարհային պատերազմը:

Պատերազմի յայտարարութեանը յաջորդեցին գորակոչի պարբերական հրամանները: Օրթակոչի կենթարկէին ոչ միայն զինուորական տարիքի մէջ եղողները, այլ 13-50 ու նոյնիսկ 60 տարեկանները: Հայերն անորտուճ կերթային իրենց քաղաքացիական պարտականութիւնը կատարելու: Օրթակոչին 4-5 ամիս անցած՝ կառավարութիւնը, ինչպէս յայտնի է, արդէն սկսեց էր իրադրոծել իր հրէշային ծրագիրը: Ձէնքի տակ եղած և նոր հաւաքած բոլոր զինուորները, շնչին բացառութեամբ, կը զինաթափէին և ամալիա (բանուորական) խմբերու մէջ կը կեդրոնացնէին: Տեղէ տեղ փոխադրութեան միջոցին հայ զինուորները խմբերով կոտորելու խուլ ծայները կը հասնէին մինչև հեռաւոր գաւառներն ու դաւառակները: Այսպիսի պայմաններու մէջ, բնականաբար, դասալքութիւնը պիտի ծաւալւէր: Եւ այդ եղաւ ոչ միայն հայերու, այլ և, առաւելապէս, անհետական տարրերու մէջ:

Դրութիւնը խիստ փափուկ էր: Գաւառական կուսակցական գործիչներու դերը պատասխանատու: Անոնք կանգնած էին դժգոհին երկընտրանքի մը առջև. կամ զիտակցաբար պիտի մղէին երեսասարդութիւնը դէպի մահ, կամ պիտի խաբարակէին դասալքութիւնը՝ ճշտելով իրենց վերաբերմունքը հանդէպ կառավարութեան և հրախրելով կառավարութեան ամբողջ զայրոյթը հայ ժողովրդի վրա: Կառավարութիւնն ալ իր սերթին իր դիրքի վրա պատրաստ կանգնած՝ կը սպասէր որևէ մի պատրաստ, հետևելու ու ոչնչացնելու համար այս կամ այն գաւառը: Գալօնը կը մնար ելք մը գտնել այս փակուղիէն դուրս գալու համար փոք-

րաթիւ զոհերով, փրկել մեծամասնութիւնը, որքան որ հնարաւոր է: Եւ ան շարունակ համոզեց ժողովրդին ենթարկել կառավարութեան հրամաններուն ու կարգադրութիւններուն: Բայց կառավարութիւնը, յանձինս Շէնձորի երեսասարդ-Թիւրք կուսակութեան պատկանող միւտիքի, որոշեց էր որ առաջ վերջ տալ այդ լեռնային յեղափոխական շրջանին ու պատժել վըբէլը: Ձէ՞ որ Կարկառը Գալօնակցութեան բոյներէն մէկն էր յայտ կառավարութեան և ինձորուտ գիւղը մէկը: Երկու անգամ հրդեհներ էր, Սահմանադրութեանն առաջ, Ֆէտայիներ պահելու համար:

Ու այդ որոշումով 1915թ. յունւար 30-ին Շէնձորի միւտիքը (Կարկառի վարի մասը կենթարկէր անոր) 24 ժանտարմով կը մտնէ Կարկառ ու կը պահանջէ բոլոր դասալք զինուորները յանձնել: Կը ներկայացնէ ցուցակ մը, որուն մէջ կային զրեթէ բոլոր այն անունները, որոնք դասնական ժամանակներուն զինուորաբարձ էին: Անոր հողը չէր, թէ անոնցմէ շատերը ճանապարհին, կամ այլուր սպանուած կամ անյայտ կորած էին: Գիւղացիները, բնականաբար, չէին կրնար կառավարութեան հրամանը կատարել, որի վրա, միւտիքի բռնանով, զիւղպետները անցթօրէն ծեծի ու խոշտանգումներու կենթարկեան և որոշ զիւղերու մէջ ալ հայ կիներ կը բռնաբարուն: Երեսասարդութիւնը, որ մինչ այդ Գալօն վախէն, զայրոյթը առամներու մէջ սեղմած՝ չէր ուզեր ընդհարում ստեղծել, չի տաներ այս անպատուութիւնը և կը փորձէ անսնել վայրագ ու լիբը միւտիքը: Ընդհարումը անխուսափելի կը դառնայ ժողովրդի և ժանտարմաներու միջև ու քանի մը ժանտարմ կը սպաննէ Շէնձորու և Միզր զիւղերու մէջ: Միւտիքն անմիջապէս կը քաշի, իր ժանտարմաներով դաւառի հարաւարմուտքն ընկած զերտ գիւղ մը և յայտնելով պատահածը զայնպէս՝ մին՝ կը պահանջէ բաւարար ոյժ պատժելու համար այս զոլաւանձն քառար:

Գանի մը օրուս մէջ զայնպէս անպատուութեան ենթակայ բոլոր ժանտարմաները հայակեր Հաջի Գաւրէշի, իսկ զերտ աշխրթներն ալ Մէյիտ-Ալիի տղայի առաջնորդութեամբ կը յարձակին Կարկառի վրա: Գալօն, տեսնելով որ բոլոր կամուրջները այլևս քանդուած են կառավարութեան հետ հասկացողութեան մը զայու համար, կը կազմակերպէ ինքնապաշտպան զինադրութիւնը: Ձնայած որ հարեան շրջանէն լաթօն իր զինուորներով եկած էր օգնութեան, թշնամու օրէ օր անդ ոյժի առջև, հայերը կարողացան միայն 7 օր դիմադրել: Յարկիները զիրքի անկումը վճռեց բախտը: Հայ կուղ ուժերը և ժողովուրդը բաժնեցան երկու մասի և կտրեցան իբրամէ անանցանելի միւսապատ լեռներով: Հայ զիւղերը մէկը մեւի ետևէն կը գրաւէին, կը թալանէին ու հոր ճարակ կը դառնային: Կահանուող և խուճապահար ժողովուրդը կեդրոնացեց էր Որից գիւղը և չգիտէր ի՞նչ ընել: Մէկ կողմը կանգնած էին միւսածածկ լեռները, միւսը՝ թշնամի Կարկառ զերտ գիւղը, իսկ միւս կողմէն կը յառաջանային մոլորեցած թիւրք զինուորներն ու զազաբաժ խուճանը: Բոլորի աչքերը ուղղուած էին դէպի Գալօն: Օգնութեան ուրիշ յոյս չկար. բոլոր շրջաններն ալ իրենց ինքնապաշտպանութեան ճնշող հողն ունէին: Մետասաներորդ ժամուն Գաւառէն, Միւտիքն Չաթայեանի առաջնորդու-

թեամբ, 12 զինուոր օգնութեան էին եկեր: Հարիւրաւոր ծերունիներու, մանուկներու, մայրերու լացն ու կոծը կը ծեծէր Գալօի հոգին: Այլ դրութեանէն զուրս զարմատածուններու մէջ էր խորատուգամ, երբ, յանկարծ, ելք դանոդի մը նման գոչեց.

— Ես կերթամ կուելու և մեռնելու իմ հարազատ հողի վրա, իմ օճակի մէջ, ով կուզէ թող ինձ հետևէ: Լացն ու կոծը մէկ ուղի կանոջ առին, և ժողովուրդը կը սպասէր, թէ ո՞վ պիտի հետևի անոր: Բայց, ափսո՛ս որ, սարսափը սմբեցուցեր էր բոլորին և, Գալօի հարազատներէն մէկի բացառութեամբ, ոչ ոք ընկերացաւ անոր: Յեղափոխականի ու դադափու-

րական հասարակական գործչի մը անվեհերութեամբ Գալօն արհամարհեց մաշը և «մա՛հ իմացեալ»-ներու ճամբան բռնեց: Անսասան կուռցաւ մինչև իր մօտիկի ու մատուցելի վերջին փամփուռը և նահատակեցաւ անվրդով հոգիով: Թշնամին, անոր հրացանի ձայնի լռեցնելու բաւական ժամանակ յետոյ միայն մօտեցաւ դիակին և կտրեց գլուխը:

Եւ այսօր, հարիւր հազարաւորներու պէս, Գալօն ալ գերեզման չունի ու իր փռչիացած մարմինը, քամիներու բերան ընկած, կը թևածէ հարազատ հողի վրա...

Ա. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

5 սեպտ. Երևան.

... Ձեզ դրել եմ իր ժամանակին էջմիածնին հասցրած նոր հարածի մասին*: Փաստորէն էջմիածին, իբրև ընդհանուր բնոյթ կրող մի կազմակերպութիւն, այլևս գոյութիւն չունի. Գերզոյն Սորհուրդը հռչակած է «հակաշեղափոխական» մարմին և իրապէս լուծւած է: Նրա ամենագործուն անդամները չէզոքացած են. Գիւտ եպիսկոպոսը թունաւորեց Հայէկայի կողմից, Գէորգ եպ. Չորեքեանը Արմաւիրի առաջնորդ նշանակելու պատրակով աքսորեց Հիւսիսային Կովկաս, Գարեգին եպ. Յովսէփեանին արտօնութիւն չեն տալիս արտասահման անցնելու...

Սրհրդային իշխանութիւնը ամէն կերպ աշխատում է, որ էջմիածինը ճանաչէ իրեն. չէ՞ որ ճառք գկայտերն կայսեր*: Այս նպատակով մարտնոյ կազմել և առաջարկել է կաթողիկոսին ստորագրել ու հրատարակել մի կոնդակ, որով խորհրդային իշխանութիւնը հռչակում է բարիք մարդկութեան և հայ ժողովրդի համար: Ի՞նչ էր մտած. «Վշտալի» Գէորգ Ե-ին անել, եթէ շատորագրել: Սեղծ մարդը բոլորովին ծերացել է և այլևս անոյժ է տոկալու գրկանքներին: էջմիածնի մօտիկ շրջանները հաւատարացնում են, որ շուտով այդ կոնդակը կուղարկել արտասահման: Այստեղ, սակայն, դրան արժէք տուողներ չառ չին են, որովհետև ամենքը գիտեն, որ բանութեամբ կորզւած թուղթ է: Արտասահմանում էլ, երևի կըմտնեն, թէ կաթողիկոսական այդ կոնդակը ի՞նչ արժէք ունի: Ինչի՞ք է պէտք զգացել մեր լեինական հետևորդներին համար կաթողիկոսի օրհնութիւնը, մարդ չի հասկանում: Երևի, գործերը, իբրք որ, շատ վատ է, որ սկսել են իրենց յոյսը դնել էջմիածնական օրհնութեան վրա:

Ստտութիւնները, բանտարկութիւնները և աքսորները շարունակում են: Գիտէք, անշուշտ, որ Հայաստանում բանտարկածները մեծ մասը աքսորւած է

Սիբեր և Հիւսիսային Ռուսաստան: Գաւթ Անանունը աքսորւած է Արխանգելսկի, իբրև շատ վտանգաւոր հակաշեղափոխական: Պատուաւոր աքսորի մէջ են և մեր «նախկին ղեկավարութեան» անդամները՝ Լուկաչինը, Աշ. Յովհաննիսեանը և ուրիշներ: Վերջինը Լենինգրադում է ապաշխարում իր մեղքերը: Վերջերս Երևանում նորից ձերբակալութիւններ եղան, բանտարկւեցին մօտ 25-30 բոլորովին անմեղ մարդիկ:

Հաստատում ենք Վահան Չերազի գնդակահարութիւնը Թիֆլիսի չէկայում: Նրա կինը կէս խելագար վիճակի մէջ է, և բարեկամները վախենում են, որ բոլորովին կը կորցնէ դատողութիւնը: Սեղծ երկտասարդի միակ յանցանքը այն էր, որ իրեն անկախ էր պահում ու չէր ծածկում ազգային համակրանքները: Որպէսզի կարողանան մահան պատիժ տալ, նրան մեղադրել են, որ իբր թէ, լրտեսութիւն է կատարել յօշուտ անգլիացիներին: Վահան Չերազ — և լրտեսութիւն... Բնորոշ է և այն, որ գնդակահարութիւնը կատարել է Վրաստանում. այդ էլ ցոյց է տալիս, թէ ի՞նչ ողորմելի մարդիկ են հայ կոմունիստ կուսակները...

Վերջին ամիսներս տաճկական սահմանազլիին ապրող քիւրդերի կողմից եղել են աւազակային յարձակումներ հայաբնակ գիւղերի վրա, որի հետևանքով կատարել են մի քանի գիւղացիների սպանութիւններ և անասունների թալան: Թիւրքերի կողմից կազմակերպւած են արշաւանքներ, երևի, փոքճելու համար խորհրդային իշխանութեան ատամը:

ՄԱՐԴ

ՁԱՆԳԵՉՈՒՐՈՒՄ

12 սեպտ., Գորիս.

Ես առիթ ունեցայ լինելու Ձանգեղուրի մի շաք գիւղերում, յատկապէս Ղափանում և Մեղրիի չըջանում: Հաղորդում եմ տպաւորութիւններս: Ժողովրդի տնտեսական դրութիւնը ծայր աստիճանի տագնապալի

*) Դժբախտաբար, այդ քաղաքացիները մեծ չենք ստացել: ԽՍԲ.

է. սոսկալի թանգութիւն է տիրում, հացը պակաս է. ամէն ոք յուսահատ կեանք է ապրում. ով կարողանում է, գնում է Բագու քանտրութեան: Ունեւոր կոմունիստներին առաջարկել է՝ կամ հրժարուիլ իրենց ունեցածքից կամ հեռանալ կուսակցութիւնից, որովհետև ստացածքը չի կարող հաշտեցնել կոմունիզմի հետ: Ոմանք հեռանում են կուսակցութիւնից, շատերին էլ բռնի են հեռացնում: Իսթաբուլի, կոմունիստների շարքերում տիրում է չիթթ ու դժգոհութիւն զեկավարներից. տրոցկիզմը այստեղ էլ արմատ է բռնում:

Աւագակութիւն խիստ, աճուիչ չափերի է հասել. իշխանութիւնը դիտակցարար թէ անուսութիւնից՝ միջոցներ ձեռք չի առնում: Ժողովուրդը համոզած է, որ կառավարութիւնը դիտամբ քաջախրում է աւագակութիւնը, որովհետև աւագակները տնտեսապէս քայքայում ու թալանում են ժողովուրդին, իսկ իշխանութեան ուղածն էլ հէնց այդ է. տնտեսապէս քայքայած ժողովուրդը դիմադրական կրող ու թափ չի ունենայ:

Ալքի ընկնող մտաւորական կամ իրենց շրջանում հեղինակութիւն ունեցող գործիչների մեծ մասը քաղաքացիական պատերազմի ժամանակ հեռացան: Այսպէս աւելի հանգիստ է գորուի ցուցանող չի լինի: Ոմանք էլ ապակենի են լեռները և ապրում են իբրև փախստական: Անցեալները Հանքերն էր եկել չէկայի պետ Միլիթ-Յովսէփեանը՝ համոզելու համար փախստականներին, որ իջնեն լեռներից:

Հայերի գինթափութիւնը շարունակուում է ուժեղ թափով, իսկ թուրքերը տենդազին գինուում են: Այս մասին մեր իշխանաւորները գլուխ չեն հոգնեցնում: Ազրբէջանի կոմունիստները աւելի ազգային են և ձեռքի տակից գինում են թուրքերին: Անգորայի գործակալներն էլ աշխատում են Ազրբէջանում:

ՆԵՏ

ԳԱՆՁԱԿԻ ՇՐՁԱՆՈՒՄ

2 հոկտ., Գանձակ.

Ես կարծում եմ, որ ո՛չ մի տեղ խորհրդային իշխանութիւնը այնքան քիչ ճշմարտագիտակցական չէ, որքան Ազրբէջանում: Օրինակի համար, առենք մեր Գանձակի գաւառը. նորից սանձը հարուստների ու բէգերի ձեռքին է, իսկ աղքատ գիւղացին ծառայ է ու երեսից ընկած: Նորից իշխանաւորների կողմից աղքատներին վերապահւած է մտրակն ու արհամարհանքը, իսկ «աղաներին»՝ պատիւն ու դրամը:

Այս տեսակէտից չափազանց հետաքրքրական էր Գանձակի գաւառի աղքատ գիւղացիների խորհրդաժողովը, որ տեղի ունեցաւ վերջերս: Գաւառից մի պաշտօնական, յղևուս ու շատ քաջարկեղու գեկուցումից յետոյ ժողովականների մի մասը այնպիսի յարձակումներ գործեց վարիչների դրա, որ վերջիններս բաւական վատ զգացին իրենց: Նմոյշի համար բերեմ մի քանի կտոր ժողովի արձանագրութիւններից:

Բախշաբերդի Ալդին Նաջաֆ Օղլին դառնորէն գանդաւաւում էր. «մեր գիւղում կոմունիստներն ու շուկեւոր գիւղացիները երկու հակառակորդ կողմեր են. կոմունիստները ճնշում են աղքատներին և հողանաւորում հարուստներին: Կոմունիստներից շատերը իրենք էլ հարուստ վաշխատուներ են»: Ու ինչք մի շարք անուններ կոմունիստների, որոնք գիւղում շահագործում են աշխատաւորներին:

Մէկ ուրիշը՝ Աբաս Ալի Օղլին ասում էր. «Առաջ քիչ բէգեր ունէինք, իսկ այժմ բէգերի թիւը խիստ շատացել է: Վարկերը տրուում են հարուստներին, իսկ շուկեւորներին՝ ոչինչ: Ալիւրը բաշխում է ուկորներին, իսկ աղքատներին՝ ոչ: Ելեմտական հիմնարկութիւնների պաշտօնեաները պաշտպանում են հարուստ մարդկանց չահերը: Դպրոցները դրամ ունեցողների համար են, իսկ աղքատների առջև փակ են:

Մի երրորդը՝ Իլիաս Աբաս Օղլին. «Առաջ այ պէս, աղքատ գիւղացիները մշակութիւն են անում հարուստ բուռնցքների մօտ՝ չարաչար շահագործելով վերջիններից: Դպրոցներում հարուստների և բուռնցքների գաւակներն են սովորում, իսկ աղքատ մշակների երէխաներին չեն ընդունում: Գարդ է, որ՝ հարուստները գիտեն կարգաւորել, իսկ աղքատները մտում են անգրագէտ: Ձուրը տալիս են հարուստներին, իսկ աղքատներին զրկում են: Աղքատների վարկ չի տրուում. վարկերը հասնում են հարուստներին»:

Եւ այսպէս՝ շատերը:

Սրան պէտք է աւելացնել և մի ուրիշ հանգամանք: Խորութիւնը դրուում է ո՛չ միայն հարուստների և աղքատների, այլ և թուրքերի և հայերի միջև: Վարկերը՝ թուրքերին, լաւ հողերը՝ թուրքերին, քարոցը՝ թուրքերին, ջուրը՝ թուրքերին: Ամէն բան՝ առաջ թուրքերին, և մնացորդը միայն՝ հայերին: Այսպէս է փաստը, թէ և եթէ բոլշևիկեան թերթերին հաւատաք, հաւասարութիւնը այս երկուսի կտարաբալ է: Թուրքը մեզ մօտ՝ տիրող ցեղ է, հայը՝ հպատակ:

Ասում են, Հայաստանում էլ այդպէս է. առաջնակարգ ուշադրութիւն դարձում է թուրքին, իսկ յետոյ միայն՝ հային: Հայաստանում աղբապէս է, որովհետև թուրքը ազգային փոքրամասնութիւն է, մեզ մօտ այդպէս է, որովհետև թուրքը ազգային մեծամասնութիւն է: Հիանալի կարգեր են, չէ՞...

ԳԱՆՁԱԿԵՅԻ

ԼԵՌՆԱՀԱՅՄԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբեր, Չանգեզուր.

Կատարեալ մեռելութիւն է տիրում Չանգեզուրում: Որ գիւղին որ մօտենում ես, լաց ու կոծ է լաւում: Բայր չաքի ընկնող մարդկանց ձերբակալել են և էլի ձերբակալում են: 1928 թ. բոլոր բանտարկաւածներին աքսորել են Ռուսաստանի խորքերը: Նամակներ է, որ ստացւում են բանտերից, թէ՛ մեզ աքսորեցին, այս ինչը մեռաւ, այն ինչը՝ խիւեց: Ժողովուրդին այնպէս են գինթափ արել, որ դանակ պահելու իրաւունք չկայ: Զննքը գուտ կոմունիստների մօտ է, մէկ էլ՝ թուրքերի: Կառավարութեան կողմից կարգադրութիւն

է արւած, որ գիշեր թէ ցերեկ Հայ գիւղերէ վրա կոմունիստներէց պահակներ հակեն: Շատ խիստ հրահողութիւն է կատարում: Մի գիւղից միւր գնալու համար պէտք է վկայական տոնել, թէ չ'է կր բանտարկեն: Այս կարգադրութիւնը եղած է օգոստոսի սկիզբից, երբ սկսեցին նոր հարածանքներ ու ձերբակալութիւններ:

Մ... գիւղում ինձ պատմեցին, որ այժմ չէկիստները գնանգան տարագնորով են պտտում գիւղերում՝ ինժներէրի, գիւղատնտեսի, բժշկի և այլն: Մի քանի շաբաթ առաջ, ինժներէրի տարագով, մէկը եկել է գիւղը, ժողով է արել, դէսից-դէսից խօսել, ապա, ժողովից յետոյ, գնացել է տէրտէրի տունը թէյ խմելու: Թէյի ժամանակ յարձակել է տէրտէրի վրա, խնկով կապել տւել տէրտէրի ոտն ու ձեռք և խայտառակ կերպով բարչ տալով գիւղի մէջ տեղը՝ ժողովըրդի դիմաց սկսել է ծեծել ու լպիւրջ խօսքերով հայնչել: Ժողովուրդին սպառնացել է, թէ դուք այսպիսի սրիկաներին ինչու էք ձեր մէջ պահում. կը նշանակէ դուք էլ այսպիսի սրիկաներ էք: Տէրտէրին փերցրել-տարել են, և ոչ մի լուր չկայ նրանից:

Գիւղացիները ահաբեկւած, շարած մնացել են: Արգէն աշունը անցնում է, բայց գիւղացիութիւնը հազիւ է շարժւում: Երանդ չկայ աշխատելու: Հոռնձն ու կան էլ մի բան չի տւել. բերքը այս տարի էլ վատ է: Մինչև հիմա տուրքերի ճնշումների, բռնութիւնների համար էր տանջւում ժողովուրդը, այժմ աւելացել է և կեանքի մտահոգութիւնը: Բիշ-չատ ծանօթ անձերից որի մասին որ հարցնում ես, բանտարկւած է, քաղաքում է, գնդակահարւած է:

Մի ուրիշ գիւղում պատմեցին, որ մի ամսից աւելի է, չլիտենք ի՞նչ է պատահել, շատ խիստ հակուղութիւն, բռնութիւն, ճնշում են դուրծ դնում ժողովուրդի վրին: Ժողովուրդն էլ ամէն բան մոռացած՝ հունձ, կալ, ամէն աշխատանք՝ էր պուխն է լալիս: Գեռ նոր Ռուսաստանի խորքերը քաղաքցիին 16 հոգի, որոնց մէջ և Գոռիմոորի տէրտէրին: Ասում են 400 հոգի էլ պիտի քաղաքն Ղափանից, Միսիանից, Զանգեզուրից ու Արևիքից:

Միայն գիւղացիք չէ, որ այսպէս դժգոհ են: Ժանւորներն էլ նոյն վիճակում են գտնւում: Հանքերի բանտարկութիւնը անասնի կայրոյթով էր խօսում կոմունիստներին մասին, իրենք լափում են հազարներ, իսկ հանքերի մշակութիւնը թողնւած է անխնամ, զարդ անոց, սրացաւ վարիչ չկայ. բանտները ժամանակին ոռճիկ չեն ստանում. կօօպերատիւներում ապրանք չկայ. բանտորի կերած հացը ցեխ է. շանը տաս՝ չի ուտի: Բողոքում են, բայց լսո՞ղ ով:

Աւագակութիւնը այնքան է սաստկացել, որ ապահովութիւնը բոլորովին վերացւած է: Կառավարութիւնը ո՛չ մի փորձ չի անում առաջն աննչլու: Հանդ գիւղից 14 ջրի և 2 ձի են գողացել: Ամենքը գիտեն գողերի ով լինելը. մի սրիկայ է, որին կառավարու-

թիւնը 3000 բուրլի էր տւել լրտեսութիւն անելու համար: Մարդը փողն էլ է առել, ձի ու ջրի էլ թաւանում է, բայց կառավարութիւնը ձայն չի հանում: Մի քանի շաբաթ առաջ պետական փոստն են կողոպտել. 20,000 ր. դրամ և Ֆուրգոնի ձիերն ու միջի ապրանքներն են տարել: Օր չի անցնում, որ թալանի կամ սպանութեան դէպք չպատահի: Աւագակները, մեծ մասամբ, գալիս են Արբէշլանից, ուր, ասում են, 2000 փախստականներ կան, որոնք պարսպում են թաւանով ու կողոպտւում: Աւագակների երկիւղից երթեւեկութիւնը դժարացել է: Բանի՛ քանի անգամ ժողովուրդը դիմել է կառավարութեան՝ խնդրելով ստաջն ատնել աւագակութեան: Պատասխանը միշտ լինում է, թէ՛ «ի՞նչ է ձեր նպատակը, ուղում էք, որ մենք աւագակների հետ կռիւ սիտենք, որ դուք էլ միացած նրանց՝ մեզ դո՞ւրս զէք երկրից: Այդ մտնացէք. թո՛ղ մի քիչ էլ մարդ սպանի կամ հարստութիւն փշանայ. դրա համար մենք կուի դուրս չենք դալ: Հանդիստ մնացէք, մենք գիտենք, թէ ինչպէս պէտք է ոչնչացնել աւագակութիւնը»...

Կեսնքը սոսկալի թանգ է. ցորենի փութը 4 ր. 50 կ. է, ալիւրը՝ 5 ր. 50 կ., այն էլ դժարութեամբ է ճարւում: Եզան կամ կովի հատը արժէ 100 ր., շաքարի ֆունտը՝ 50 կոպ., ամենահասարակ չիթը արշինը 70-80 կ.: Մասնաւոր առևտուրը բոլորովին վերջացած է, ամբողջ առևտուրը կօօպերատիւների ձեռքին է: Այնտեղ էլ նախ՝ ապրանք շատ քիչ է ճարւում, երկրորդ՝ ծախւում է միայն անդամներին, ոչ անդամները գուրկ են ամէն բարիքից: Կօօպերատիւների գործունէութիւնն էլ շատ վատ է. նորերս նորից 5 ր. 50-կան կոպէկ դրամ են առել անդամներից վնասները փակելու համար:

Վերջերս շատ են աշխատում կոյեկալու աշխատանք տարածել գիւղերում, կոմունաներ կազմակերպել, բայց չի յաջողւում: Գիւղացիք դժգոհ են դրանից և պահանջում են, որ անհատական սեփականութիւնը մնայ: Դարբարդում գիւղացիների խուրճերն են հաշւել և յետոյ թոյլ տւել կալւել, որ ըստ այնմ անեն պետութեան բաժինը:

Տուրքերի աւելացումը 3 անգամ և բռնազանձումը ժողովուրդին արգէն Հալից պցել է: Պետական տուրքերից բացի կայ և ինքնատուրքը՝ տարեկան ոչ պակաս, քան 100 բուրլ: Իւրաքանչիւր ծայնագուրկից գանձում են 16 ր.: Առևտրականների վրա արտապիւլի տուրք են դրել, այնպէս որ բոլոր խանութները փակւել են: Մասնաւոր առևտրականներից ոմանց էլ բանտարկել են կամ քաղաքել:

Երկիրը քաղքալւում է: Հազար երանի նրանց, որ իրանց աչքով չեն տեսնում մարդ երկրի և ժողովուրդի անկումը: Հազար ափսոս մեր պատական ժողովուրդին — կործանւում է:

ԱՆՅՈՐԴ

Ի Ր Ե Ն Ց Ի Ս Կ Բ Ե Ր Ա Ն Ո Վ

«Դրօշակ»-ի անցեալ համարում առաջ բերիմք Կամկուսի Բագլի կախիճի քարտուղար Միրզայեանի նառը, որ մտայլ գոյներով պատկերացնում էր Ազրբեյջանի ազգային փոխարարներու քիմները: Այս անգամ քաղաճմներ կը տամք Վրաստանի Կամկուսի քարտուղար Կախիանիի Վրաստանի Կամկուսի կենտրոնի 4րդ ընդհանուր ժողովարմ արտասանած նախից՝ Վրաստանում տիրող ազգային յարաբերութիւնների և, առեսարակ, ազգային հարցի մասին: Կախիանիի նաոր շոշափում է այն խնդիրները, որոնք բխում են Համա-միութեանկամ Կամկուսի համաժ բանաձևից Վրաստանի Կամկուսի և իշխանութեան գործունէութեան և ապագայ անկիւնների մասին: Կախիանիին առում է. —

«Կենտրոնի բանաձևում նշանակած է, որ մենք ունենք խոշոր նաճուճներ մշակութային շինարարութեան ասպարէզում, բայց և միևնոյն ժամանակ կայ տարբերութիւն իր զարգացումով գգայի չափով առաջ անցած և յետ մնացած, մասնաւորապէս ազգային փոքրամասնութիւնների և ինքնավարութիւն ունեցող դաւաճների աստիճանի միջև: Այս բանը, ընկերներ, բոլորովին անմիճելի է, բայց դրանից չպէտք է անել այն եզրակացութիւնը, որ անում է ընկ. Բարամձէն, որ, իբր թէ, կենտրոնը հրամայում է Օգուրգետիին կանգ առնել ու սպասել, մինչև որ միւս դաւաճները չհասնեն: Ո՛չ, մենք Օգուրգետիին չենք հրամայում սպասել: Թո՛ղ նա առաջ քայլէ, բայց միտամանակ մենք ճիշտ ենք թափում, որ յետ մնացած դաւաճներն աւելի արագ բարձրանան, քան որ մինչև այժմ բարձրացել են: Ահա թէ ինչ է հետևում դրանից, որովհետև երբ դրամի բաշխում է կատարում ըստ բիւրջի, չգիտեմ ինչու, այնպէս են կարծում. որ աւելի շատ տէրտէ է տալ նրան, ով առանց այն էլ ամենքան շատ ունի*): Եթէ շատ դպրոց ունես, շատ էլ դրամ պէտք է արւել քեզ. եթէ Հաւաքական տնտեսութիւն շատ ունես — շատ դրամ պէտք է ստանաս: Այս ձևով մենք ոչինչ չենք ստեղծի այն շրջաններում ու դաւաճներում, որոնք առանց այդ էլ յետ են մնում: Ես աւելի ունեցայ մտերմ ներկայ լինելու դրամի բաշխման անաշխարհական արդիւնաբերութեան կարիքների համար: Ասում էին թէ Արխագիայում տնայնաբերական արդիւնաբերութիւն չկայ, ուստի եթէ 5000 ռուբլի տանք, այդ էլ հերիք է նրանց: Ես նրանց ասացի. «Այդ բանը մեր օգտին չէ՝ որ խօսում է, որովհետև եթէ Արխագիայում տնայնաբերական սո-ցիալիստութիւն չկայ, պէտք է տալ ոչ թէ 5, այլ 25 Հազար, որպէսզի մի բան ստեղծել, իսկ յետոյ, երբ շահ ունենան, կարելի է զիջ տալ»:

«... Առնենք մի բոլորովին նոր օրինակ. սերմնա-ցանութեան կամարանիս էր ատաղաբուում. կազմւեց մի յանձնաժողով, ամէն բան պէտքերն պէս, բաժանե-

ցին դրամները, իսկ յետոյ յայտնի դարձաւ, որ Արխագիային դրամ չեն տւել, Ալխալալախին չեն տւել: Հարցնում եմ՝ ինչո՞ւ չեն տւել. ասում են, թէ՛ ուղղ չի եղել: Բայց, գուցէ, այնտեղ սերմնացանութեան կամպանիա էլ չի մղւել: Գուցէ մղւում է, գուցէ և չի մղւում: Պատասխանատու գործիչներ են այսպէս ասողները, դիւրանտեսական կոսովբացիակի չեղիմակաւոր զեկապարները. ինչի՛ է նման այդ: Ահիս յայտնի խայտառակութիւն է այդ, սկիսայտնի այլանշակումը մեր կեանքի:

Կենտր. կոմիտէն պարտաւորեցնում է մեզ, բիւրջի բաշխման ժամանակ, առաջին հերթին ուշադրութիւն դարձնել ազգային ինքնավարութիւնների վրա և Հաւել առնել նրանց պահանջները: Եթէ նրանց կողմից ժամանակին պահանջ էլ ներկայացել, բարի կէզք ներդրութիւն քաշելու և հարցնելու: Մենք այժմ անթիւ հեռախօս էլ ունենք, և եթէ դուք 10-15 րոպէի մէջ կարցումնիլ էք անում Մոսկւային, ինչո՞ւ չէք կարող հարցում ուղղել Արխագիային կամ Ալխալալախին, թէ ի՞նչ ունեն քրմա: Ո՞րտեղից է այդպիսի մտացկոտութիւնը որոշ գաւառների վերաբերմամբ: Դուսլա ! գալիս, որ Ալխալալաք ներկայացուցիչ չի ունեցել թիֆլիսում, և, ի հարկէ, աւելի են տւել այն գաւառների ու շրջանների ներկայացուցիչներին, որոնք սիրում են բոլորովին ի գոր տղը և շատ յանախ երկար քալիառել թիֆլիսում: Եթէ դրանից տեղական գործիչները եզրակացնում են, թէ ինչպան դաւաճների ներկայացուցիչները շատ են նստում թիֆլիսում, այնքան շատ կը ստանան—այդ ճիշտ չէ: Ախալալաքի և ուրիշ գաւառներին, որոնք աւելի զեչ են անհանգստացնում, աւելի շատ դրամ պէտք է տալ, որովհետև նշանակում է նրանք գործի մարդիկ են, գրաւած են գործնական աշխատանքով և ժամանակ չունեն երկաթուղիներով դէս ու դէն պատելու և մայրաքաղաք թիֆլիսում յաճախ լինելու (ծափեր): Հարկաւոր է ոմանց մեր ընկերներից յետ կիցնել նման սովորութիւններից: դրանից մեծ օգուտ կը լինի և՛ գաւառներին, և՛ կենտրոնին»:

«... Զի կարելի ասել, որ մենք չունենք մեծ քանակութեամբ թշնամի, ազգայնօրէն տրամադրած մասւորականութիւն, որը վշշում է և ուզում է փչացնել խորհրդային գործը: Մեր առջև դրած է այժմ պայքարի հարցը ազգայնութեան դէմ: Այժմ, երբ մենք խոշոր խնդիր ենք լուծում, երբ մենք ասպարէզից դուրս ենք մղում մասնաւոր արտարականին թէ՛ զաղաքում, և՛ թէ՛ գիւղում, երբ մենք գործ ենք տալիս դրամատիրական տարբերի վրա, ազգայնութեան դէմ պայքարելու հարցը դառնում է էլ աւելի կարևոր, որովհետև այդ բանը չի անցնում առանց գիտաբարութեան նրանց կողմից. նրանք սկսում են ծալ և երևան բերել իրենց վնասները գաղափարախօսութիւնը: Վրաստանում էլ կայ այդ բանը: Այդ ազգայնութեան

*) Բոլոր բնոգծումները մերն են: ԽՄԲ.

մէկ արտայայտութիւն է Գրիգորի Լորդկիպանիձէի նամակը: Նա մեր դասակարգային թշնամին է, բայց, դժբախտաբար, նման չեւտեր, ի հարկէ, ասելի փիչ չափով, կան և կոմունիստներին ոմանց մէջ: Այդ մասին ես խօսել եմ և նախընթաց ժողովում, կրկնում եմ և այժմ, որ այն կոմունիստները, որոնք դեռ ունեն նման չեւտեր, մտածեն ու ասեն, թէ՛ «եբբ ես հայկի եմ նայում, տեսնում եմ իմ դասակարգային թշնամի Գրիգոր Լորդկիպանիձէի ծուռ դէմքը»:

Ահա թէ ինչ է ստում Լորդկիպանիձէն. «Վրաստանի պետական կազմաւորման ընթացքը ինչեցնում է այն սովը, որը վառում է երկու կողմից կեղծ հասկացած միջազգայնականութեան կրակով՝ այրելով նրան: Վերինից մտք աչրում է ուսական Զակֆելդերացիայը*) կրակը, իսկ ներքեւից այրում է ուսավարի ու թուրքավարի, ո՛չ միջազգայնական, աուարկայօրէն հակալրացական լուծումը ազգային փոքրամասնութիւնների հարցին»:

Տեսնո՞ւմ էք ահա, նրան իսկի դիր չի դալիս այդ Զակֆելդերացիան, նրան բնաւ հաճելի չէ, որ մենք ունենք ազգային փոքրամասնութիւններ և որ մենք մեր ինքնավար հանրապետութիւնների՝ Աբխազիայի և Հարաւային-Օսետիայի հետ առաւելի լեզուով եմք յարաբերութիւն պահում: Նա համարում է, որ այդ բանը վնասում է մեր «ճեճ պետութեան»—Վրաստանին: Ինչպէ՞ս թէ՛ վրացիներ լեզուն և այն էլ Վրաստանի սահմաններում սահմանափակւած է: Նոյնիսկ մի քանի գաւառների հետ (Բորչալու, Ախալքալաք) գրագրութիւնը կատարում է ոչ վրացերէն: Նա դրանից հանում է իր եզրակացութիւնները: Այդ մարդը, որը որոշ ժամանակի համար եկել է Վրաստան, անպատկառութիւն ունի խորհուրդ ստաւ մեզ, թէ հարկաւոր չեն գանազան Զակ-երը — պէտք չէ Զակ-կոմհամալսարանը, պէտք չէ Զակուճարխողը: Ի դէպ է աւել, որ Զակուճարխողը**) ստեղծումը ընդունւած է կուսակցութեան որոշումով, որովհետև այդ մարմինը տեսնական հիմքը կը դնէ մեր Զակֆելդերացիայի տակ: Հարցի նման լուծումը, որ առաջ է քաշած Անդրկովկասի հանրապետութիւնների կողմից, բոլորովին ուղիղ է և առաջ է բերւած Անդրկովկաս-կան Դաշնակցութեան քաղաքական և տնտեսական բովանդակ կենսերով:

Ի վերջոյ այդ մարդը տալիս է հետեւեալ խորհուրդը. «Անհրաժեշտ է Անդրկովկասի Դաշնակցութեան վերացումը և Վրաստանի անմիջական մուտքը Պորհըզդային Միութեան մէջ՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով»: Այդ նշանակում է, Զակֆելդերացիան հարկաւոր չէ. ամէն ոք պէտք է իր տունը դնայ, իսկ Վրաստանը պէտք է մտնէ Պորհըզ. Միութեան մէջ՝ «դրանից բխող բոլոր հետեւանքներով»: Եւ միայն այդ դէպքում քաղաքացի Լորդկիպանիձէն խոստանում է

մեզ ամէն կարգի աջակցութիւն և օրինապահ կերպով առջ տայ խորհրդային սահմանադրութեան, պայքարէ նրա ամրապնդման համար»: Մենք պէտք է յայտարարենք այդ առթիւ, որ քաղաքացի Լորդկիպանիձէի օգնութիւնից հրաժարում ենք, բնաւ կարիք չունենք նրան, իսկ նման անձերին պէտք է պահելու հետուները: Երբ սկսում է նման վնասակար ու ոճրագործ շարժակրատութիւնը, մա մտաւ է գործում բանդարների և աշխատարների մէջ և հոյնիսկ երբեմն մանապարհ է գտնում և՛ դէպի մեր կուսակցութեան առանձին տարրերը, որոնք սկսում են շատախօսել, թէ Անդրկովկասեան մարմինները սեղմում են և այլն—այդ ամենը կարող է վնաս հասցնել մեր կուսակցութեան: Ահա թէ ինչու հարկաւոր է աղատել նման տարրերից, անհնայ կարել նրանց: Իսկ Վրաստանի կոմկուսը պէտք է շարունակէ անչեղ միջազգայնական քաղաքականութիւնը ընդդէմ սահմանափակ շովինիզմների՝ լինի վրացական, աբխազական թէ ուսական: Ինձ թւում է, որ մենք յաջողութիւն չենք ունենայ, եթէ չի կացած երկաթով չխարանենք ամէն տեսակ ազգայնականութիւնները: Երբ ստում են, թէ, օրինակի համար, Աբխազիայում երբեմն սխալ են վերաբերում դէպի մեր որոշումները, այդ պատասխան է այն բանի, որ մեր վրացական որոշ մարմինները սխալ, անգիտաբար են վարում ինքնավար հանրապետութիւնների հետ: Այդ անպայման իրողութիւն է: Իմ առաջ բխած փաստը և մի շարք օրինակներ ցոյց են տալիս, որ նրանց մտումը կազմում է որոշ անվտանգութիւն, և Աբխազիայում գտնում են այնպիսի կոմերիտասարդներ, որոնք ստում են, թէ Վրաստանը ճնշում է և թէ անհրաժեշտ է իրաւիրի սեփական համագումար և որոշել դուրս գալ Վրաստանից ու միանալ հորիքոյ: Միութեան: Ես կարծում եմ, որ արխազական կոմունիստների պարտականութիւնն է նոյն եւանդով, ինչպէս մեզ մօտ է, պայքարել արեւազ ազգայնականութեան արտայայտութիւնների դէմ: Ժիշտ է, այդ փոքրիկ, բայց անպիտան ազգայնականութիւն է, ինչպէս և վրացականը, որը արտայայտում է ինքնավարութիւնների վերաբերմամբ:

Այս կապակցութեամբ ես կը կամենայի ասել, թէ աւելի շատ ուշադրութիւն պէտք է դարձնել դանդաճների միջազգային դաստիարակութեան՝ անցկացնելով լինինեան քաղաքականութիւն և հնարաւորութիւն տալով ինքնավար հանրապետութիւններին սեփական մարմինի լեզուով հասկանալ այն, ինչ որ դուռն է այստեղից, և Աբխազիայի, Հար. Օսետիայի ու Աբխազիստանի ամէն կարգի ձեռնարկութիւններին այս ուղղութեամբ պէտք է ամէն կերպ աջակցել: Իսկ մեր ժողովրդական կրթութեան գործաւարաբիւնը, պէտք է ուղղակի ասել, այս խնդրում ցոյց են տալիս որոշ պահպանողականութիւն: Մեր Պետիքառը ուղղակի խայտառակ ձևով է վարում: Նա չի կիրառում կենդանի հրահանգները ազգային լեզուներով համապատասխան գրականութեան հրատարակութեան բնագաւառում: Այդ բանը չի կարելի թոյլ տալ ոչ մի պարագայում»:

*) Անդրկովկասեան դաշնակցութիւն:
**) Անդրկովկասեան ժողովրդական տնտեսութեան խորհուրդը:

Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

L'Arménie et Proche Orient.
par Fridjof Nansen, 1928, Paris.

Իրօք լաւ գիրք է, որ հռչակաւոր բեւեռախոյզ և այժմս Ազգերի Լիգայի զաղթականական գործի բարձր կոմիտար փր. Նանսէնը նւիրել է Մերձաւոր Արևելքին և, ի մասնաւորի, Հայաստանին ու հայ ժողովրդին:

Ազգերի Լիգայի յանձնարարութեամբ, մի խումբ մասնագէտների գլուխն անցած, այցելեց Հայաստան՝ ուսումնասիրելու համար Սարգաթապատի դաշտի ոռոգման գործնական հնարաւորութիւնները և, ինչպէս ինքն է ասում. «այնտեղ զննելու հիմքը «ազգային օջախ»-ի, որ Արևմտեան Եւրոպայի և Միացեալ Նահանգների պետութիւնները յանձնառու էին եղել տալու հայ ժողովրդին»: Այդ ճամբորդութեան արդիւնքն է ահա այս գիրքը:

Ճանապարհ ընկնելոց առաջ — ու յետոյ էլ — Նանսէնը խցճատօրէն ուսումնասիրել է ո՛չ միայն Հայաստանի ու հայ ժողովրդի արդէ վիճակը, այլ և նրա անցեալ պատմութիւնը: Եւ իր գրքում տալիս է թէ՛ տպաւորութիւններ ու խորհրդածութիւններ և թէ՛ բազմակողմանի փաստեր Հայաստանի անցեալից և այսօրայ զաղաքական, մշակութային ու տնտեսական պայմաններից: Եւ, ինչ որ կարևոր է, չունի խիստ աչք ծակող սխալներ, մի բան, որ սովորական է արևելեան ժողովուրդների մասին գրող եւրոպացիների մօտ:

Ճիշտ է, գրքի նիւթի մեծ մասը, մասնաւոր, հայ ընթերցողի համար, վաղուց յայտնի բաներ են, բայց օտար կարգազոյղ շատ հետաքրքրական տեղեկութիւններ կը ստանայ: Նանսէնը կարողացել է հակաչական նիւթից առնել կարևորը և, որ վիսաւորն է, ներկայացնել կենդանի ու ջրմած գագաթունքներով: Առարկայիս, չոր ու ցամաք փաստեր արձանագրող չէ՛. նա սպրում է իր տաճ նիւթով: Նրա գիրքը գրւած է սրտի արեւնով, ռուտի և վարպետի է ընթերցողին, յուզում անսահման, ըմբոստացնում բռնութեան և անարգարութեան դէմ: Եւ հեղինակը չի սխալւում, երբ յոյս է յայտնում, թէ՛ «այս էջերում հաւաքւած փաստերը կը շարժեն Եւրոպայի խիղճը»:

Ո՞րքը Եւրոպայի, բայց ոչ եւրոպական դիւանապետութեան:

Նանսէնը անողոք դատախազ է այս վերջինի վրին: Նա դատ է անում և դատաւարում է մեծ պետութիւնների խարդախ, սամարդի, ոճրագործ վերաբերումը դէպի հայերը: Իր պաշտպանութեան սուղ է առնում հայ ժողովուրդը, որի «ողբերական ճակատագիրը» ցաւ է պատճառում նրան, տոկոճութիւնն ու ստեղծագործող ոգին հիացնում են և անվհատ ու անսղծազոյժող ոգին հիացնում են և անվհատ ու անսղծազոյժող արդարութեան ու վերջնական յաղթանակի՝ պատկառանք են արդում: Մարդն է խօսում յանձին Նանսէնի, մեծ սրտի տէր մարդը, որի համար

ամէն բանից վեր է անհատը: Եւ երբ սա տառապում է, Նանսէնը չի կարող լռել ու չխարաղանել տառապանք պատճառողներին. կարեկցութեան ու մխիթարանքի այնքան ջնջող խօսքեր ունի տառապեալների համար...

Նանսէնի գիրքը, ուր լուսանկարւած է բազմաթիւ պատկերներով ու քարտէսներով, բաժանւած է իննը գլուխների: Առաջին չորսը նւիրւած է ճանապարհի տպաւորութիւններին՝ մինչև Պոլիս, Աթէնքում, Պարսում, Բաթումում ու Թիֆլիսում: Հրդ գլուխը տալիս է «մի քանի գրւազներ վրաստանի պատմութիւնից»: Մէջ ընդ մէջ, պատմական վերիջումներից ու քնարական սպրումներից յետոյ, արձանագրում են դէպքեր թրբական դատաւորութիւններից և զաղթականների կեանքից, ինչպէս նաև նկարագրում է զաղթականների համար կատարւած աշխատանքը: Յուզիչ խօսքեր ունի Նանսէնը հայ, ռուս և այլ տարագրիւնների մասին:

Յաջորդ գլուխները — V—IX — գրեթէ գրքի մէկ երրորդը նւիրւած են Նանսէնի և իր ընկերների ճանապարհորդութեան Հայաստանում: Նրանք պտտել են երկրի մեծ մասում — Լոռի, Շիրակ, Արարատեան դաշտ, Սևան, Դիլիջան: Ամէն տեղ գտել են խաղաղապառ ընդունելութիւն ժողովրդից: Մանօթացել են երկրի վիճակին, հողի յատկութեան, երկրագործութեան, տնտեսական հնարաւորութիւններին, ոռոգման պայմաններին, տեսել են հայկական գիւղերն ու քաղաքները, շփուել ժողովրդի հետ, հիացել նրա աշխատասիրութեան ու տոկոճութեան վրա...

Այս մասում Նանսէնը խօսում է Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող բազմաթիւ խնդիրների մասին — և՛ պատմութեան ու հնագիտութեան, և՛ արևեստի ու ճարտարապետութեան, և՛ բնութեան գեղեցկութիւններին, և՛ հայ ժողովրդի առաքելութիւնների, իջմիածնի ու Երևանի, վանքերի ու եկեղեցիներին, Սևանի ու՛ Հրաբազանի, երկերակայանների և առունների, Մարգարապատի ու զրոքերի, որբերի ու դպրոցների, մշակոյթի ու կրթութեան, կաթնուղիների ու կառավարութեան, երաժշտութեան ու պարի... Ապա տալիս է, ամփոփ գծերով, զոքերի ոռոգման ծրագիրը և կառավարութեան հետ ունեցած բանակցութիւնների պատմութիւնը: Եւ այս ամենը գրւած է հիւթեղ գրչով ու սրտի խորքից: Որով և զարմանալի չէ, որ գրքի այս մասը անմիջապէս թարգմանեց հայ մամուլը մէջ («Ճեռուպետ» և ուրիշներ):

Յուզիչ է Նանսէնի վերջին խօսքը Հայաստանից մեկնելիս: Գնացքը սուրում է Երևանից դէպի Թիֆլիս: «Ջուրինը ցուլաց ասողների արանքում, և իր արծաթէ շողերը լուսաւորում էին մշակւած արտերը և ապա անապատը ցամաքը: Մասնան ու Արագածը պարտաւում են խաւարով: Արարատեան դաշտը խաղաղ ներհում է լուռութեան մէջ՝ հայոց աստղազարդ երկնքի սուղ: Եւ Նանսէնի սիրտը ճմլւում է ցաւից ու յուզու-

միջ. «Որքա՞ն պայքարներ, տառպանք, թշուառութիւն և ինչքա՞ն ջիւղ տարիներ երջանկութիւն ու խաղաղութիւն: Տառապանքը մաքրագործում է նրանց, ու՛լքեր ոյժ ունեն դիմադրողներն: Կա՞յ արդեօք երկրագնդի երեսին մի ուրիշ ժողովուրդ, որը այնքա՞ն տառապէր և, սակայն, յաղողէր վերապրել: Եւ ի՞նչ վախճանի համար: Որպէսզի լքի ու դաւաճանի ֆէնց նրանցից, ու՛լքեր խոստումներ են արել Արդարութեան սրբազան անուհով:

Դո՛ւք, քաղաքագէտներ, դո՛ւք, պետական մարդիկ, մի կո՛ւմ թողէք մեծ-մեծ խօսքերը և մի՛ գրկէք մարդկութիւնը հաւատից, որ հակառակ ամէն բանի գեւ ևս գոյութիւն ունի ինչ որ սուրբ բան մի ժողովրդի ճակատագրի մէջ:

Անդորր ու հեղեօրէն՝ լուսինը ժպտում է վագոնի պատուհանից. այդ Արդարութիւնն է, որ որոնում ես գու, խեղճ մարդկային մըլիւն: Եւ ո՞ւր ես ուզում դանել նրան» (էջ 250):

Այնուհետև Նանսէնը մի ընդարձակ դրուխ (X) ներում է «Հայաստանի պատմութեան անդիփոմին»-նախնական ժամանակներից մինչև 19րդ դարը, տայիւն է ո՛չ միայն քաղաքական ոչ պէ՛րը, բնականաբար, շատ համառոտ կերպով, այլ և հայոց ներքին կեանքը, ընկերային վիճակը, մշակութիւնը, կրօնն ու արւեստը, առանձնապէս կանգ է առնում հայոց ճարտարագիտութեան վրա:

Եւ, վերջապէս, XI և վերջին դրուխը պատմութիւնն է 19րդ և 20րդ դարերի դէպքերի — ուսական քաղաքականութիւնը Պետրոս Մեծից սկսած, հայրական հարցը, Անգլիայի դերը արևելեան ինդուսի, բարեկութեանը միջակերպը, Վարդերը, հայ յեղափոխական շարժումը, Վիլհելմ-Արքայն շամիլի բարեկամութիւնը, Իթիհատի գործունէութիւնը, Արուսէ շամիլի խորտակումը, Ալանայի ջարդը, համաշխարհային պատերազմը, հայկական տեղահանութիւնն ու կոտորածը, ուսական յեղափոխութիւնը, Հայաստանի անկախութիւնը, խորհրդայնացումը, պետութիւնների և Ազգերի Լիգայի շարադէտ դերը հայերի նկատմամբ...

Նանսէնը մասնաւորապէս երկար կանգ է առնում 1915 թւականի դէպքերի վրա՝ տարով տեղահանութեան ու կոտորածների գրեթէ ամբողջական պատմութիւնը: Ու յետոյ, դատապետում է մեծ պետութիւնների նեղամիտ ու չա՛համոլ քաղաքականութիւնը՝ առանձնապէս ուժգնորէն՝ մերկացնելով ու մարակելով անգլիական պետական մարդկանց շնական արարքները: Յիշում է հայերին տրւած բազմաթիւ խոստումներ, որոնցից և ո՛չ մէկը չիրականացւեց: «Այս պարզունակ ու միամիտ մարդիկ, գրում է Նանսէնը հայերի մասին, որոնք ոչինչ չգիտէին մեծ քաղաքագիտութեան շուրջը կատարւած բաներից, հաւատում էին, որ խօսքը խօսք էր, մասնաւոր երբ տուր մեծ պետութիւններն էին»: Բայց մեծ պետութիւնները եսապաշտ են ու ստախօս. իրենց շահի համար պարտաստ վաճառելու ամէն սրբութիւն: «Այսպէ՛ս է Մերոպան: Այս կոյրը, որը, ըստ յունական առասպելի, թոյլ տեց, որ իրեն հրապուրէ մի եգ: Եւրոպացի լինելը պարծեւալիք բան չէ»:

Մասնաւոր, անգլիացի լինելը: Ի մէջև այլոց,

Նանսէնը առաջ է բերում Անգլիայի այժմայն վարչապետ պահպանողական Բոլդուինի և նախկին վարչապետ ազատական Ասկուիտի յայտնի նամակը, որով այդ պարոնները պահանջում էին Մեծ Բրիտանիայի ընկերակցական վարչապետ Մակ Դոնալդից միջոց չինայել՝ օգնելու հայ զաղթականներին: «Որովհետև, գրում էին նրանք, հայերը, իրենց տրւած խոստումներով, քաջալերել ու պատերազմի ընթացքին յարել են Դանսիկիցները դատին և որովհետև նրանք շատ են տանջել այդ դատի համար: 2. Որովհետև պատերազմի ընթացքին և դինազադարից յետոյ Դանսիկից և յարակից պետութեանց պետական մարդիկ, բազմաթիւ անգամներ, խոստացել են ապահովել հայ ազգի ապաստութիւնն ու անկախութիւնը: 3. Որովհետև Մեծ Բրիտանիան մասամբ պատասխանաւոր է օսմանեան հայերի վերջնական արտաքսման և ցրումի համար իցմիրի աւերումից յետոյ: 4. Որովհետև այն հինգ միլիոն ոսկին, որ թիւրքական կառավարութիւնը դրել էր Իերլինոս՝ 1915թ. և որը Դանսիկիցները գրաւեցին զինադադարից յետոյ, մեծ մասով (գուցէ և ամբողջութեամբ) հայերի դրամն էր» և այլն:

Այս նկատումներով, անգլիական երկու մեծ կուսակցութեանց պետերը, նախկին և ներկայ վարչապետները անհրաժեշտ էին համարում, որ «անգլիական կառավարութիւնը պարտական է առանց ուշացնելու տալ մի կարեւոր դո՛ւմար» հայ զաղթականութիւնը Հայաստանում տեղաւորելու համար: Որովհետև «մեր կարծիքով, ակներև է, որ հայերը բարոյական իրաւունք ունեն հատուցման այն յանձնառութիւնների համար, որ մենք ստանձնեցինք նրանց վերաբերմամբ և՛ որ, սակայն, չկատարեցինք»:

Այսքան պարզ և ի լուր աշխարհի տրւած խոստումը, թւում է, թէ պէտք է կատարէր առանց յապաղումի: «Բայց, գրում է Նանսէնը դատաւութեամբ, Աշխատաւորական կուսակցութիւնը ջիւղ յետոյ տապալուեց, և պահպանողականները պ. Բոլդուինի ղլխաւորութեամբ ձեռք առին իշխանութիւնը... Եւ պ. Բոլդուինի կառավարութիւնը բերեց որևէ բան անել յօդուտ հայ ժողովրդի կամ զաղթականների, որոնք, սակայն, «բարոյական իրաւունք» ունէին օժանդակութիւն ստանալու»:

Այսպէս են կառավարութիւնները: «Ըսկ Ազգերի Լիգան՝ պատասխանատուութեան զգացում չունի՛: Բազմաթիւ անգամներ ինդուսիով զաղթականական գործերի իր բարձր կոմիտարին բղքաղւելու հայերով, Ազգերի Լիգան, անկասկած, արգելք է եղել ուրիշ բարեացակամներին իրական օգնութիւն հասցնելու այս դժբախտներին, որովհետև ոչ ոք չէր կարող ենթադրել, թէ նա կարող է ընդհանել նման մի դատ՝ առանց որ պարտաւորութիւն դրայ բարի վախճանի հասցնելու, մասնաւոր էթ է նկատի առնենք, որ յանձնառու եղուցները մեծ պետութիւններն են: Ազգերի Լիգան կարծում է արդեօք, թէ կատարել է իր բոլոր պարտականութիւնները և խորհում է, թէ կարող է թողնել հայերին առանց դրանով խախտելու իր հեղինակութիւնն ու վարկը Արևելքում: Եւրոպայի ժողովուրդները, պետական մարդիկ հուցնել են այս յաւիտենական հարցը: Այդ բնական է: Նա նրանց մինչև այժմ միայն անսիրտութիւն է

յաւանտեան: Միակ հայ բարձր բաւական է արթնացնելու նրանց քնած խղճումը չզործարկած խոստումների մի ամբողջ շարքան, որը նրանք երբեք չեն մտածել լրջօրէն իրագործելու: Չէ՞ որ հարցը վերաբերում էր սոսկ մի փոքրիկ արհեստայն ժողովրդի, որը, սակայն, զուրկ էր նաւթի հորերից կամ ոսկու հանքերից:

Վա՛յ հայ ժողովրդին, որը խառնել է եւրոպական քաղաքականութեան մէջ: Շատ աւելի լաւ կը լինէր նրա համար, որ եթէ իր անունը ընաւ չարտասանէր եւրոպական որևէ է դիւանագէտի կողմից: Բայց հայ ժողովուրդը երբեք չի կորցրել իր յոյսը: Եւ սպասուելով հոռոտուն ու սովորուն աշխատանքի մէջ՝ նա սպասել է, սպասել է երկար: Եւ սպասում է միշտ» (էջ 364):

Հայ ժողովուրդը սպասում է: Ո՛չ մի դուաւորութիւն ու դուաճանութիւն չի խորնակել նրա յամառ կամքը — ո՛չ Թաւրթաթները, որոնք համար հայկական հարցը «այլևս գոյութիւն չունին», ո՛չ կլիմանսօսները, Ասիականներն ու Բողոքականները, որոնք ամենքի աչքի առնել, օրը ցերեկով, ստեցին ու խաբեցին, մի փոքրիկ ու դժբախտ ժողովուրդ, ո՛չ Մտայլներն ու Մուսթաֆա ֆեմալները, որոնք շարունակում են խաբել ու ոտնահարել Արդարութիւնը: «Որովհետեւ — մե՛ծ է Արդարութեան ոյժը, որը չի կարող չլայթել...»

Գրքի մանր սխալների վրա մենք չենք ծանրանայ: Արդարիտ սխալներ կան: Բայց նրանք կորուստ են աննշմար, և ընթերցողի ուշադրութիւնը մնում է միշտ դամաճ հիւթեղ նիւթի և հեղինակի ազնիւ դժգոյմտաւորների վրա: Մեր դարանքը դիւանագիտութիւնից, և այնքա՛ն հիստորիկականը «քաղաքակրթ Յերոպայից» արդեւէ չեն կարող լինել, որ Նանսէնի զիրքը համարենք օգտակար մի աշխատանք հայ ժողովրդի և Հայաստանի համար, ինչպէս և Նանսէնի գործը, որ ինչքա՛ն է համար իր արդիւնքներից, այս դուռնիկ ու նիւթապաշտ աշխարհում, մի փոքրիկ միտթարանք է բարտից Հայրենասէր հոգիների համար: Նշանակում է դեռ մարդկայնութեան հասկացողութիւնը մեռած չէ իսպառ... Ս. Վ.

«ДНИ», еженедельник под редакцией А. Ф. Керенского, Парижъ, №№ 1—9.

Ա. Կերենսկիի «Նիխ» օրաթերթը, որ մի քանի տարի շարունակ հրատարակում էր Բերլինում, սպաս Փարիզում, սեպտ. 9-ից սկսած լոյս է տեսնում իբրև շաբաթաթերթ: Փոփոխութիւնը վերաբերում է ո՛չ միայն արտաքինին, այլ և բովանդակութեան. առաջ «Նիխ»-ն գերազանցապէս գաղութային հրատարակութիւն էր, բերանը տարագրութեան որոշ հոսանքի, որ ծառայում էր ուսւ տարազիր զանգուածների կարիքներին, այժմ նրա նպատակը Երկրի մէջ՝ Ռուսաստանը: Նա մտնում է ընթերցանալ նոր ուղիով, ընդառաջ զնալ ուսուսական այն ներքին երրորդ ուժին, որը աստիճանաբար ձեռքազատում է քաղաքական թմբած վիճակից: Թեքթը ընդ պարտաւարում առաջնորդել արև. մէկին և ո՛չ ոքին Ռուսաստանում չի ուզում բռնադատել քաղաքական կամ դործնականաբար պատրաստ ծրարները: «Մեմբ սկազմներ չենք, այլ՝ սուկ օճան-

դակողներ նոր վերածնուող ուսմակար ու հանրապետական Ռուսաստանի՝ նրա հսկայական, ստեղծուող դործող ու ազատագրական աշխատանքի մէջ»: Թերթի դերն է «օգնել կազմակերպելու ամուր ու գործօն հասարակական կարծիք, որը ընդունակ լինի, վերջ է վերջոյ, երևան բերելու ուսուսական վերածնուող ուսմակարութեան վճռական կամքը: Ընկերային ու ազգային տեսակետով այլասար ուսուսական ուսմակարութեան բոլոր խաւերը այսօր պէտք է լարեն իրենց ուժերը՝ պայքարելու համար յօգուտ մէկ նպատակի՝ ժողովրդայնապետութեան վերակազմման: Տնտեսական և ընկերային բոլոր նախադրեանքները այդ բանի համար արդէն պատրաստ են: Պայտասում է միայն պահանջւած հոգեբանութիւնը՝ կամքի լարումը»: (Ա. Կերենսկիի առաջնորդող յօդուածից № 1-ում):

Եթէ թերթի խմբագրերը չըլինէր Ա. Կերենսկին, այս ծրարները, ինչպէս և մինչև այժմ լոյս տեսած համարները չէին գոհացնի դուած նպատակին. «նոր ուղիով». ընթանալու, դէմքով դէպի Ռուսաստան դառնալու, «կամքի լարում» առաջ բերելու համար բաւական չէ միայն՝ փաստեր ու վաւերագրերը տալու լուրիկիկան բռնապետութիւնը ինքնին փաստ է ու վաւերագիր», և ի՛նչ վաւերագիր. արտասահմանից ի՛նչ աւելի ցնցող փաստ կարելի է տալ, քան այն, որ խորհրդային հպատակը ամէն օր տեսնում է սեփական աչքերով: Բաւական չէ և «ժողովրդայնապետութեան վերականգնման» ընդհանուր նշանաբանը, ինչպէս և խորհրդատուի ու «օժանդակողի» դերը: Մեղ թուում է, որ խորհրդային լծի տակ տառապող զանգուածները կարելի էր անհիմ անել որոշ ու վճռական խօսքերի: Նրանց հարկաւոր է պայքարի ծրարներ, խանդավառ ու ոտքի հանող նշանաբաններ, «կամքը լարող» դործօն դրդիչներ, այսինքն այն, որով ուսւ յեղափոխականները ցարական իշխանութեան օրով Երկրի էին մտնում արտասահմանից:

Բացի այդ, այժմ արդէն չեն կարող գոհացնել ընդհանուր դատողութիւնները յետբողոքական Ռուսաստանի մասին. խորհրդային Միութիւնը իր 11 ամեայ գոյութեամբ մի փաստ է, որի հետևանքները կարելի չէ անտեսել: Առաջ են եկել ազգային ու տնտեսական որոշ յարաբերութիւններ ու հասկացողութիւններ, որոնք բուլեկներից յետոյ էլ կը մնան. ո՛չ միայն ստիչ դուռնիներ, այլ փետարարան յեղափոխութեան ստեղծած կարգերն սկսած չեն կարող վերականգնել ամբողջովին: Արտասահմանից Երկրին խօսք ուղող յեղափոխականը պէտք է ո՛չ միայն աշխատի շարժման մէջ զննլ զանգուածների կամքը, այլ և — հենց այդ կամքը շարժման մէջ զննելու համար — պէտք է առի, թէ ի՛նչ նպատակներ կհամար է պայքարի հրաւէր կարողում: «Նիխ»-ի զննադատական, բացասող մասը շատ ուժեղ է. դրականը, ընդհակառակը, չի կարող համարուել բաւարար:

Կայ և մի երրորդ պարզայայ. «կամքի լարումի» մտողը պէտք է, ամենից առաջ, ինքը կուռ և ամբողջական կամքով հանդէս գայ, ունենայ մէկ և չեղուած դէմք, մէկ դրօշակով: Թուում է, թէ այս տեսակէտից էլ՝ «Նիխ»-ն, իբրև ամբողջութիւն, չի կարող բաւարարել դուած նպատակին:

«Նիխ»-ն ունի, սակայն, մի անգնահատելի օտոււնութիւն. նրա ղեկավարը Ա. Կերենսկին է, որը

ինքնին և՛ ծրագիր է, և՛ դրօշակ, և՛ նշանաբան, և՛ կամք: Որքան էլ «չպարտաւորել առաջնորդել որևէ մէկին», Կերենակին չի կարող չառաջնորդել, չի կարող չառաջարկել զործի ծրագիր ու մարդկանց չմղել դէպի զործ: Եւ նրա առաջնորդող յօգաւածները, իրօք, մարտահրաւէր են՝ որոշ ծրագրով ու յատկադրով: «Այժմ Ռուսաստանում, գրում է նա (ՃՅ 6), թէ՛ գիւղում և թէ՛ քաղաքում, պէտք է... Հակառակ ամէն բանի, մասնակցել բոլոր քաղաքական ընտրական պայքարներին՝ խորհուրդների համագումարներին և տեղական խորհուրդներին: Թափանցել կօօպերատիւներին և իշխանութիւնից արտօնւած բոլոր ուրիշ տնտեսական կազմակերպութիւններին մէջ: Աշխատել բոլոր մշակութային ընկերութիւններին և խմբակների մէջ: Թէկուզ «նամակ խմբագրութիւններին» միջոցով մուտք գործել տեղական թերթերի մէջ: Պահանջել, որ գործադրի ապախն կոչւած «խորհրդային սահմանադրութեան» տարը: Մերկացնել խորհրդային ու կուսակցական աստրապները շարագործութիւնները՝ կու-

սակցական ինքնաքննադատութիւնը աստիճանաբար վերածելով տիրող կուսակցութեան քննադատութեան»: Սա արդէն «գործելակերպի պատրաստ ծրագիր է», առանց որի, կրկնում ենք, կարելի չէ ճերկեր մտնել կենդանի զործի քարոզով: Եւ երկրի ընթերցողը կը դնահատէ թերթի հէնց ա՛յս մասը և ոչ թէ «փաստերն ու վաւերագրերը», որոնք, որքան և ճոխ ու հեռաքրքրական, արժէքաւոր են առաւելապէս արտասահմանի ընթերցողի համար: Ս. Վ.

Ա Ձ Դ

Հ. Յ. Դ. Եգիպտոսի Շրջանային ժողովի որոշումով Տելեմաք Թիւրքինեանի, Յակոբ Նալպանեանի և Վահան Գասապեանի հետացած են Հ. Յ. Դաշնակցութեան շարքերէն:

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԳՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժնեգէինն է Փրանսայի, Յունաստանի, Բուլգարիայի, Ռումանիայի, Եւրոպական այլ երկիրների, Սիւրիայի և Պարսկական Ասորպատականի համար՝ 25 ֆրանս. ֆրանկ: Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պաղեստինի, Միջագետքի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած բոլոր երկիրների համար՝ երկու դոլար: Բաժանորդագրւել կարելի է իւրաքանչիւր ամսի «կգրից»:

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ա Կ Է

Եւ շուտով լայն կը տեսնէ «ԳՐՕՇԱԿ»-ի Մատենաշարի № 2 Վ. Լէվինսկիի ԸնդերձԱՐԱՐԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ Ե Ի ՃՆՇԻԱՅ ԺՈՂՎՈՒՐԴՆԵՐԸ Թարգմ. Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային յարաբերութիւնները կովկասում (խմբ.)	273
Թիւրքիայի մասին (Ս. Վրացեան)	275
Տնտեսական մակասում (Աշոտ-Արծրունի)	279
Հակաբերութիւնը Եորիքային Ռուսաստանում (Ա. Ասուածարեան)	284

Տարեդարձի առթիւ (Ա.)	287
Թիւրքիոյ շարք	290
Մեր գոհերը	293
Թղթակցութիւններ	296
Դրայտակամ	301

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանտ.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի Հասցէն՝

M^{me} S. AGOPIAN, 5, rue des Gobelins, 5. Paris (13^e)